



ապրիլ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ
JUSTICE

2026

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2026
N 2 (63)

Գիտական հանդես
Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը

պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 557660

Ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardaradatutyunjournal.com

Հրատարակված է 15.04.2026թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված է ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Սրբուհի Գալյան ՀՀ Արդարադատության նախարար, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դասախոս:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

- Աշոտ Հայրապետյան** ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դեցեմտ, գլխավոր խմբագիր:
- Արմեն Հարությունյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
- Աշոտ Խաչատրյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
- Արմեն Եսայան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
- Ստեփան Ծաղիկյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ:
- Սերգեյ Առաքելյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ղեկավար:
- Ռուզաննա Հակոբյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար:
- Ժորա Ջհանգիրյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Գլաձոր» համալսարանի ղեկավար:
- Ռուբեն Ավագյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Մանց» համալսարանի ղեկավար:
- Արփինե Հովհաննիսյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս:
- Աշխեն Սողոմոնյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ:
- Ռաֆիկ Գրիգորյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, «Միզմա լո գրուպ» փաստաբանական գրասենյակի կառավարող գործընկեր:
- Գևորգ Բաղդասարյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու:
- Տիգրան Մարկոսյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամ:
- Մուշեղ Բաբայան** Իրավաբանական գիտությունների թեկնածու:

www.ardadatutyunjurnal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Անի Մուրաֆյան	Իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ:
Օտարերկրյա անդամներ	
Հայկ Կուպեյանց	Իրավաբանական գիտությունների թեկնածու, Լոնդոնի թագավորական քոլեջի դասախոս:
Անդրեյ Սկիբա	Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր:
Եվգենի Բարաշ	Ուկրաինայի ներքին գործերի ազգային ակադեմիայի քրեակատարողական ծառայության ինստիտուտի պետ, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ:
Հենրիկ Լինդերբորգ	Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր:
Նիկիտա Իվանով	Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
Սերգեյ Չերնյավսկի	Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
Վադիմ Վինոգրադով	Բարձրագույն տնտեսագիտական դպրոցի իրավունքի ֆակուլտետի դեկան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 5 **ԳԱԳԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**
Իրավահասկացության հիմնական հայեցակարգերի համեմատական վերլուծություն
- 12 **ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ**
Դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման սահմանափակումները
- 24 **ԷԼԻՆԱ ԳԵՂԱՄՅԱՆ**
«Դատարանի ընկերոջ» ինստիտուտը՝ վարչական դատավարությունում
հանրային շահի պաշտպանության համատեքստում
- 34 **ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**
Արդար դատաքննության իրավունքի ձևավորման և զարգացման էվոլյուցիան.
պատմաիրավական հետազոտություն
- 51 **ԲԱՐԵՂԱՄ ԱՏԵՓԱՆՅԱՆ**
Տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական
պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրները
- 71 **ՆԱԻՐԱ ՀԱՐՈՅԱՆ**
Հոգեթերապևտիկ աշխատանքի առանձնահատկությունները ԶԿՀ-ում
- 76 **ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ**
Հոգևորականի դերը քրեակատարողական հիմնարկում

ԳԱԳԻԿ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

«Երևանի «Հայրուսակ» Համալսարան» Իրավագիտության
և միջազգային հարաբերությունների ինստիտուտի՝
Մասնավոր և հանրային ամբիոնի դասախոս,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԻՐԱՎԱՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՍԵՍԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Սույն գիտական հոդվածում հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել իրավահասկացման հիմնական հայեցակարգերին առնչվող հիմնախնդիրները՝ իրավունքի էության, օրենք-իրավունք հարաբերակցության և իրավունքի արժեքային չափանիշների տեսանկյունից: Հոդվածում քննարկվել են արդի իրավահասկացման երեք հիմնարար մոտեցումներ՝ ա) բնական-իրավական հայեցակարգը, որը իրավունքի հիմքում դնում է վերօրենքային արժեքներն ու մարդու անօտարելի իրավունքները, բ) իրավաբանական պոզիտիվիզմը, որը իրավունքը կապում է պետության կողմից սահմանված պարտադիր նորմերի հետ, գ) լիբերտար-իրավաբանական մոտեցումը (Վ.Ս. Ներսեսյանց), ըստ որի իրավունքի էությունը դրսևորվում է ձևական հավասարության, ազատության և արդարության համընդհանուր նորմատիվ ձևում: Վերլուծության ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել այն հարցին, թե ինչ սահմաններում կարող է պոզիտիվ օրենքը դիտարկվել որպես իրավական, և ինչ պայմաններում՝ որպես «ոչ իրավական օրենք», ինչպես նաև գնահատվել են բնական-իրավական և լիբերտար-իրավաբանական մոտեցումների տեսական ու գործնական հնարավորությունները՝ հատկապես մարդու իրավունքների, իրավական պետության և հակատոտալիտար իրավաբաղաբական դիրքորոշումների համատեքստում: Քննական-համեմատական դիտարկման արդյունքում ցույց է տրվել, որ յուրաքանչյուր հայեցակարգ ունի իր կիրառական ներուժն ու սահմանափակումները, իսկ դրանց համադրական ուսումնասիրությունը նպաստում է իրավունքի մասին առավել ամբողջական և հիմնավորված պատկերացման ձևավորմանը:

Հիմնաբառեր- իրավունք, իրավահասկացություն, հայեցակարգ, իրավահամեմատական վերլուծություն, իրավաբանական պոզիտիվիզմ, բնական-իրավական, ազատական-իրավական հայեցակարգ:

Ներածություն

Իրավահասկացման բազմաթիվ և բազմազան հայեցակարգերի առկայությունը օբյեկտիվորեն ենթադրում է նաև դրանց համակողմանի իրավաբանական վերլուծությունը: Իրավունքը՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորման առանձնահատուկ նորմատիվ համակարգ, մինևույն ժամանակ հանդես է գալիս նաև որպես արժեքային կողմնորոշիչ, ինչի հետևանքով այն տարբեր տեսական ուղղությունների կողմից մեկնաբանվում է տարբեր ելակետերից և տարբեր չափանիշներով: Հետևաբար իրավահասկացման հայեցակարգերի ուսումնասիրությունն ունի ոչ միայն ընդհանուր ճանաչողական նշանակություն, այլև մեթոդաբանական դեր՝ իրավական իրականությունը գնահատելու, իրավական երևույթները տարբերակելու և իրավակիրառ պրակտիկայի տրամաբանությունը հասկանալու համար:

Իրավահասկացման հայեցակարգերի խորքային իրավահամեմատական վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս հետազոտողին նախ՝ առանձնացնել դրանց ընդհանուր բաղադրիչները (օրինակ՝ իրավունքի աղբյուրի հար-

ցադրումը, օրենք-իրավունք հարաբերակցության ըմբռնումը, արդարության չափանիշը, իրավունքի պարտադիր ուժի հիմնավորումը), այնուհետև՝ բացահայտել յուրաքանչյուր հայեցակարգի առանձնահատկությունները, սահմանները և ներքին տրամաբանությունը: Այդ վերլուծությունը թույլ է տալիս նաև տեսնել, թե տվյալ մոտեցումը ինչպիսի պատկերացում ունի իրավունքի էության վերաբերյալ և ինչպիսի գործնական հետևանքներ կարող է ունենալ իրավական նորմերի ստեղծման, մեկնաբանման ու կիրառման գործընթացում:

Իրավահամեմատական վերլուծության աշխատանքն ունի ոչ միայն տեսական-ճանաչողական նշանակություն, այլև կոնկրետ գործնական կիրառական հնչեղություն: Իրավական պետության կառուցման, մարդու իրավունքների պաշտպանության, արդարադատության և սահմանադրական վերահսկողության արդյունավետության խնդիրներում իրավահասկացման ելակետային պատկերացումները հաճախ որոշիչ են դառնում՝ թե՛ «իրավական» և «ոչ իրավական» օրենքների տարբերակման, թե՛ իրավունքի արժեքային նշանակության գնահատման տեսանկյունից: Այս հա-

www.aradadutyjournal.com

մատքստում հողվածի նպատակը արդի իրավահասկացման հիմնական հայեցակարգերի համեմատական քննությունն է՝ դրանց ուժեղ և թույլ կողմերի արժևորմամբ, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի վրա դրանց ազդեցության սահմանների պարզաբանմամբ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Սույն հողվածի մեթոդաբանական հիմքը տեսական-իրավական հետազոտությանը բնորոշ համալիրն է, որի առանցքը համեմատական-իրավական (իրավահամեմատական) վերլուծությունն է՝ ուղղված արդի իրավահասկացման հիմնական հայեցակարգերի (բնական-իրավական, իրավաբանական պոզիտիվիստական, լիբերտար-իրավաբանական) համակարգային տարբերակմանը և գնահատմանը: Հետազոտության ընթացքում կիրառվում է ղոգմատիկ (ֆորմալ-իրավական) մեթոդ՝ հիմնական կատեգորիաների հասկացության պարզաբանման և դրանց ներքին տրամաբանական կառուցվածքի հաստատման համար, ինչպես նաև սիստեմային-կառուցվածքային վերլուծություն՝ յուրաքանչյուր հայեցակարգի բաղադրիչների և փոխկապակցվածության բացահայտման նպատակով: Պատմա-իրավական մոտեցմամբ դիտարկվում են բնական իրավունքի XX դարի հետպատերազմյան վերակենդանացումը և Ռ-ադրբուխյան քննադատությունը՝ համապատասխան սոցիալ-քաղաքական համատեքստում, իսկ աքսիոլոգիական (արժեքաբանական) վերլուծությամբ գործարկվում են իրավունքի արժեքային չափորոշիչներ՝ արդարություն, մարդու իրավունքներ, արժանապատվություն, իրավական պետություն՝ «օրինական ոչ իրավունք» խնդրի գնահատման համար: Տեքստում առկա են դիալեկտիկական դիտարկումներ՝ «բնական/արհեստական» հակադրության պատմական փոփոխականությունն ու կառուցվածքային պահպանվածությունը ներկայացնելու համար, ինչպես նաև տրամաբանական դատողությունների համադրում՝ ընդհանուր սահմանումներից դեպի մասնավոր հետևանքներ (դեդուկցիա) և պատմական փորձից դեպի ընդհանուր քննադատական եզրահանգումներ (ինդուկցիա) անցման միջոցով: Այդ մեթոդների համակցումը թույլ է տալիս ապահովել հայեցակարգերի ոչ միայն նկարագրական ներկայացում, այլև դրանց քնննական գնահատում՝ իրավունքի տեսության և իրավակիրառ պրակտիկայի փոխազդեցության համատեքստում:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

Իրավունքի ոլորտում «բնականի» ու «արհեստականի» տարանջատման իր ակունքներով արխայիկ բնական-իրավական սկզբունքի կենսունակության ու տարբեր դարաշրջաններին ու իրավիճակներին հարմարվելու պատճառը վերջնական

հաշվով կայանում է նրանում, որ այդ հակադրությունը (իսկ դրա հետ միասին «բնականի» ու «արհեստականի» դիալեկտիկական) ներքուստ հատուկ է մարդկության ձևավորման ու զարգացման ողջ ընթացքին: Ու թեև այդ հակադրությունների բովանդակությունը և կոնֆիգուրացիան (ինչպես նաև այն, թե ինչն է համարվում «բնական» կամ «արհեստական» այս կամ այն դարաշրջանում, այս կամ այն սոցիումում) կրում են սոցիալ-պատմական փոփոխություններ, այդուհանդերձ բուն հակադրությունը (որպես փաստ ու սկզբունք) մնում է՝

Այսպիսով, «բնականի» ու «արհեստականի» հարաբերակցության բնական-իրավական և իրական պատմական ձևերի միջև գոյություն ունի զգալի համապատասխանություն, և կարելի է ասել նաև որոշակի իզոմորֆիզմ, քանի որ «բնականի» ու «արհեստականի» հակադրման (հարաբերակցության) բնական-իրավական սկզբունքը շոշափում է մարդկության և քաղաքակրթության գոյի հակասական էությունը՝ յուրովի արտահայտելով մարդկության զարգացման էական հակասություններից մեկը: Դրանով է, ի միջի այլոց, պայմանավորված այն զգալի ավանդը, որը բնական-իրավական միտքը (աշխարհում մարդկային գոյության, մարդկության նշանակության ու ճակատագրի գլոբալ համատեքստում՝ իրավունքի և հիմնահարցերի իրեն բնորոշող ձևով) ներդրել է ոչ միայն իրավագիտության, այլև սոցիալական փիլիսոփայության ու պատմության փիլիսոփայության կայացման ու զարգացման գործին:

XX դարում բնական իրավունքի «վերածնունդը» ու նորացումը ցուցադրեցին բնական-իրավական մոտեցման կենսունակության ներուժը:

Բնական իրավունքի այդպիսի նորացման կարևոր ուղղություններից մեկն է դարձել (սոցիալ-քաղաքական և գաղափարա-աշխարհահայեցողական իմաստով) բնական-իրավական գաղափարների արժեքների հակատոտալիստական վերահիմաստավորումն ու վերամեկնումը, ինչը զգալիորեն նպաստեց բնական իրավունքի հետպատերազմյա «վերածննդին»: Բնական իրավունքի ներկայացուցիչների առաջատար դերը տոտալիտարիզմի և տոտալիստական օրենսդրության քննադատության գործում, այս հակատոտալիստական (զգալի չափով՝ ազատական-ժողովրդավարական) դիրքերից մարդու բնական ու անօտարելի իրավունքների և ազատությունների, իրավունքի արժեքի, անձի արժանապատվության, իրավական պետության հիմնահարցերի մշակումը զգալիորեն բարձրացրին բնական-իրավական գաղափարախոսության վարկանիշը հետպատերազմյան Եվրոպայի հասարակական կարծիքում և ամրապնդեցին նրա տեսական դիրքերը և գործնական ազդեցությունը քաղաքական ու իրավական կյանքի շատ ոլորտներում (սահմանադրական ու ընթացիկ

օրենսդրություն, իրավակիրառման գործընթաց, արդարադատություն և այլն):

«Վերակենդանացած» բնական իրավունքին ընդհանուր առմամբ բնորոշ է զգալի շրջադարձ դեպի իրավական պրակտիկայի իրական ու կոնկրետ առումներին, ինչը վկայում է իրականության այժմեական խնդիրների նկատմամբ բնական-իրավական մտքի զգացողության և իր պատասխաններն ու լուծումները առաջարկելու ունակության մասին, որոնցում ավանդական կողմնորոշումը դեպի փորձարկված արժեքները ճկուն կերպով գուցողվում է նորագույն հովերի, սպասումների ու միտումների, ժամանակի ոգու հետ:

Այս առումով նեոկանտիանացի Ռ. Շտամմլեյերի կողմից ձևակերպված «փոփոխվող բովանդակությամբ բնական իրավունքի» հայեցակարգը համարյա հանճարեղորեն համահունչ էր բնական-իրավական մտքի երկակի ավանդապաշտական նորոգողական (պաշտպանիչ-քննական, արխայիկ-մոդեռնիստական, պաշտպանողական-առաջադիմական) կողմնորոշմանը՝ զարգացման՝ որպես այս անցողիկ ու հարափոփոխ աշխարհում հավերժի ու անփոփոխի ակտուալացման շարունակական գործընթաց (և մարդկային կոչման ու պարտքի) իր խորքային պատկերացումներով:

«Փոփոխվող բովանդակությամբ բնական իրավունքի» հայեցակարգը (անմիջականորեն և հետագա զանազան տարբերակներով) նպաստեց բնական-իրավական մոտեցման մեթոդաբանական, իմացաբանական ու ընդհանուր տեսական նորացմանը XX դարում և հատկապես դրա երկրորդ կեսին:

Բնական-իրավական գաղափարների ետպատերազմյա «վերածննդի»՝ գործում զգալի ավանդ ունեցավ նաև մեկ այլ գերմանական իրավագետ Գ. Ռադերուխը: Իրավունքը (օրենքից տարանջատ և նրա հետ հարաբերակցության մեջ) Ռադերուխի մոտ ներկայացված է «իրավունքի գաղափարը», «վերօրենքային իրավունք» հասկացություններով, այլ ոչ թե «բնական իրավունք» հասկացությամբ, ինչպես մյուս կանտիականների մոտ: Այնուամենայնիվ, իրավաբանական պոզիտիվիզմի փիլիսոփայական-իրավական քննադատությունը և իրավագիտության մեջ իրավունքի գաղափարը և «վերօրենքային իրավունքի» վերականգնման համար կոչերը էականապես նպաստեցին Արևմտյան Եվրոպայում բնական իրավունքի հետպատերազմյա զարգացմանը:

Այս իմաստով հատուկ դեր խաղաց Գ. Ռադերուխի «օրինական ոչ օրենք և վերօրինական իրավունք» գիրքը (1946), որը լայն բանավեճ հարուցեց Գերմանիայում և մի շարք այլ երկրներում՝ նպաստելով իրավաբանական պոզիտիվիզմի այն ժամանակվա բոլոր հակառակորդների ջանքերի միաբանմանը և զգալիորեն խրախուսեց բնական-իրավական

վական հետազոտումների աշխուժացմանը:

Իրավաբանական պոզիտիվիզմը, գրում է Ռադերուխը իր այդ աշխատության մեջ, պատասխանատու է իրավունքի այլասերման համար նացիոնալ-սոցիալիստների օրոք, քանի որ այն «օրենքը օրենք էե իր համոզմամբ «զինաթափեց գերմանացի իրավաբաններին կամային և հանցագործ բովանդակությամբ օրենքների առջև»³: Իրավաբանական պոզիտիվիզմի կողմից իշխանության ընկալումը որպես իրավունքի իրականության կենտրոնական չափանիշ նշանակում է իրավաբանների պատրաստակամությունը՝ կուրորեն ենթարկվելու իշխանության օրենսդրորեն ձևակերպված ցանկացած սահմանմանը: Այսպիսով, իրավական գիտությունը անձնատուր եղավ ցանկացած, այդ թվում նաև տոտալիտար իշխանության փաստականության առջև:

Նման մոտեցմանը Ռադերուխը հակադրեց արդարության՝ որպես իրավունքի գաղափարի ու իրավունքների հասկացության էության բովանդակային տարրի, նեոկանտիական մեկնությունը: Ընդ որում, Ռադերուխի մոտ խոսքը գնում էր արդարության ոչ թե նյութական, այլ ձևական սկզբունքի մասին, որի իմաստը նա բացատրում է հավասարության սկզբունքի միջոցով: «Քանի որ,– գրում է Ռադերուխը,– արդարությունը ցուցում է, որ մենք գործենք հենց այդպես՝ «հավասարը՝ հավասար, իսկ անհավասարը՝ անհավասար», սակայն ոչինչ չի ասում մեզ այն տեսակետի մասին, ըստ որի այն պետք է բնորոշել որպես հավասար կամ անհավասար. այն բնորոշում է միայն վերաբերմունքը, բայց ոչ վարվեցողության ձևը»⁴:

Ռադերուխի իրավահասկացության հիմքում ընկած արդարության և հավասարության մասն ընկալումը պայմանավորում է նրա մոտեցման մեջ «օրինական ոչ իրավունքից» իրավունքի տարբերությունը: «Սահմանումը, որին հատուկ չէ կամքն առ այն, որպեսզի վարվեն այսպես՝ «հավասարը՝ հավասար, անհավասարը՝ անհավասարե, կարող է լինել պոզիտիվ, կարող է լինել նպատակահարմար և նույնիսկ անհրաժեշտ և այդ պատճառով էլ օրինակորեն ճանաչված, սակայն մենք պետք է մերժենք դա իրավունք ճանաչել, քանի որ իրավունքը միայն այն է, ինչը առնվազն նպատակաուղղված է ծառայել արդարությանը»⁵:

Պոզիտիվ իրավունքը, որը չի համապատասխանում արդարությանը, իրական իրավունք չի հանդիսանում, այդ իսկ պատճառով, համարում է Ռադերուխը, չպետք է դրան հնազանդվել. «Եթե օրենքները գիտակցաբար մերժում են կամքը դեպի արդարություն,– գրում է նա,– օրինակ՝ կամայականորեն հրաժարվում են մարդու իրավունքների երաշխիքներից, սպա այդ օրենքները գործողություն չունեն, ժողովուրդը պարտավոր չէ ենթարկվել դրանց, իսկ իրավաբանները պետք է քաջություն

ունենան մերժելու դրանց իրավական բնույթը»⁶:

«Իրավունքի նորացման» և իրավաբանական գիտության վերածննդի համար, ընդգծում է Ռադերուխը, անհրաժեշտ է վերադառնալ «վերօրինական» («վերօրենսդրական») իրավունքին: «Իրավաբանական գիտությունը,- գրում է նա «Իրավունքի նորացում» գրքում,- պետք է նորից հիշի անտիկ դարաշրջանի, քրիստոնեական միջնադարի և լուսավորության դարաշրջանի հազարամյա իմաստությունը այն մասին, որ կա ավելի բարձր իրավունք, քան օրենքն է: Դա բնական իրավունքն է, աստվածային իրավունքը, բնական իրավունքը, մի խոսքով, «վերօրինական» իրավունքը, համաձայն որի ոչ իրավունքը մնում է ոչ իրավունք, նույնիսկ եթե այն ձուլվեք օրենքի տեսքով»:

«Վերօրինական իրավունքի» այս գաղափարը, որպես իրավաբանական պոզիտիվիզմի մերժում, շատերի համար համագոր էր բնական իրավունքի ճանաչման և անմիջականորեն նպաստեց դրա «վերածննդի» կողմնակիցների շրջանակի ընդլայնմանը:

Բնական-իրավական մոտեցման թերությունների հետևողական հաղթահարումը (իրավաբանական արքիոլոգիայի բնագավառում նույնպես, ինչպես իրավաբանական իմացաբանության և գոյաբանության մեջ) հանգեցնում է ոչ թե պոզիտիվիզմի և լեգիզմի, այլ իրավաբանական իրավահասկացման տեսականորեն ավելի զարգացած ձևի, իրավունքի հասկացության, օրենքի արժեքային իրավական նշանակության ու պետության համապատասխան մեկնաբանության:

Այս կապակցությամբ բուն իրավաբանական (հակալեգիստական) տեսակի իրավահասկացման շրջանակներում մենք առանձնացնում ենք երկու տարբեր մոտեցումներ: Առաջինը բնական-իրավական մոտեցումն է, որը ելնում է պոզիտիվ իրավունքին հակադրվող բնական իրավունքի ճանաչումից («պոզիտիվ իրավունք» տերմինը առաջացել է միջնադարյան իրավագիտության մեջ): Երկրորդը իրավահասկացման ընդհանուր տեսության մեջ զարգացվող լիբերտար-իրավաբանական (ազատական-իրավաբանական) մոտեցումն է, որը ելնում է իրավունքի և օրենքի (պոզիտիվ իրավունքի) տարբերակման սկզբունքից և իրավունքի տակ (օրենքից տարբերակված և նրա հետ հարաբերակցությամբ) նկատի ունի ոչ թե բնական իրավունքը, այլ ձևական հավասարությունը (որպես իրավունքի էության և տարբերակիչ սկզբունքի) գոյությունը և նորմատիվային արտահայտությունը (կոնկրետացումը): Այդ հայեցակարգի հեղինակն է ակադ. Վ.Ս. Ներսեսյանցը: Ընդ որում, ձևական հավասարության սկզբունքը մեկնվում ու բացատրվում է որպես իրավական ձև (իրավունքի՝ որպես հարաբերությունների ձև) երեք հիմնական բաղադրիչների ամ-

բողջականություն: Դրանք են արստրակտ համընդհանուր հավասարությունը (բոլորի համար հավասար նորմ և չափ), ազատությունը և արդարությունը: Որպես ձևական հավասարության սկզբունքի բաղադրիչ պահեր (և այդ, ի թիվս այլոց, նաև հարաբերությունների իրավական ձևերի բաղադրիչներ) այս եռամիության բոլոր տարրերը (հավասար չափը, ազատությունը, արդարությունը) ազատական-իրավաբանական իրավահասկացման շրջանակներում կրում են զուտ, մաքուր և հետևողականորեն ձևական բնույթ, քանի որ իրավունքը, որպես հարաբերությունների ձև, չպետք է շփոթել այդ հարաբերությունների փաստացի բովանդակության հետ: Նշված տարրերը ոչ միայն փոխարացնում են մեկը մյուսին, այլև ենթադրում են իրար, քանի որ հանդիսանում են միասնական իրավական սկզբի՝ ձևական հավասարության սկզբունքի (իսկ դրա հետ մեկտեղ նաև հարաբերությունների իրավական ձևի) տարբեր դրսևորումներ (դրսևորման տարբեր առումներ ու ձևեր): Իրավունքի վերաբերյալ նման ձևական-իրավաբանական մոտեցումը, որը հետևողականորեն անջատում է իրավական ձևը (իրավունքը՝ որպես ձև) այդ ձևով միջնորդայնացված փաստական (էմպիրիկ) բովանդակությունից, հանդիսանում է լիբերտար (լիբերտար-իրավաբանական), քանզի իրավունքը (իսկ դրա հետ նաև պետությունը) այստեղ հասկացվում ու մեկնաբանվում են ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձև:

Որպես իրավահասկացման տարբեր ձևեր, բնական-իրավական մոտեցումը և լիբերտար մոտեցումը, համաձայն մեր մեկնության, իրենցից ներկայացնում են իրավունքի հանդեպ տեսական մոտեցման առաջացման, խորացման ու զարգացման փուլեր ու աստիճաններ, պատմական առաջընթաց՝ տեսական իրավական մտքի բնագավառում:

Լիբերտար մոտեցումը ենթադրում է նաև (և ներառում է) իրավունքի ու օրենքի տարբերակման և հարաբերակցության բոլոր հնարավոր ձևերը՝ անջատումից ու նրանց միջև հակամարտությունից (ոչ իրավական օրենքի դեպքում) մինչև դրանց համընկնում (իրավական օրենքի դեպքում): Նույն տրամաբանությունն է գործում նաև իրավունքի ու պետության վերաբերյալ, ընդ որում լիբերտար-իրավաբանական տեսակետից պետությունը մեկնվում է իր իրավական ու հակաիրավական դրսևորումների ողջ դիապագոնում (իրավախախտ պետությունից մինչև իրավական պետություն):

Համաձայն լիբերտար - իրավաբանական (ձևական-իրավաբանական) իրավահասկացման հայեցակարգի՝ իրավունքը հավասարության, ազատության ու արդարության հարաբերությունների ձև է՝ բնորոշված հարաբերությունների տվյալ ձևի մասնակիցների ձևական հավասարության

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

սկզբունքով: Ամենուր, որտեղ կա, գործում է ձևական հավասարության սկզբունքը (և դրան կոնկրետացնող նորմերը), այնտեղ կա (գործում է) իրավունքը՝ հարաբերությունների իրավական ձևը: Չևական հավասարությունը՝ որպես իրավունքի սկզբունք, կազմում է բուն իրավական սկիզբը և հանդիսանում է իրավունքի տարբերակիչ հատկություն և սպեցիֆիկ հատկանիշ: Ըստ այդ տեսության՝ իրավունքում չկա ոչինչ, բացի ձևական հավասարության սկզբունքից (և այդ սկզբունքի կոնկրետացումներից):

Հավասարությունը իրենից ներկայացնում է որոշակի արստրակցիա, այսինքն՝ հանդիսանում է գիտակցական (մտածողական) վերացարկյան արդյունք այն բոլոր տարբերություններից, որոնք բնորոշ են հավասարեցվող օբյեկտներին: Հավասարեցումը ենթադրում է հավասարեցվող օբյեկտների տարբերությունները և միաժամանակ այդ տարբերությունների աննշանությունը (այսինքն՝ այդ տարբերություններից վերացարկյան հնարավորություն և անհրաժեշտություն)՝ հավասարեցման համապատասխան հիմքի (չափանիշի) տեսակետից:

Այսպես՝ տարբեր օբյեկտների հավասարեցումը՝ ըստ դրանց թվային հիմքի (դրանց քանակը, քաշը և այլն որոշելու համար), վերացարկվում է դրանց բովանդակային զանազան տարբերություններից (անհատական, սեռային, տեսակային և այլն): Այս հունով է ձևավորվել մաթեմատիկան, որտեղ հավասարումների կազմումն ու լուծումը առանցքային դեր է խաղում և որտեղ հավասարությունը, «մաքրագրված» որակական տարբերություններից, հասցված է քանակական բնորոշումների արստրակցիայի:

Իրավական հավասարությունը այնքան արստրակտ չէ, որքան թվային հավասարությունը մաթեմատիկայում: Տարբեր մարդկանց իրավական հավասարության հիմք և չափանիշ է հասարակական հարաբերություններում նրա ազատությունը՝ ճանաչված և հաստատված իրավունակության և իրավասուբյեկտության տեսքով: Դրանում է կայանում իրավական հավասարության և ընդհանրապես իրավունքի առանձնահատկությունները:

Ազատության մեջ իրավական հավասարությունը՝ որպես ազատության հավասար չափ, նշանակում է համաչափություն, համարժեքություն՝ իրավունքի սուբյեկտ հանդիսացող ազատ անհատների հարաբերություններում:

Իրավական հավասարությունը՝ ազատ և իրարից անկախ իրավունքի սուբյեկտների հավասարություն է՝ ըստ բոլորի համար ընդհանուր մասշտաբի միասնական նորմի, հավասար չափի: Իսկ այնտեղ, ուր մարդիկ բաժանված են ազատների ու անազատների, վերջիններս դասվում են իրավուն-

քի ոչ թե սուբյեկտների, այլ օբյեկտների շարքին, և իրավական հավասարության սկզբունքը նրանց վրա չի տարածվում:

Իրավական հավասարությունը ազատների հավասարություն է և ազատության հավասարություն, անհատների ազատության ընդհանուր մասշտաբ և հավասար չափ: Իրավունքը խոսում և գործում է այդ հավասարության լեզվով և միջոցներով և շնորհիվ դրա հանդես է գալիս որպես մարդկանց համատեղ կյանքի ազատության գոյի, դրսևորման և իրականացման համընդհանուր և անհրաժեշտ ձև. Այս իմաստով կարելի է ասել, որ իրավունքը ազատության մաթեմատիկան է¹⁰:

Սոցիալական ոլորտում հավասարությունը միշտ իրավական հավասարություն է, ձևական-իրավական հավասարություն: Չէ՞ որ իրավական հավասարությունը, ինչպես ցանկացած հավասարություն, վերացարկված է (ըստ սեփական հիմքի ու չափանիշի) փաստական տարբերություններից, այդ իսկ պատճառով անհրաժեշտաբար և ըստ բնորոշման կրում է ձևական բնույթ:

Հավասարության վերաբերյալ գոյություն ունեն բազում թյուրըմբռնումներ, սխալական պատկերացումներ: Վերջին հաշվով դրանց հիմքում ընկած է չհասկանալը այն բանի, որ հավասարությունն ունի ռացիոնալ իմաստ, որ այն տրամաբանորեն ու գործնականորեն սոցիալական աշխարհում հենց որպես և միայն իրավական (ձևական-իրավական, ձևական) հավասարություն է:

Այսպես՝ հավասարությունը հաճախ (ինչպես անցյալում, այնպես էլ այսօր) շփոթվում է տարբեր տեսակի էգալիտարական (իսկ փաստորեն՝ հավասարիչ) պահանջների, համահարթեցման և այլնի հետ: Կամ էլ, ընդհակառակը, նրան հակադրում են այսպես կոչված «փաստացի հավասարությունը»: Նման խառնաշփոթը, այսպես թե այնպես, բայց միշտ կրում է հակաիրավական բնույթ: Չէ որ «փաստացի հավասարությունը» ռացիոնալ բնույթ ունի միմիայն որպես բացառում (այսինքն՝ որպես ձևական իրավական հավասարության բացառում), իսկ որպես պնդում (որպես ինչ-ինչ պոզիտիվ բան) այդ «փաստացի հավասարությունը» իռացիոնալ մեծություն է և ենթադրում է բոլորովին այլ բան, քան հավասարությունը:

«Փաստացի հավասարությունը» դա «փաստական» և «ոչ փաստական» (ձևական) հասկացությունների խառնուրդ է և «հավասարություն» բուն հասկացության հակասություն: Որպես հասկացություն, որպես կարգավորիչ սկզբունք, չափման մասշտաբ, հարաբերությունների ձև և տեսակ՝ «հավասարությունը» իմաստ ունի միայն «փաստականի» և «ձևականի» տարբերակման համատեքստում ու միայն որպես ինչ-ինչ «ձևական» բան՝ անջատված (վերացարկված) ինչ-ինչ «փաստական» բանից, ինչպես բառերն են անջատ նրանցով

www.aradadatuynjournal.com

նշվող իրերից, թվերը՝ նրանցով համընթաց առարկաներից, կշեռքը՝ կշռվող զանգվածից և այլն: Շնորհիվ հենց այդ իր ձևականության («փաստականից» վերացարկվածության)՝ հավասարությունը կարող է դառնալ և իրապես դառնում է «փաստականի կարգավորման եղանակ, միջոց, սկզբունք, յուրատեսակ ձևական և ձևականացված լեզու», «հաշիվ», «կշեռք», արտաձևական (այսինքն՝ փաստական) իրականության չափիչ: Նույնկերպ և ձևական-իրավական հավասարությունը:

Ինչպես նշում է ակադ. Վ.Ս. Ներսեսյանցը՝ «Իրավունքի պատմությունը՝ դա ձևական (իրավական) հավասարության բովանդակության ծավալի, մասշտաբի ու չափի առաջադիմող էվոլյուցիայի պատմություն է՝ բուն այդ սկզբունքի պահպանումով՝ որպես իրավունքի ցանկացած համակարգի, ընդհանրապես՝ իրավունքի սկզբունքի»¹: Մարդկանց հարաբերություններում ազատության և իրավունքի պատմական զարգացման տարբեր փուլերին բնորոշ է ազատության սեփական մասշտաբ և սեփական չափ, ազատության ու իրավունքի հարաբերությունների և սուբյեկտների սեփական շրջանակ, մի խոսքով՝ ձևական (իրավական) հավասարության սկզբունքը իրենից ներկայացնում է իրավունքին մշտապես բնորոշ սկզբունք՝ պատմականորեն փոխվող բովանդակությամբ:

Ձևական հավասարության սկզբունքի բովանդակության ծավալի, գործողության ոլորտի պատմական էվոլյուցիան ընդհանուր առմամբ ոչ թե հերքում, այլ ընդհակառակը՝ ամրապնդում է տվյալ սկզբունքի (և դրան կոնկրետացնող նորմերի հա-

մակարգի) նշանակությունը՝ որպես իրավունքի տարբերակիչ հատկանիշի՝ սոցիալական կարգավորման (բարոյական, կրոնական և այլն) այլ տեսակների հետ հարաբերակցություններում և տարակարծություններում: Հաշվի առնելով այս ամենը՝ կարելի է ասել, որ իրավունքը՝ արդարության, հավասարության և ազատության արտահայտման նորմատիվ ձև է հասարակական հարաբերություններում:

Եզրակացություն

Իրավահասկացման հիմնական հայեցակարգերի քննական-համեմատական վերլուծության արդյունքներից հետևում է, որ գոյություն չունի մեկ միասնական հայեցակարգային մոտեցում, որը ունակ է համակողմանի և խորությամբ բացահայտել իրավունքի էությունը և բովանդակային առանձնահատկությունները:

Իրավահասկացման յուրաքանչյուր հայեցակարգ իր տեսանկյունից բացահայտում է իրավունքի որևէ հատկանիշ կամ հատկանիշները և այդպես շարունակ: Յուրաքանչյուր հայեցակարգ լրացնում, շտկում, խմբագրում կամ նույնիսկ մերժում է իրենից առաջ արտահայտված մոտեցումները: Հետևաբար, իրավահասկացման հայեցակարգերի բազմազանությունը օգնում է առավել համակողմանի և խորը պատկերացում կազմել իրավունքի վերաբերյալ:

¹ Տե՛ս Теория государства и права.Под.ред. В.К. Бабаева. М., 1991, С. 20-21.
² Տե՛ս Бернацкий Г.Г. Естественное право и религия.СПб., 1999.
³ Տե՛ս Radbruch G. Gezetliches Unrecht und ubergesetzliches Rects (1946) Rechtsphilosophie. Heidelberg, 1983. էջ 352.
⁴ Տե՛ս Zit. Nach Lut’fi Verantwortlichkeit des Rechtpositivitanus fiz “gesetzliches Unrecht Nisonalsozialismus und Recht. Wien.1990, S.22.
⁵ Տե՛ս նույն տեղը:
⁶ Տե՛ս Radbruch G. Rechtsphilosophie. էջ 336
⁷ Տե՛ս Zit. Nach: Luf G. Verantwonlichkeit des Rechtpestitivitous fur “gesetzliches Unrecht” , էջ 25
⁸ Տե՛ս Нерсесянц В.С. Философия права.М., 2001.
⁹ Տե՛ս Нерсесянц В.С. Право и закон. М., 1983:
¹⁰ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Нерсесянц В.С. Право математика свободы.М., 1996.
¹¹ Տե՛ս Нерсесянц В.С. Философия права.М., 2001. С. 39-40.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. В.К. Бабаева. М., Теория государства и права.Под.ред. 1991, С. 20-21.
2. Бернацкий Г.Г. Естественное право и религия.СПб., 1999.
3. Radbruch G. Gezetliches Unrecht und ubergesetzliches Rects (1946) Rechtsphilosophie. Heidelberg, 1983. չջ 352.
4. Zit. Nach Lut’fi Verantwortlichkeit des Rechtpositivitanus fiz “gesetzliches Unrecht Nisonalsozialismus und Recht. Wien.1990, S.22.

www.ardadatutyunjurnal.com

5. Radbruch G. Rechtsphilosophie. չջ 336
6. Zit. Nach: Luf G. Verantwortlichkeit des Rechtpestivitous fur “gesetzliches Unrecht” չջ 25
7. Нерсесянц В.С. Философия права.М., 2001.
8. Нерсесянц В.С. Право и закон. М., 1983:
9. Нерсесянц В.С. Право математика свободы.М., 1996.
10. Нерсесянц В.С. Философия права.М., 2001. С. 39-40.

Гагик Амбарцумян

Ереванский университет “Айбусак”
Институт права и международных отношений,
преподаватель кафедры частного и публичного права,
соискатель Института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Сравнительный анализ основных концепций правопонимания

В данной научной статье автор осуществляет всесторонний анализ ключевых проблем, связанных с основными концепциями правопонимания, с точки зрения сущности права, соотношения закона и права, а также ценностных критериев права. В статье рассматриваются три базовые концепции современного правопонимания: а) естественно-правовая концепция, исходящая из приоритета надзаконных ценностей и неотчуждаемых прав человека; б) юридический позитивизм, связывающий право с обязательными нормами, установленными государством; в) либертарно-юридическая концепция (В. С. Нерсесянц), согласно которой сущность права проявляется в универсальной нормативной форме формального равенства, свободы и справедливости. В ходе анализа особое внимание уделено вопросу о пределах, в которых позитивный закон может быть признан правовым, и условиях, при которых он квалифицируется как “неправовой закон”, а также дана оценка теоретическим и практическим возможностям естественно-правового и либертарно-юридического подходов, прежде всего в контексте прав человека, правового государства и антитоталитарных правополитических установок. В результате критико-сравнительного рассмотрения показано, что каждая концепция обладает собственным прикладным потенциалом и ограничениями, а их сопоставительное изучение способствует формированию более целостного и обоснованного представления о праве.

Ключевые слова: право, правопонимание, концепция, сравнительно-правовой анализ, юридический позитивизм, естественно-правовая концепция, либерально-правовая концепция.

Gagik Hambarcumyan

Yerevan “Haybusak” University
Institute of Law and International Relations,
Lecturer at the Department of Private and Public Law,
Applicant (Researcher) at the Institute of Philosophy, Sociology and Law, NAS RA

SUMMARY

Comparative analysis of the basic concepts of legal understanding

In this scholarly article, the author provides a comprehensive analysis of the key issues related to the principal concepts of legal understanding, focusing on the essence of law, the relationship between law and statute, and the axiological (value-based) criteria of law. The article examines three fundamental approaches in contemporary legal thought: (a) the natural-law concept, which places at the core of law supra-legal values and inalienable human rights; (b) legal positivism, which links law to binding norms established by the state; and (c) the libertarian legal concept (V. S. Nersesyants), according to which the essence of law is expressed in the universal normative form of formal equality, freedom, and justice. Particular attention is devoted to determining the limits within which a positive statute may be regarded as legal and the conditions under which it qualifies as an “unlawful law”, as well as to assessing the theoretical and practical potential of the natural-law and libertarian-legal approaches, especially in the context of human rights, the rule-of-law state, and anti-totalitarian legal-political positions. The critical comparative analysis demonstrates that each concept has its own practical potential and limitations, and that their comparative study contributes to a more comprehensive and well-grounded understanding of law.

Key words: law, legal understanding, concept, comparative legal analysis, legal positivism, natural-law concept, liberal-legal concept.

Բնագիրը ներկայացվել է 02.03.2026թ.

Ընդունվել է տպագրության 30.03.26թ.

ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Սույն գիտական հոդվածում հանգամանորեն քննարկվում են դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման սահմանափակումները: Վճռի կատարման շրջադարձի հարցին դատարանն անդրադառնում է այն դեպքում, երբ բեկանված գործի նոր քննության արդյունքում կայացվում է՝ հայցը մերժելու մասին դատական ակտ կամ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին որոշում, որից հետո պարտապանը կամ այլ շահագրգիռ անձ իրավունք է ձեռք բերում վերականգնել նախկին դրությունը: Սակայն, օրենսդրական կարգավորումների և պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում են, որ հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ որոշակի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներից ելնելով առաջանա դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման սահմանափակում կամ անհնարինություն: Հեղինակը սույն աշխատանքում նկարագրել է պրակտիկայում ծագող հնարավոր իրավիճակները, ինչպես նաև շրջադարձի իրականացման սահմանափակման կամ անհնարինության դեպքում՝ անձի իրավունքների պաշտպանության այլ եղանակները:

Հիմնաբառեր – վճռի կատարման շրջադարձ, դատական ակտի կատարման շրջադարձ, դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման սահմանափակում, դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման անհնարինություն:

Ներածություն

Դատարանի՝ ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի նպատակը ոչ իրավաչափ արդարադատության հետևանքների վերացումն է:

Վճռի կատարման շրջադարձի հարցին դատարանն անդրադառնում է այն դեպքում, երբ դատական ակտի բեկանման արդյունքում կայացվում է՝ հայցը մերժելու մասին դատական ակտ կամ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին որոշում, որից հետո պարտապանը կամ այլ շահագրգիռ անձ իրավունք է ձեռք բերում վերականգնել նախկին դրությունը: Ընդ որում՝ հարկ է ընդգծել, որ ինչպես դատական ակտի կատարման իրավունքն է «դատարան դիմելու իրավունքի» բաղկացուցիչ մասը, արդար դատաքննության իրավունքի տարրն, այնպես էլ դատական ակտի կատարման շրջադարձի իրականացումը՝ լինելով նոր կայացված դատական ակտի կատարման եղանակ ևս հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի տարր: Նման մոտեցումը հիմնավորվում է Եվրոպական դատարանի որոշումներում հայտնաբերված դիրքորոշմամբ:

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիրքորոշումը, որ Պայմանավորվող պետությունները ոչ միայն պետք է ամրագրեն քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, այլև կոնկրետ գործով պետք է ապահովեն անձի կողմից այդ իրավունքի իրականացման իրական հնարավորությունը²: Եվրոպական դատարանը փաստել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը պաշտպա-

նում է վերջնական, պարտադիր դատական որոշումների կատարումը: Յանկացած դատարանի կողմից կայացված որոշումների կատարման իրավունքը «դատարան դիմելու իրավունքի» բաղկացուցիչ մասն է, հակառակ պարագայում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կդառնա իմաստագուրկ⁴:

Հետևաբար՝ անձը, որի օգտին կայացվել է օրինական ուժի մեջ է մտնել դատական ակտ, ունի դատական ակտի կատարման իրավունք, որը արդար դատաքննության իրավունքի տարր է: Մյուս կողմից՝ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել բողոքարկել նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտն, ինչի արդյունքում հնարավոր է այդ ակտը բեկանվի և կայացվի նոր դատական ակտ՝ հայցը մերժելու, վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին: Կատարված դատական ակտի բեկանման և հայցի մերժման կամ վարույթը կարճելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշման կայացման դեպքում արդեն իսկ առաջանում է նոր դատական ակտի կատարման ապահովման անհրաժեշտություն: Այս անգամ արդեն կատարման իրավունք ծագում է պատասխանողի (պարտապանի) կամ այլ շահագրգիռ անձի համար, ում իրավունքները խախտվել են օրինական ուժի մեջ մտած և կատարված դատական ակտով: Այդ անձի՝ դատական ակտի կատարում պահանջելու իրավունքի իրացման հետևանքը ենթադրում է դատական ակտի կատարման շրջադարձի իրականացում, որի արդյունքում իրացվում են դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներ-

www.aradaradutyjournal.com

որ:

Օրենսդրական կարգավորումների և պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում են, որ հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ որոշակի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով առաջանա դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման սահմանափակում կամ անհնարիություն:

Հետևաբար՝ հատուկ ուշադրության են արժանի ինչպես դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման սահմանափակման կամ անհնարիության դեպքերը, այնպես էլ պարտապանի կամ այլ շահագրգիռ անձի իրավունքի պաշտպանության եղանակների վերլուծությունը՝ դատական ակտի կատարման շրջադարձի բացառման կամ սահմանափակման դեպքերում:

Հետազոտության մեթոդաբանությունը

Սույն հետազոտությունն իրականացնելիս կիրառվել է դոկտրինալ և համեմատական-իրավական մեթոդները: Աշխատանքում վերլուծվել են այն հնարավոր իրավիճակները, երբ առաջանում է դատական ակտի կատարման շրջադարձի անհնարիություն կամ սահմանափակում, ուսումնասիրվել են գործող օրենսդրական կարգավորումները և դատական պրակտիկան: Դատական պրակտիկայի, օրենսդրական կարգավորումների և մասնագիտական գրականության մեջ արտահայտված գիտական վերլուծությունների համադրման արդյունքում՝ առաջարկվել են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխություններ:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

Ընդհանուր կանոնի համաձայն՝ վճռի կատարման շրջադարձ իրականացնելիս վերացվում է ի կատար ածված դատական ակտի իրավական հետևանքները՝ վերականգնելով այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը և գործի հանգամանքներով պայմանավորված՝ շահագրգիռ կողմի խախտված նախկին իրավունքներն ու պարտականությունները:

«Կատարողական վարույթի մասին» օրենքի (ուժի մեջ է մտել 01.01.2026 թվականին) 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Եթե լրիվ կամ մասնակի ի կատար ածված դատական ակտը բեկանվել է, և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու, գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին նոր դատական ակտ (այսուհետ սույն հոդվածում՝ նոր դատական ակտ), ապա նոր դատական ակտով գույքը համապատասխանաբար լրիվ կամ մասնակի վերադարձվում է պարտապանին կամ շահագրգիռ այլ անձին (այսուհետ սույն հոդվածում երկուսը միասին՝ շահագրգիռ անձ), կամ շահագրգիռ անձի օգ-

տին բռնագանձվում են դրամական միջոցներ: Եթե անհնար է գույքը շահագրգիռ անձին վերադարձնել բնեղենով, ապա նրա օգտին դատական ակտով ենթակա են բռնագանձման համարժեք դրամական միջոցներ:»:

Մինչ նշված օրենքի ընդունումը գործել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքը, որի կարգավորումը տարբերվում էր: Օրենսդրական կարգավորման համաձայն՝ շրջադարձի ժամանակ կայացվում է դատական ակտ՝ գույքը պարտապանին լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան: Նշված երկու կարգավորումների միջև էական տարբերությունն այն է, որ նոր օրենքը նախատեսում է գույքի բնեղենով վերադարձնելու անհնարիության դեպքում համարժեք դրամական միջոցներով փոխհատուցման հնարավորություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում:

Իրավաբանական գրականության մեջ կատարման շրջադարձի ինստիտուտը համարվում է քաղաքացիական իրավունքների դատավարական պաշտպանության ձև: Իրավունքի պաշտպանության այս միջոցի արդյունքը իրենից ներկայացնում է ռեստիտուցիայի մի տեսակ, որի դեպքում վեճի կողմին վերադարձվում է այն ամենը, ինչ նրանից ստացվել է արդեն բեկանված դատական ակտի կատարման արդյունքում: Դ. Դերնովան նշում է, որ «In integrum restituire»-ը նշանակում է «վերականգնել սկզբնական վիճակը», այսինքն՝ բոլորը պետք է կրկին ունենան իրենց իրավունքները, որոնք ունեցել են խախտումից առաջ: Տվյալ դեպքում իրավունքի խախտումը տեղի է ունեցել դատական ակտով, որը հետագայում բեկանվել է:

Ընդ որում՝ գույք կամ իրավունք ձեռք բերելու պահին անձը գործել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա, որը մինչև բեկանումը համարվում է օրինական և պարտադիր կատարման ենթակա ակտ: Պատասխանողի իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը ծագում է միայն այն ժամանակ, երբ դատական ակտը բե-

կանվում է և նոր դատական ակտով հայրը մերժվում է, վարույթը կարճվում է կամ հայր թողնվում է առանց քննության:

Քաղաքացիական իրավունքում «In integrum restituire»-ի («վերականգնում դեպի սկզբնական վիճակը») կամ ռեստիտուցիայի մասին խոսք է գնում միայն գործարքի անվավերության հետևանքները քննարկելիս: Երկկողմանի կամ միակողմանի ռեստիտուցիան կիրառվում է որպես անվավերության հետևանք: Սակայն դատական ակտի կատարման շրջադարձի դեպքում ևս կիրառելի է նշված ինստիտուտը: Ռեստիտուցիան նշանակում է անօրինական կամ չհիմնավորված գործողության հետևանքով առաջացած վիճակի վերականգնում: Ռեստիտուցիան պարտավորություն է, ըստ որի՝ յուրաքանչյուր կողմ պետք է վերադարձնի այն, ինչ ստացել է մյուս կողմից՝ անօրինական կամ անվավեր հիմքով: Ռեստիտուցիայի իրականացման նպատակն է վերացնել խախտման հետևանքները, վերականգնել արդարությունը, թույլ չտալ անարդար հարստացում: Այնպես, ինչպես անվավեր գործարքը չի կարող հետևանքներ առաջացնել, այդպես էլ բեկանված դատական ակտը երբեք չպետք է իրավական հետևանքներ առաջացնի, իսկ եթե առաջացրել է ապա պետք է այն վերացնել: Դատական ակտի հիման վրա, որպես կանոն, որոշակի նյութական կամ ոչ նյութական բարիք ձեռք է բերում հայցվորը, ուստի՝ շրջադարձը, որպես կանոն, միակողմանի ռեստիտուցիա է: Ընդ որում՝ պետք է հաշվի առնել կարևոր դիտարկում. ռեստիտուցիան նույնական չէ վնասի հատուցմանը, ռեստիտուցիայի նպատակը վերականգնումն է, ոչ թե պատիժը կամ լրացուցիչ փոխհատուցումը: Այսինքն՝ ռեստիտուցիայի արդյունքում պետք է վերադարձվի գույքը, որը ստացվել է: Սակայն, երբ խոսք է գնում կողմի կրած վնասների մասին, ապա պետք է հաշվի առնել, որ վնաս պատճառված լինելու հարցը չի կարող քննարկվել դատական ակտի կատարման շրջադարձի վարույթում: Անձը վնաս կարող է պահանջել առանձին վարույթի շրջանակում. օրինակ՝ վնասի հատուցման պահանջ, անհիմն հարստացման արդյունքում ստացվածի վերադարձման պահանջ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, սակայն, անհրաժեշտ է ընդգծել, որ լինում են իրավիճակներ, երբ ռեստիտուցիայի, նույն ինքը՝ դատական ակտի կատարման շրջադարձի իրականացումը անհնարին է կամ կարող է սահմանափակվել:

Դատական պրակտիկայի և տեսական գրականության ուսումնասիրությունը վկայում է, որ դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման անհնարինություն կամ որոշակի սահմանափակում կարող է ծագել հետևյալ դեպքերում.

1. Կատարված դատական ակտի հիման վրա ստացածը հնարավոր չէ վերականգնել, քանի որ.

ա. վերադարձման ենթակա գույքը, մտավոր սեփականության օբյեկտները ֆիզիկապես դադարել է գոյություն ունենալ,

բ. վերադարձման ենթակա գույքի ֆիզիկական ամբողջականությունը նվազել է,

գ. վերադարձման ենթակա գույքի վրա կատարվել են բաժանելի բարելավումներ,

դ. վերադարձման ենթակա գույքի վրա կատարվել են անբաժանելի բարելավումներ:

ե. դատական ակտի հիման վրա ծառայությունները արդեն իսկ մատուցված են, աշխատանքները կատարված են, տեղեկատվությունը տրամադրված է,

2. Իրավաբանորեն անհնար է վերադարձնել կատարված դատական ակտի հիման վրա ստացածը, քանի որ.

ա. խախտվում են այլ անձանց իրավունքները և օրինական շահերը,

բ. խախտվում է հանրային շահը:

Հարկ ենք համարում դատական պրակտիկայի վկայակոչմամբ քննարկել նշված իրավիճակները:

Մինչև 01.01.2026 թվականը գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով շրջադարձի իրականացման դեպքում նախատեսվում էր միայն գույքի բեռեղնով վերադարձ և գույքի արժեքի փոխհատուցման հնարավորությունը բացակայում էր: Արդյունքում ստացվում էր, որ գույքի բացակայության դեպքում դատական ակտի կատարման շրջադարձ չէր կատարվում: Այս տրամաբանությամբ է ընթացել նաև դատական պրակտիկան: Այսինքն՝ մինչև նոր օրենքի ուժի մեջ մտնելը պարտապանին կամ այլ շահագրգիռ անձին վերադարձման ենթակա գույքի բացակայությունը առաջացնում էր դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման անհնարինություն:

Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով 07.10.2022 թվականի որոշմամբ անդրադարձ կատարեց նաև դատական ակտի կատարման շրջադարձի հարցին այն դեպքում, երբ դատական ակտի հիման վրա հայցվորի կողմից ձեռքբերված գույքը այլևս նրան չի պատկանում, քանի որ գործարքի հիման վրա ծագել է այլ անձի իրավունք: Մասնավորապես՝ օրինական ուժի մեջ մտած և կատարված վճռի հիման վրա երկու անշարժ գույքերի նկատմամբ գրանցվել էր հայցվորի սեփականության իրավունքը, ով հետագայում իր գույքերից մեկը օտարել էր այլ անձի, իսկ վերջինս էլ երրորդ անձին: Հետագայում վճռի բեկնաման և հայցի մերժման պարագայում՝ անշարժ գույքերի նախկին սեփականատեր հանդիսացող պատասխանողը դիմել է դատարան՝ խնդրելով կատարել վճռի շրջադարձ և վերականգնել իր սեփականության իրավունքը անշարժ գույքերի

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նկատմամբ: Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները կատարել էին վճռի շրջադարձ՝ վերականգնելով Պատասխանողի սեփականության իրավունքը՝ առանց անդադառնալու այն հարցադրմանը, թե արդյոք հնարավոր է շրջադարձի կատարումը, եթե վճռի անմիջական հետևանքն այլևս «չկա»:

Վճռաբեկ դատարանը հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելիս դրա գործողության տիրույթում պետք է լինի բացառապես այն իրավունքների չեղարկումը, որոնք սահմանվել են բեկանված վճռով /դատական ակտով/: Այս համատեքստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա չէ դատական ակտ, որով վերացել են նոտարական կարգով կնքված և պետական գրանցում ստացած գործարքները և դրանց հիման վրա կատարված պետական գրանցումները՝ տվյալ դեպքում սեփականության և գրավի իրավունքները, ապա վճռի կատարման շրջադարձի դիմումի քննությամբ դրանք չեն կարող անվավեր ճանաչվել և այդ կերպ վերականգնվել քաղաքացիական գործով պատասխանողի խախտված իրավունքները, քանի որ վճռի շրջադարձի դիմումով ենթակա են վերացման բացառապես տվյալ դատական ակտով սահմանված քաղաքացիական իրավունքները:»:

Վճռաբեկ դատարանի նշված որոշումից բխում է, որ դատական ակտի կատարման շրջադարձի վարույթի արդյունքում պետք է վերացվի դատական ակտի անմիջական հետևանքը և շրջադարձը պետք է բացասական հետևանք առաջացնի միայն այն անձի համար, ով ձեռք է բերել գույք կամ իրավունք բեկանված դատական ակտի հիման վրա: Դատական ակտի շրջադարձը երբևէ չի կարող բացասական հետևանքներ առաջացնել այլ անձանց համար:

Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանի որոշման ընդունման պահին գործող օրենքին համապատասխան՝ վճռի կատարման շրջադարձը բացառվում էր նկարագրված դեպքում:

Վերը նշված քաղաքացիական գործի օրինակում հայցվորի՝ դատական ակտի հիման վրա ծագած իրավունքը դադարել էր գործարքի հիման վրա: Գործարքի արդյունքում ծագել է այլ անձի իրավունք, հետևաբար՝ այդ իրավունքը կարող է դադարել միայն գործարքի վիճարկման արդյունքում:

Վճռաբեկ դատարանի նշված որոշման մեջ որևէ դիտարկում չկա այն մասին, թե, բացի գործարքի անվավերության պահանջով դատարան դիմելու հնարավորությունից, շահագրգիռ անձն ինչպես կարող է իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը: Չէ՞ որ ապացուցման ենթակա

չէ այն փաստը, որ այն դատական ակտը, որի հիման վրա ծագել է անձի իրավունքը բեկանվել է և հետևաբար՝ մյուս կողմի իրավունքը խախտվել է:

Խախտված իրավունքների վերականգնման միջոց կարող էր լինել արդեն իսկ օտարված գույքի արժեքի հատուցումը: Այս կարգավորումը մինչև «Կատարողական վարույթի մասին» օրենքի ընդունումը առկա էր միայն գործարքի անվավերության վերաբերյալ Քաղաքացիական օրենսգրքի դրույթներում և կիրառվել է դատական պրակտիկայում: Նոր օրենսդրական կարգավորման լույսի ներքո՝ գտնում ենք, որ գույքի բացակայության դեպքում առաջանում է դատական ակտի կատարման շրջադարձի սահմանափակում, բայց ոչ անհնարինություն, քանի որ անձը կարող է պահանջել գույքի արժեքի փոխհատուցում:

«Կատարողական վարույթի մասին» օրենքի 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե անհնար է գույքը շահագրգիռ անձին վերադարձնել բնեղենով, ապա նրա օգտին դատական ակտով ենթակա են բռնագանձման համարժեք դրամական միջոցներ:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը մի շարք դեպքերում վճռել է, որ այն վճռով, որով Դատարանը հայտնաբերել է խախտում, պատասխանող պետության վրա դրվում է խախտումը դադարեցնելու և դրա հետևանքների համար հատուցելու պարտավորություն այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչև խախտումը գոյություն ունեցած իրավիճակը: Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի գործով 15.02.2012 թվականի վճռում անդրադառնալով Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա արդարացի փոխատուցման հարցին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. «Սիևնույն ժամանակ, քանի որ օտարված բնակարանը ոչնչացվել էր և այլևս գոյություն չուներ, հնարավոր չէ ճշգրտորեն հաշվարկել դիմումատուների մասնաբաժնի արժեքը: (...) Հետևաբար նյութական վնասի գնահատումը պետք է իրականացվի արդարացիության սկզբունքի հիման վրա: (...) Դատարանը, հաշվի առնելով իր նախադեպային իրավունքում հաստատված համապատասխան սկզբունքները, կարծում է, որ առավել պատշաճ և արդարացի լուծումը կլինեք դիմումատուներին տվյալ ժամանակահատվածում բնակարանի իրենց բաժնեմասի հավանական արժեքը շնորհելը՝ փոխարկված ներկայիս արժեքով՝ արժեգրկման հետևանքները հաշվանցելու համար:»:

Վերոգրյալից բխում է, որ Եվրոպական դատարանը գույքի բնեղենով վերադարձման անհնարինության դեպքում կիրառում է արդարացի փոխհատուցման սկզբունքը՝ ընդգծելով, որ անձանց իրավունքի լիարժեք վերականգնումը հնարավոր է միայն այդ տարբերակով:

www.aradaradutyjournal.com

www.aradaradutyjournal.com

Գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինությունյան դեպքում դրամական միջոցներով հատուցման հարցի քննարկման նպատակով անհրաժեշտ ենք համարում համեմատական անցկացնել գործարքի անվավերության հետևանքների հետ: Թիվ ԼԴ-1/1286/02/19 քաղաքացիական գործով 04.04.2025 թվականին կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գործարքի անվավերության հետևանքների կիրառման առանձնահատկություններին: Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ առոչինչ գործարքի կնքման փաստի հետ օրենքը կապում է բացառապես ռեստիտուցիոն բնույթի պարտավորությունների ծագում, որոնք կարող են կապված լինել ինչպես տվյալ գործարքի կնքման և կատարման փաստական հետևանքները վերացնելու՝ գործարքով կողմերից յուրաքանչյուրի ստացածը մյուս կողմին վերադարձնելու, նման գործարքի կնքմամբ պատճառված վնասն օրենքով նախատեսված դեպքերում ու չափով հատուցելու հետ, այնպես էլ այդ գործարքից անմիջականորեն բխող իրավական հետևանքները՝ դրա հիման վրա կատարված սեփականության կամ այլ իրավական տիտղոսի փոփոխությունը վերացնելու, նախկին իրավական վիճակը վերականգնելու հետ: Այլ կերպ ասած՝ դատարանի կողմից առոչինչ գործարքի կնքման փաստը հաստատված համարելու դեպքում պետք է կիրառվի նման գործարքներից բխող ոչ միայն փաստական հետևանքները վերացնելու, այլ նաև իրավական հետևանքներն անվավեր ճանաչելու կառուցակարգը՝ ապահովելով մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնումը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել, որ անվավեր գործարքի արդյունքում ձեռք բերված գույքի վերադարձին վերաբերող առանձնահատկությունները կարող են ունենալ հետևյալ դրսևորումները՝

- ա. երբ վերադարձման ենթակա գույքը պահպանել է իր ֆիզիկական ամբողջականությունը,
- բ. երբ վերադարձման ենթակա գույքի ֆիզիկական ամբողջականությունը պահպանված չէ:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ եթե առաջին դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի կիրառումը որևէ բարդություն առաջ չի բերում, և յուրաքանչյուր կողմ բնեղենով վերադարձնում է գործարքով ձեռք բերվածը, ապա այն բոլոր դեպքերում, երբ վերադարձման ենթակա գույքը չի պահպանել իր ֆիզիկական ամբողջականությունը, կարող են ի հայտ գալ հետևյալ իրավիճակները.

1. վերադարձման ենթակա գույքը ֆիզիկապես դադարել է գոյություն ունենալ,
2. վերադարձման ենթակա գույքի ֆիզիկական ամբողջականությունը նվազել է,
3. վերադարձման ենթակա գույքի վրա կատարվել են բաժանելի բարելավումներ,

4. վերադարձման ենթակա գույքի վրա կատարվել են անբաժանելի բարելավումներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ երբ հնարավոր չէ բնեղենով վերադարձնել գործարքով ձեռք բերվածը, ապա պետք է տրվի դրա դրամական փոխհատուցումը: ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ նույն կանոնը ենթակա է կիրառման այն դեպքում, երբ գույքի ֆիզիկական ամբողջականությունը նվազում է: Նման դեպքում գույքի այն հատվածի փոխարեն, որը բնեղենով վերադարձնելն անհնար է, պետք է տրվի դրա դրամական հատուցումը:

Նշված դիրքորոշման համատեքստում՝ գտնում ենք, որ դատական ակտի կատարման շրջադարձի հարցը քննարկելիս վերադարձման ենթակա գույքի բացակայության (ամբողջականությունը նվազելու) կամ այն այլ անձի սեփականությանը անցնելու դեպքում պետք է քննարկվի գույքի արժեքի արդարացի փոխահատուցման հարցը:

Կարևոր է ընդգծել, որ, պնդելով այն դիրքորոշումը, որ նոր դատական ակտ կայացնող դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ անդրադառնալ դատական ակտի կատարման շրջադարձի հարցին՝ գտնում ենք, որ գույքի դիմաց փոխահատուցման պահանջ կարող է ներկայացնել բացառապես շահագրգիռ անձը՝ կամ դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման վարույթի հարուցման նպատակով դիմում ներկայացնելով, կամ նոր քննություն իրականացնող դատարանին նման միջնորդություն ներկայացնելով: Դատարանը սեփական նախաձեռնությամբ չի կարող անդրադառնալ գույքի արժեքի որոշմանը և փոխհատուցման չափի սահմանմանը: Եթե գույքը առկա չլինի, դատարանը չի կատարի դատական ակտի շրջադարձ իր նախաձեռնությամբ, իսկ նման պահանջով առանձին վարույթ նախաձեռնված լինելու դեպքում՝ Դատարանը կմերժի դատական ակտի կատարման շրջադարձի իրականացումը, եթե փոխատուցման պահանջը ևս առկա չլինի:

Վերոգրյալի համատեքստում՝ հարկ է ընդգծել, որ դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման անհնարինություն չի առաջանա այն դեպքում, երբ շահագրգիռ անձին վերադարձման ենթակա գույքն այլևս հայցվորին չի պատկանում կամ գույքը բացակայում է, սակայն ներկայացված է նաև դրամական փոխհատուցման պահանջ: Ընդ որում՝ գույքի բնեղենով վերադարձնելու անհնարինությունը և փոխհատուցման չափը պետք է հիմնավորի շահագրգիռ անձը՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ապացույցների ներկայացմամբ: Ելնելով նրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքներից՝ Դատարանը իրավունք չունի սե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

փական նախաձեռնությամբ նման ապացույցներ ձեռք բերել, այդ թվում՝ փորձաքննություն նշանակել:

Նույն տրամաբանությունը կգործի նաև այն դեպքում, երբ մտավոր սեփականության օբյեկտը այլևս չլինի կամ բացառիկ իրավունքները փոխանցված լինեն հայցվորից այլ անձի:

Գտնում ենք, որ համարժեք, արդարացի հատուցման հարց կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ պատասխանողը դատական ակտով ստացել է ծառայություն, աշխատանք կամ տեղեկատվություն: Ակնհայտ է, որ երբ դատական ակտի հիման վրա պատասխանողն ստանում է ծառայություն, աշխատանք կամ տեղեկատվություն և դատական ակտը կատարվում է, ապա դատական ակտի շրջադարձի հարցը քննարկելիս միանշանակ պետք է արձանագրվի, որ պատասխանողի կողմից դատական ակտի հիման վրա ստացածը վերադարձնելն անհնար է: Սակայն այստեղ ևս առաջ է գալիս ծառայության, տեղեկատվության կամ աշխատանքի համարժեք փոխհատուցման հնարավորությունը: Ընդ որում՝ կարծում ենք, արդարացի փոխհատուցումն այս դեպքում ենթադրում է այն արժեքը, որը սովորաբար վճարվում է տվյալ պատասխանողին նման աշխատանքներ կատարելու, ծառայություններ մատուցելու, տեղեկատվություն տրամադրելու համար, իսկ նման արժեք սահմանված չլինելու դեպքում շուկայում նման աշխատանքներին և ծառայություններին, տեղեկատվությանը վճարվող միջին արժեքով, որպեսզի ապահովվի վճարման ողջամտությունը:

Հնարավոր են նաև իրավիճակներ, երբ վերադարձման ենթակա գույքի վրա կատարվեն բաժանելի կամ անբաժանելի բարելավումներ: Բաժանելի բարելավման դեպքում, կարծում ենք վճռի հիման վրա ստացված գույքը պետք է վերադարձվի, իսկ անբաժանելի բարելավումների դեպքում հնարավոր է առաջանա արժեքի հատուցման հարց: Նախևառաջ հարկ է նշել, որ գույքի վրա կատարված բարելավումների մասին դատարանին կարող է հայտնել միայն այն կողմը, ում օգտին կայացրած դատական ակտը կատարվելուց հետո բեկանվել է: Այս տեղեկատվությունը հնարավոր է չունենա պատասխանողը, իսկ դատարանն էլ ինքնուրույն ձեռք բերել չի կարող: Հետևաբար՝ կողմը շրջադարձի վարույթի ընթացքում պետք է հիմնավորի իր կողմից կատարված բարելավումը և դրա արժեքը: Ընդ որում՝ հարկ է նշել, որ մինչև դատական ակտի բեկանումը անձը ողջամիտ ակնկալիք է ունեցել, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա իրեն որևէ հիմքով տրամադրված գույքի վրա կատարում է բարելավում, հետևաբար՝ դատական ակտի բեկանման դեպքում անձն ակնկալում է իր կատարած ծախսի վերադարձ, ինչը ևս դատական ակտի կատարման շրջադարձի մաս է կազ-

մում: Այսպիսի դեպքերը վկայում են, որ դատական ակտի կատարման շրջադարձն ուղղված է ոչ միայն պատասխանողի իրավունքների պաշտպանությանը, այլ հայցվորի իրավունքի պաշտպանությանը, քանի որ միտված է մինչև դատական ակտի կատարումը եղած դրության վերականգնմանը: Կարծում ենք, քննարկվող դեպքում Դատարանի պարզման ենթակա հարցը պետք է ներառի գույքի արժեքը և կատարված բարելավումների արժեքը: Եթե կատարված բարելավումների արժեքը ավելի փոքր է, քան գույքի արժեքը, ապա շրջադարձի դեպքում գույքը կվերադարձվի պատասխանողին, սակայն պատասխանողից էլ պետք է գանձվի բարելավումների արժեքը: Բարելավումներ՝ բարձր արժեք ունենալու դեպքում՝ Պատասխանողին պետք է հատուցվի իր գույքի արժեքը:

Հնարավոր են նաև իրավիճակներ, որոնք առաջին հայացքից կարող են վկայել շրջադարձի անհնարինության մասին, սակայն ստորև կհիմնավորվի հակառակը:

Անհրաժեշտություն է առաջանում քննարկել այն հարցը, թե արդյո՞ք առաջանում է վճռի կատարման շրջադարձի անհնարինություն, երբ չկա անձը հօգուտ, որի պետք է կատարվի շրջադարձ կամ այն անձը, ում բեկանված ակտի հիման վրա տրամադրվել է գույք կամ գույքային իրավունք:

Իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ կատարված և բեկանված դատական ակտի առկայության պայմաններում գույքային պահանջներով առաջին ատյանի դատարանում գործի նոր քննության ժամանակ պատասխանողը մահանում է: Քաղաքացիական դատավարության օրենսգրքին համապատասխան գործի վարույթը պետք է կասեցվի մինչև իրավահաջորդության հարցի լուծումը: Գործի քննությունը կշարունակվի, եթե իրավահաջորդ լինի, իսկ իրավահաջորդի բացակայության դեպքում, ակնհայտ է, որ վարույթի կասեցումից հետո ինչ-որ փուլում պետք է այն վերսկսվի և գործի վարույթը կարճվի, քանի որ պատասխանող չկա, իսկ վիճելի իրավահարաբերությունը լայն առումով այլևս բացառում է իրավահաջորդությունը: Օրենքի համաձայն՝ գործի նոր քննության ժամանակ վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու դեպքում ևս պետք է կատարվի վճռի շրջադարձ: Կարծում ենք նման իրավիճակը չպետք է դիտարկվի որպես դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման անհնարինություն: Պնդելով այն դիրքորոշումը, որ շրջադարձի հարցը լուծելիս դատարանը կարող է նաև ինքնուրույն որոշակի փաստեր պարզել և ապացույցներ ձեռք բերել, ինչպես նաև կրկին ընդգծելով, որ բեկանված դատական ակտի հիման վրա ծագած իրավունքը չի կարող պահպանվել՝ գտնում ենք, որ գործին մասնակցող անձի մահվան և իրավահաջորդության բացառման դեպքում գործի վարույթը

www.ardaradutyjournal.com

կարճելու հիմք առաջանալիս Դատարանը դարձյալ պետք է կատարի շրջադարձի հարցի լուծմանն ուղղված գործողություններ և, շրջադարձի կատարման անհնարինության այլ պատճառներ չլինելու դեպքում, գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելիս լուծի նաև շրջադարձի հարցը: Դատական ակտի կատարման շրջադարձի հարցի լուծումը դատարանն ապահովվում է ելնելով ոչ թե մասնավոր՝ տվյալ դեպքում կողմերից մեկի շահից, այլ հանրային շահից, առ այն, որ Դատարանն է պարտավոր ապահովել անձի՝ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված հիմնական իրավունքների իրացման համար նախատեսված կառուցակարգերի պատշաճ կենսագործումը: Որևէ նշանակություն չունի շահագրգիռ անձը ողջ է, թե ոչ. Դատարանը վերացնում է ոչ իրավաչափ արդարադատության հետևանքը:

Մեկ կարևոր դիտարկում ևս կարծում ենք, որ կատարված դատական ակտի բեկանումից հետո հայցը մերժելու մասին վճռով կամ վարույթը կարճելու, հայցն առանց քննության թողնելու մասին որոշմամբ դատական ակտի կատարման շրջադարձի հարցը լուծված չլինելու, իսկ հետագայում պատասխանողի մահվան պարագայում իրավահաջորդ առկա լինելու դեպքում պատասխանողի իրավահաջորդն իրավունք ունի դիմել նոր դատական ակտ կայացրած դատարան՝ կատարման շրջադարձ իրականացնելու պահանջով: Նման մոտեցումը պայմանավորված է այն դիրքորոշմամբ, որ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է նաև այն անձանց, ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք: Այսպես. Սահմանադրական դատարանը, անդրադառնալով «օրինական ակնկալիքի» իրավական պաշտպանության հիմնախնդրին և շեշտադրելով սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությանը, ընդգծել է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք: ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով սեփականության իրավունքի վերաբերյալ տրված մեկնաբանություններին, արձանագրել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրությամբ սահմանված «գույք» հասկացությունն ավելի լայն է մեկնաբանվում, քան ներպետական օրենքներում: Մի շարք վճիռներում Եվրոպական դատարանը փաստել է, որ Կոնվենցիայով նախատեսված «գույք» հասկացությունը

ինքնավար մեկնաբանություն ունի, և ներառում է ոչ միայն նյութական աշխարհում գոյություն ունեցող որևէ առարկա, որը սեփականության իրավունքով պատկանում է անձին, այլ նաև՝ գույքային իրավունքը: Եվրոպական դատարանն իր վճիռներով փաստել է նաև, որ կան որոշակի հանգամանքներ, որոնց պարագայում անձինք կարող են ունենալ «օրինական ակնկալիք», հետևաբար նաև «գույք» Կոնվենցիայի տեսանկյունից :

Վերոգրյալի համատեքստում գտնում ենք, որ կատարված դատական ակտի բեկանումից հետո՝ հայցը մերժելու, գործի վարույթը կարճելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու պահին պատասխանողն ունեցել է դատական ակտի շրջադարձ պահանջելու կամ որ նույնն է իր գույքը կամ գույքային իրավունքը ետ վերադարձնելու պահանջի իրավունք: Անձն ունեցել է սեփականության իրավունքի վերականգնման պահանջի իրավունք, իրավունքի գրանցման իրավաչափ ակնկալիք, որն ստացել է «սեփականություն» որակում: Պատասխանողի այս իրավունքը համապարփակ իրավահաջորդության կարգով անցել է իրավահաջորդին: Պատասխանողի իրավահաջորդն օրինական ակնկալիք ունի, որ իր ժառանգական զանգվածում պետք է ներառված լինեն նաև բեկանված վճռով սահմանված գույքը կամ գույքային իրավունքը:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ դատական ակտի կատարման շրջադարձի հարցում կարող է շահագրգիռ համարվել ոչ միայն գործով պատասխանողը, այլև գործին մասնակցող այլ անձը, օրինակ՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը:

Գտնում ենք, որ բոլոր դեպքերում, երբ հայցի առարկան ենթադրում է գույքային հարաբերությունների՝ այսինքն՝ իրավունքի սուբյեկտների միջև նյութական բարիքների ստեղծման, ձեռքբերման, տիրապետման, օգտագործման, տնօրինման, կառավարման և փոխանցման կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերությունների առկայություն, որոնք ունեն ապրանքադրամային բնույթ՝ վճռի կատարման շրջադարձ հնարավոր է նույնիսկ այն դեպքում, երբ շահագրգիռ անձը մահացել է:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում վճռի կատարման շրջադարձի հարցը հայցվորի բացակայության դեպքում:

Իրավակիրառ պրակտիկայում բավականին տարածված է դատարանների կողմից գործի նոր քննության ժամանակ հայցվորի մահվան հանգամանքը որպես վճռի կատարման շրջադարձի իրականացման անհնարինություն դիտարկելը:

Քաղաքացիական դատավարության օրենսգիրքո ունի հետևյալ կարգավորումները.

Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեց-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նել գործի վարույթը, եթե՝ գործին մասնակցող անձը մահացել է, և վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն: Նույն օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով գործի վարույթը կասեցվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, հայցվորին (դիմողին) փոխարինելու վերաբերյալ միջնորդություն չներկայացվելու դեպքում դատարանը վերսկսում է գործի վարույթը և կայացնում հայցն առանց քննության թողնելու մասին որոշում:

Հայցվորին իրավահաջորդով փոխարինելու դեպքում իրավիճակը պարզ է և Դատարանը, որպես կանոն, պետք է հայցը մերժելու, գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում անդրադառնա դատական ակտի կատարման շրջադարձին՝ անկախ այն հանգամանքից գույքի կամ գույքային իրավունքի նկատմամբ գրանցվել է ժառանգի իրավունքը, թե ոչ:

Սակայն այլ է դեպքը, երբ բեկանված գործով հայցվորի մահվանից հետո որևէ անձ չի դիմում իրեն որպես իրավահաջորդ ներգրավվելու միջնորդությամբ: Նման դեպքում ստացվում է՝ չկա այն շահագրգիռ անձը, որը նախաձեռնել է վարույթը, սակայն տվյալ անձի օգտին կայացվել է դատական ակտ, որը հետագայում բեկանվել է:

Կարծում ենք Դատարանը, ելնելով արդար դատաքննության իրավունքի իրացման հարցում իր կատարած գործի դերակատարումից, պետք է հայցն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելիս քննության առարկա դարձնի վճռի կատարման շրջադարձի հարցը: Մասնավորապես՝ Դատարանը պետք է պարզի ժառանգության ընդունման հանգամանքը: Կարծում ենք՝ Դատարանը պետք է հնարավորություն ունենա պարզել, թե արդյոք հայցվորի մահից հետո ժառանգություն ընդունվել է նոտարին դիմում տալու կամ այլ եղանակով, ինչպես նաև պարզել՝ արդյոք գույքի նկատմամբ սեփականության իրավունքի նոր գրանցում եղել է, թե ոչ: Այս երկու լիազորությունները հնարավոր է իրացնել Նոտարական պալատին և ՀՀ Կադաստրի կոմիտեին համապատասխան հարցումներով դիմելով: Դատարանը բոլոր դեպքերում պետք է իրականացնի վճռի կատարման շրջադարձ բացառությամբ այն դեպքի, երբ առկա է սույն աշխատանքում քննարկված անհնարինության այլ դեպք:

Իրավակիրառ պրակտիկայում խնդրահարույց է նաև այն դեպքը, երբ հայցվորը մահանում է վճռի կատարման շրջադարձի դիմումի հիման վրա հարուցված վարույթի քննության ընթացքում:

Թիվ ԿԴ-1/0244/02/17 քաղաքացիական գործով կայացված վճռին համապատասխան՝ կատարվել էր հայցվորի սեփականության իրավունքի գրանցում: Դատական ակտի բեկանումից հետո

նոր քննության ժամանակ հայցվորը հրաժարվել էր հայցից, ինչի արդյունքում գործի վարույթը կարճվել էր, սակայն վճռի կատարման շրջադարձ չէր կատարվել: Վճռի կատարման շրջադարձի դիմում է ներկայացվել գործով ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի կողմից, սակայն դիմումի քննության ժամանակ՝ հայցվորը (պահանջատերը) մահացել է:

Քննարկելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով¹² սահմանված ընթացակարգը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ օրենքը Դատարանի համար սահմանում է պարտականություն վճռի կատարման շրջադարձի հարցը քննարկել դատական նիստի ընթացքում և դրա մասին ծանուցել պարտատիրոջն ու պարտապանին: Միևնույն ժամանակ նույն օրենքը սահմանում է, որ վերջիններիս բացակայությունը արգելք չէ նիստի իրականացման համար:

Օրենսդրի նպատակը հանգում է նրան, որ Դատարանը պարտավոր է ապահովել հենց պարտատիրոջ և պարտապանի ծանուցումը, քանի որ հենց նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ է կայացնելու որոշում: Դատարանը որոշում է կայացնելու միայն այն անձի վերաբերյալ, ում շնորհիվ է իրավունք այն ակտով, որը հետագայում բեկանվել է ու կայացվել է գործի վարույթը կարճելու մասին որոշում: Ընդ որում՝ հարկ է արձանագրել որ վճռի կատարման շրջադարձը նախատեսված չէ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով, այլ նախատեսված էր «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով, ինչը ենթադրում է, որ այն, քննվելով շահագրգիռ անձի դիմումի հիման վրա, դատական իմաստով չի հանդիսանում ոչ հայցային, ոչ հատուկ հայցային և ոչ էլ հատուկ վարույթ:

Գտնում ենք, որ շրջադարձի դիմում քննարկելիս չկա վիճելի իրավահարաբերություն և ըստ այդմ չի կարող քննարկվել իրավահաջորդության և վարույթի կասեցման հարց: Այս դեպքում միայն դատարանը կարող էր քննարկել հայցվորի իրավահաջորդներին (եթե առկա են) որպես շահագրգիռ անձ ներգրավելու հարցը:

Գտնում ենք, որ այս դեպքում գործի վարույթը չպետք է կասեցվի և պետք է իրականացվի վճռի կատարման շրջադարձ: Կարծում ենք՝ նման դիրքորոշումը բխում է վճռի կատարման շրջադարձի՝ որպես դատավարական հատուկ կառուցակարգի նպատակից և էությունից:

Ավելին՝ գտնում ենք, որ վարույթում հայցվորի իրավահաջորդի ներգրավվում նույնպես հիմք չէ շրջադարձի իրականացման մերժման համար: Ի տարբերություն այն դեպքերի, երբ հայցվորի իրավունքը գույքի նկատմամբ դադարում է որևէ գործարքի հիմքով և իրավունք է ծագում որևէ երրորդ անձի մոտ, հայցվորի մահվան դեպքում տեղի է ու-

նենում համապարփակ իրավահաջորդություն: Այս դեպքում ժառանգական զանգվածում ներառվում է գույք, որը սխալ դատական ակտի հիման վրա պատկանել է ժառանգատուին: Այդ գույքը չպետք է պատկաներ ժառանգատուին և ներառվեր ժառանգական զանգվածի մեջ: Դատական ակտի բեկանումից հետո ժառանգի մոտ չէր էլ կարող ծագել օրինական ակնկալիք նշված գույքը ձեռքբերելու հարցում:

Կարծում ենք, որ հայցվորի մահվան դեպքում գույքը կամ իրավունքը որպես ժառանգական գույք ժառանգին անցնելը և վերջինիս իրավունքի ծագումը չպետք է խոչընդոտ հանդիսանա վճռի կատարման շրջադարձի իրականացման համար: Նույն կերպ՝ իրավաբանական անձի վերակազմակերպման և գույքը իրավահաջորդության կարգով այլ իրավաբանական անձի փոխանցվելը ևս չպետք է դիտել որպես արգելք դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման համար:

Որպես կանոն, դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման իրավունքը միտված է մասնավոր շահի պաշտպանությանը, մյուս կողմից՝ Դատարանը իրականացնելով արդարադատության շահի պահպանության գործառույթ՝ դատական ակտի կատարման շրջադարձն իրականացնում է ելնելով հանրային շահի պաշտպանության անհրաժեշտությունից: Ստացվում է՝ հենց նույն հանրային շահով պայմանավորված Դատարանը կարող է սահմանափակել դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման իրավունքը: ՀՀ Սահմանադրության ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ անձի որոշ հիմնարար իրավունքներ կարող են սահմանափակվել հանրային շահից ելնելով: Օրինակ՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, Սահմանադրության 47-րդ հոդվածի (քաղաքացիության իրավունք) 7-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև 5-րդ մասի 2-րդ մասի սահմանափակումները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, ինչպես նաև այլ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Հանրային կամ հանրության շահն, ըստ էության, այն բարիքն է, որը վերաբերում է հասարակության մեծամասնությանը կամ ամբողջ հասարակությանը, ոչ թե առանձին անձի կամ փոքր խմբի: Այն դեպքում, երբ դատական ակտի կատարման շրջադարձի իրականացումը հանգեցնում է մասնավոր և հանրային շահերի բախման՝ միանշանակ է, որ գերակա պետք է լինի հանրային շահը: Օրինակ՝ դատական

ակտի կատարման շրջադարձի արդյունքում անհրաժեշտ է անձին վերադարձնել հողամաս, որի վրա առկա է հասարակությանը սպասարկող հիվանդանոց, դպրոց, ջրամատակարարման կամ գազամատակարարման մագիստրալ և այլն: Նման դեպքերում, հանրային շահից ելնելով, գույքի վերադարձը պետք է փոխարինվի գումարային փոխհատուցմամբ:

Հետևաբար՝ գտնում ենք, որ դատական ակտի կատարման շրջադարձի իրավունքը կարող է սահմանափակվել հանրային շահով պայմանավորված: Նման դեպքերում անձին պետք է տրվի դրամական փոխհատուցում:

Հատուկ ուշադրության է արժանի ալիմենտային հարաբերություններին վերաբերող դատական ակտերի կատարման շրջադարձի հարցը: Ալիմենտային պարտավորությունները ծագում են ընտանիքի անդամների միջև: Այս հարաբերությունների հետ կապված հարցերը կարգավորվում են Ընտանեկան օրենսգրքով: Ընտանիքի անդամների միջև նման պարտավորությունների առաջացման հիմքերը հստակ սահմանված են օրենքով: Ընդ որում՝ միակ դեպքը, երբ ալիմենտային պարտավորությունների ծագման համար որևէ պայման չկա բացի ազգակցական կապի առկայությունից՝ դա երեխա-ծնող հարաբերություններն են: Երեխա-ծնող ալիմենտային պարտավորությունները ծագում են սերման փաստի ուժով, ի տարբերություն օրինակ՝ ծնողի հանդեպ ալիմենտային պարտավորությանը, որի ծագման համար բացի սերման փաստից անհրաժեշտ է, որ ծնողը լինի անաշխատունակ և օգնության կարիք ունեցող:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս փաստել է, որ ալիմենտ վճարելու պարտականությունը ծագում է սերման փաստի հիման վրա երեխայի ծնվելու պահից և շարունակվում է օրենքով նախատեսված կարգով մինչև չափահաս դառնալը երեխայի կողմից լրիվ գործունակություն ձեռք բերելը: Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ դատարանը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ¹³:

Երեխայի մասին հոգ տանելը ծնողի պարտականությունն է, այն առկա է նույնիսկ այն դեպքում, երբ ալիմենտ վճարելու պարտավոր ծնողը չունի եկամուտ:

Բոլոր այն դեպքերում, երբ ալիմենտ սահմանելու մասին վճիռը, որը ենթադրում է պարբերական կատարում՝ բեկանվում է, իսկ նոր քննության փուլում հայցը մասնակի մերժվում է կամ գործի վարույթը կարճվում է, հայցն առանց քննության է թողնվում կամ Վերաքննիչ դատարանի կողմից վճիռը բեկանվում և փոփոխվում է՝ ավել վճարված

ալիմենտը հաշվանցման կամ վերադարձման ենթակա չէ:

Ինչպես արդեն իսկ նշվեց ալմենտ վճարելու հիմքը տվյալ ծնողից սերված լինելն է: Հետևաբար՝ վերը նշված կանոնից բացառություն կլինի այն դեպքը, երբ ներկայացվել է երեխայի ծնողը լինելու փաստի ճանաչման և ալիմենտի վճարման պահանջ և պահանջի բավարարումից հետո վճիռը բեկանվել է, իսկ և նոր քննության փուլում նման պահանջը չի բավարարվել: Նման դեպքում ալիմենտային պարտավորություն չպետք է ծագեր, իսկ վճարված ալիմենտի գումարը՝ դատական ակտի կատարման շրջադարձի ուժով ենթակա կլինի վերադարձման:

Եզրակացություն

Անփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է վերանայել դատական ակտի կատարման շրջադարձի իրավակարգավորումները՝ նախատեսելով դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման սահմանափակումների վերաբերյալ դրույթներ հետևյալ ձևակերպմամբ.

«Հողված. Դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման սահմանափակումները

1.Դատական ակտի կատարման շրջադարձը գույքի բնեղենով վերադարձման ձևով չի կարող իրականացվել.

1) եթե բեկանված վճռով սահմանված գույքային իրավունքը կամ գույքն, մտավոր սեփականության օբյեկտը կամ դրա նկատմամբ բացառիկ

իրավունքը այլևս չի պատկանում այն անձին, հոգուտ որի նախկինում կայացվել էր եզրափակիչ դատական ակտ, բացառությամբ իրավահաջորդության կարգով գույքի փոխանցման դեպքերի,

2) եթե պարտապանին վերադարձման ենթակա անհատապես որոշվող գույքը գոյություն չունի կամ ամբողջականությունը նվազել է,

3) եթե պարտապանին վերադարձման ենթակա գույքի վրա կատարվել են անբաժանելի բարելավումներ, որոնց արժեքը գերազանցում է գույքի արժեքը,

4) եթե արդյունքում խախտվում են այլ անձանց իրավունքներ և օրինական շահեր:

5) հանրային շահերի պաշտպանության նպատակով:

2. Ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ՝ շահագրգիռ անձի պահանջով դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման արդյունքում հատուցվում է դրա արժեքը դրամով:

3. Դատական ակտի կատարման շրջադարձ չի իրականացվում, եթե հայցի առարկան հոգուտ երեխայի ալիմենտի բռնագանձման պահանջն է և չի վիճարկվել երեխայի՝ ալիմենտ վճարելու պարտավոր ծնողից սերված լինելու փաստը:»:

¹ Տե՛ս, ըստ Նինա Չալտիկյանի դիմումի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի թիվ 2-4247/2004թ. որոշումը:

² Տե՛ս Colozza v. Italy թիվ 9024/80 գանգատով Եվրոպական դատարանի 12.02.1985 թվականի վճիռը, կետ 28:

³ Տե՛ս Ouzounis and others v. Greece թիվ 49144/99 գանգատով Եվրոպական դատարանի 18.04.2002 թվականի վճիռը, կետ 21:

⁴ Տե՛ս Burdov v. Russia թիվ 59498/00 գանգատով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, կետ 34, 37:

⁵ Տե՛ս, Պապամիկալոպոսուս ընդդեմ Հունաստանի (Papamichalopoulos v. Greece) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 31.10.1995 թվականի վճիռը, կետ 34:

⁶ Տե՛ս Дернова Д. Поворот исполнения судебного акта/Дернова Д.// Арбитражный и гражданский процесс. - 2007.- № 8.- էջ 44:

⁷ Տե՛ս Յատրիդիս ընդդեմ Հունաստանի (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [Iatridis v. Greece (just satisfaction) [GC]], թիվ 31107/96, « 32, ՄԵԵԴ 2000-XI:

⁸ Տե՛ս Սեդրակ Բարսեղյան ընդդեմ Գագիկ Բարսեղյանի և Կարինե Բաղդասարյանի թիվ ԱՐԱԳ-2/0077/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.04.2022 թվականի որոշումը:

⁹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 18.03.2008 թվականի թիվ ՄԳՈ-741 որոշումը, տե՛ս Սահմանադրական դատարանի 06.12.2016 թվականի թիվ ՄԳՈ-1326 որոշումը:

¹⁰ Տե՛ս «Լոկալ Դիվելոփմենթ» ՍՊԸ-ն ընդդեմ Վարդան Պետրոսյանի թիվ ԵԿԳ/0772/02/15 քաղաքացիական

գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 16.12.2022 թվականի որոշումը:

¹¹ Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք. Առաջին մաս, էջ 5, 2006թ:
¹² 01.01.2026 թվականից նշված օրենքն ուժը կորցրած է ճանաչվել և ուժի մեջ է մտել «Կատարողական վարույթ մասին» օրենքը:

¹³ Տե՛ս, օրինակ, Մարգարիտ Հովհաննիսյանն ընդդեմ Արթուր Թորոսյանի թիվ ԵԱԳ-Գ/1513/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն. գիրք առաջին, Երևան, 2022:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք. Առաջին մաս, Բարսեղյան Տ.Կ. Երևան, 2006թ:
3. Анотонова С.А. Поворот исполнения решения как способ восстановления прав должника // Арбитражная практика. – 2006.- № 5:
4. Аболонин В.О. Недостатки законодательного регулирования поворота исполнения судебных актов в гражданском процессе/ Исполнительное право. - 2012. - № 4:
5. Дернова Д. Поворот исполнения судебного акта, Арбитражный и гражданский процесс. - 2007.- № 8:
6. Макаров И.А. Восстановление прав ответчика, необоснованно понужденного к заключению договора. // Арбитражная практика. 2008. № 2 (83):
7. Муранов А.И. Поворот исполнения судебных актов: некоторые вопросы толкования и применения //Актуальные проблемы международного частного и гражданского права. – М. : Статут, 2006. – С. 182-201:
8. Д.О. Тузов, Реституция и реституционное правоотношение в гражданском праве России //Цивилистическое исследование, Выпуск первый, под. Ред. Б.Л. Хаскельберга, М. 2004:
9. Paramichaloropoulos v. Greece գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 31.10.1995 թվականի վճիռը:
10. Colozza v. Italy թիվ 9024/80 գանգատով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 12.02.1985 թվականի վճիռը:
11. Ouzounis and others v. Greece թիվ 49144/99 գանգատով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 18.04.2002 թվականի վճիռը:
12. Burdov v. Russia թիվ 59498/00 գանգատով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը:
13. Յատրիդիսն ընդդեմ Հունաստանի (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [latridis v. Greece (just satisfaction) [GC]], թիվ 31107/96, § 32, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000-XI վճիռը:
14. Սահմանադրական դատարանի 18.03.2008 թվականի թիվ ՍԳՈ-741 որոշումը:
15. Սահմանադրական դատարանի 06.12.2016 թվականի թիվ ՍԳՈ-1326 որոշումը:
16. Թիվ ԵԿԳ/0772/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 16.12.2022 թվականի որոշումը:
17. Թիվ ԵԱԳ-Գ/1513/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը:
18. Թիվ ԱՐԱԳ-2/0077/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.04.2022 թվականի որոշումը:
19. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի համապարփակ ուսումնասիրություն:

Անահիտ Անտոնյան
Судья суда общей юрисдикции
первой инстанции Котайкского марза (области) РА

РЕЗЮМЕ

Ограничения на осуществления поворота исполнения судебного акта

В данной научной статье подробно рассматриваются случаи ограничений поворота исполнения судебного акта. Суд рассматривает вопрос о повороте исполнения судебного акта в случае, если в результате повторного рассмотрения отмененного дела вынесено судебное постановление об отклонении иска или решение о прекращении производства по делу или об отказе в рассмотрении иска, после чего должник или иное заинтересованное лицо приобретает право на восстановление прежнего положения дел. Однако изучение законодательных норм и практики показывает, что могут возникать ситуации, когда по определенным объективным или субъективным причинам поворот исполнения судебного акта может быть ограничена или невозможна. В данной работе автор описал возможные ситуации, возникающие на практике, а также другие способы защиты прав личности в случае ограничений или невозможности осуществления поворота.

Ключевые слова: Поворот исполнения решения суда, поворот исполнения судебного акта, невозможность осуществления поворота исполнения судебного акта, ограничение на осуществление поворота исполнения судебного акта.

Anahit Antonyan

Judge of a court of general jurisdiction
of first instance of Kotayk marz (region) of the RA

SUMMARY

Restrictions of implementing a reversal of the execution of a judicial act

This scientific article discusses in detail the cases of restrictions of reversing the execution of a judicial act. The court addresses the issue of reversing the execution of the judgment in the event that, as a result of a new examination of the overturned case, a judicial act is issued to dismiss the claim or a decision to terminate the proceedings or leave the claim without examination, after which the debtor or other interested person acquires the right to restore the previous situation. However, the study of legislative regulations and practice shows that there are possible situations when, due to certain objective or subjective reasons, the reversal of the execution of a judicial act may be restricted or impossible. In this article, the author has described possible situations that arise in practice, as well as other ways to protect individual rights in the event of restrictions or impossibility of implementing a turn.

Key words: reversal of the execution of a judgment, reversal of the execution of a judicial act, impossibility of reversing the execution of a judicial act, restriction on the implementation of the reversal of the execution of a judicial act.

Բնագիրը ներկայացվել է 02.03.2026թ.
Ընդունվել է տպագրության 01.04.26թ.

ԷԼԻՆԱ ԳԵՂԱՄՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս
«ԹԱՈՒԵՐ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՔՈՆՍԱԼԹԱՆՏԱ» ՓԲԸ
իրավաբանական ծառայության ղեկավար

«ԴԱՏԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՋ» ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Սույն հոդվածում քննարկվում է «գատարանի ընկերոջ» ինստիտուտը՝ առավելապես վարչական դատավարությունում հանրային շահի պաշտպանության համատեքստում: Հոդվածի շրջանակում քննարկվող ինստիտուտը վերլուծության է ենթարկվում վարչական դատավարությունում դատարանի դերի վերախմաստավորման համատեքստում՝ ընդգծելով, որ վարչական դատավարության զարգացման ժամանակակից միտումները պահանջում են վարչաիրավական վեճեր քննող դատարանի դերի վերախմաստավորում՝ անհատական վեճեր քննողից մինչև գործադիր իշխանության ոչ իրավաչափ իրացման համակարգային դրսևորումների դեմ իրական հակակշիռ: Այս համատեքստում հոդվածում արձանագրվում է վարչական դատավարությունում ներկայումս գործող ավանդական գործիքակազմերի անբավարարությունը հանրային շահի արդյունավետ պաշտպանության տեսանկյունից՝ ընդգծելով հանրային շահի պաշտպանության համապարփակ գործիքակազմի ներդրման անհրաժեշտությունը:

Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ «գատարանի ընկերոջ» ինստիտուտը վարչական դատավարությունում չպետք է մեկնաբանվի պարզապես որպես դատական ակտերի պատճառաբանվածությունն ապահովող դատավարական լրացուցիչ գործիքակազմ, այլ որպես վարչական դատավարությունում հանրային շահի պաշտպանությունն ապահովող կարևորագույն գործիքակազմ: Տեսական աղբյուրների, միջազգային փորձի ուսումնասիրության և գործառնության վերլուծության արդյունքում հեղինակն առանձնացնում է քննարկվող ինստիտուտի՝ միջազգային պրակտիկայում հանդիպող հիմնական մոդելները՝ առաջարկելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարությունում ներդնել «գատարանի ընկերոջ» ինստիտուտի թույլատրվական մոդելը՝ այն սկզբնական շրջանում կիրառելի դարձնելով միայն Վճռաբեկ դատարանում և սահմանելով դրա կիրառելիության, այդ թվում՝ դատարանի կողմից amicus դիրքորոշումների ներկայացումը թույլատրելու հստակ պայմանները:

Հիմնաբառեր – վարչական դատավարություն, հանրային շահ, «գատարանի ընկեր», իշխանությունների բաժանում, իրավունքների համակարգային խախտումներ, Վճռաբեկ դատարան, դատարանի դեռակատարում:

Ներածություն

Սույն գիտական հոդվածի քննարկման առարկան «գատարանի ընկերոջ» ինստիտուտն է՝ վարչական դատավարությունում հանրային շահի պաշտպանության երաշխավորման համատեքստում: Չնայած այն հանգամանքին, որ վարչական դատավարության կենտրոնական առանցքում ավանդաբար եղել է հանրային իշխանության ոչ իրավաչափ իրացումից անձի իրավունքների պաշտպանությունը, ժամանակակից վարչական իրավունքում լայնորեն տարածում է գտնում այն գաղափարը, որ վարչական դատավարությունում դատարանի դերը չի կարող սահմանափակվել բացառապես անհատական վեճերի քննությամբ: Այս համատեքստում վարչական դատարանի դերը վերափոխվում է՝ անհատական վեճերի քննողից դեպի գործադիր իշխանության ոչ իրավաչափ իրացման դեմ իրական հակակշիռ: Այս համատեքստում վարչական դատավարության «ավանդական» ընթացակարգը և առկա գործիքակազմերը դառնում

են անբավարար՝ վարչական դատավարությունում անձի խախտված իրավունքների վերականգնումից զատ նաև հանրային շահի պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից:

Սույն հոդվածի արդիականությունը պայմանավորված է թե՛ ներպետական իրավական համակարգում, թե՛ միջազգային պրակտիկայում վարչական դատավարությունում վարչական դատարանի դերի վերախմաստավորման, մյուս կողմից՝ հանրային շահի պաշտպանության համարժեք գործիքակազմի ներդրման անհրաժեշտությամբ: Ընդ որում, հատկանշական է, որ չնայած այն հանգամանքին, որ վարչական դատավարությունում հանրային շահի պաշտպանության հիմնահարցերը վերջին տարիներին լայնորեն քննարկվում են, հանրային շահի պաշտպանությունը թե՛ գիտական աղբյուրներում և թե՛ ուսումնասիրված երկրների իրավակիրառ պրակտիկայում առավելապես կապվում է սոցիալապես խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությամբ հայցերի հարուցման հնարավորու-

www.aradaradutyjournal.com

թյան և թույլատրելիության շրջանակի քննարկմանը: Սույն հոդվածի շրջանակում առաջ է քաշվում այն գաղափարը, որ հանրային շահի պաշտպանությունն անհամեմատ ավելի լայն բովանդակություն ունի, և այն կարող է պատշաճ իրականացվել միայն առանձին գործիքակազմերի կիրառմամբ:

Սույն հոդվածի գիտական նորույթը և վարչական իրավունքի ու դատավարության ոլորտում դրա ներդրումը Հայաստանի Հանրապետության վարչական դատավարությունում «դատարանի ընկերոջ» ինստիտուտի ներդրման անհրաժեշտության հիմնավորումն է՝ դրա թույլատրվական մոդելի և սկզբնական շրջանում Վճռաբեկ դատարանում կիրառման ենթակա լինելու վերաբերյալ եզրահանգման առաջադրմամբ և դրա դոկտրինալ հիմնավորմամբ: Հոդվածի շրջանակում, այսպիսով, «դատարանի ընկերոջ» ինստիտուտը վերլուծվում է որպես ոչ թե պարզապես վարչական դատարանին օժանդակող ինստիտուտ, ինչպես այն ընկալվում է ավանդաբար, այլ վարչական դատավարության համատեքստում հանրային շահի պաշտպանության ապահովման գործիքակազմ: Հետագոտության գիտական նորույթը նաև այն է, որ հոդվածում առանձնացվում են քննարկվող ինստիտուտի հիմնական ռիսկերը և առաջնորդվում դրանց զսպման գործիքակազմերը:

Հոդվածի նպատակներն են «դատարանի ընկերոջ» ինստիտուտի կոնցեպտուալ հիմքերի, վարչական դատավարությունում ունեցած գործառույթային նշանակության բացահայտումը, միջազգային լավագույն փորձի ու տեսական աղբյուրների ուսումնասիրության և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում առկա խնդիրների համատեքստում վարչական դատավարությունում դրա ներդրման գիտականորեն հիմնավորված մոդելի առաջարկումը:

Հոդվածը կազմված է ներածությունից, հոդվածի մեթոդաբանությունից և երեք ենթավերնագրերից, որոնցից առաջինում բացահայտվում է «դատարանի ընկերոջ» ինստիտուտի էությունը, երկրորդում՝ քննարկվող ինստիտուտի առնչությամբ միջազգային փորձը, երրորդում՝ ինստիտուտի առնչությամբ հնարավոր խնդիրները, դրանց հաղթահարման ուղիները և Հայաստանի Հանրապետությունում ներդրման հեռանկարները:

Հետագոտության մեթոդաբանությունը. Հետագոտությունն իրականացվել է նորմատիվ, դոկտրինալ, համեմատական և իրավաբանական գործառույթային վերլուծության մեթոդների համատեղ կիրառմամբ:

Դոկտրինալ մեթոդը կիրառվել է հանրային շահի պաշտպանության և «դատարանի ընկերոջ» ինստիտուտների գիտական բնույթի բացահայտման, նորմատիվ վերլուծության մեթոդը՝ Հայաստանի

տանի Հանրապետության և այլ երկրների օրենսդրության վերլուծության համար: Համեմատական մեթոդը կիրառվել է տարբեր երկրների իրավական համակարգերում քննարկվող ինստիտուտի առանձնահատկությունների վերհանման և հայրենական իրավական համակարգում դրանց կիրառելիությունը փաստելու համար: Գործառույթային վերլուծության մեթոդը կիրառվել է քննարկվող ինստիտուտի առավելությունների, գործնական կիրառման հիմնախնդիրների և դրա ներդրման հնարավոր ռիսկերի վերհանման նպատակով:

Հետագոտության մեթոդաբանական հիմքը իրավական ակտերը, դատական պրակտիկան, համեմատական իրավագիտական նյութերն ու ակադեմիական գրականությունն են, որոնք ենթարկվել են որակական վերլուծության շեշտը դնելով համակարգային եզրահանգումների և գործնականում կիրառելիության ապահովման վրա:

«Դատարանի ընկերոջ» ինստիտուտի էությունը և գոյաբանական հիմքերը

Վարչարարության բողոքարկման իրավունքի ձևավորման ակունքներում ի սկզբանե եղել է հանրային իշխանության ոչ իրավաչափ իրականացման դեպքում անձին իր իրավունքների պաշտպանության հնարավորություն ընձեռելու գաղափարը: Այս համատեքստում թե՛ վարչական իրավունքի գիտության մեջ, թե՛ առանձին երկրների իրավական համակարգում վարչարարությունից տուժող համարվելու և այդ հիմքով բողոքարկման իրավունք ունենանալու առաջնահերթ չափանիշը վիճարկվող վարչական միջոցի կամ այլ գործողությունից ուղղակի ազդեցություն կրած լինելն է: Չնայած այս հանգամանքին՝ հանրային իշխանության իրականացումը, այդ թվում՝ վարչարարության իրականացումը, ի տարբերություն մասնավոր իրավական հարաբերությունների, անկախ կոնկրետ հասցեատերեր ունենալու հանգամանքից, որոշակիորեն շոշափում է նաև հանրային շահը: Ավելին, վարչաիրավական հարաբերություններն ի սկզբանե ծագում են հանրային շահի պաշտպանության և իրացման նպատակով, ուստի վարչարարության բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի որոշման հիմքում միայն մասնավոր շահի պաշտպանությունը դնելն ինքնին դեռևս բավարար չէ վարչարարության բողոքարկման ինստիտուտի՝ վարչարարության արդյունքում «տուժած» անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության մեկտեղ մյուս առաջնահերթ նպատակի՝ հանրային իշխանության ոչ իրավաչափ իրականացումը զսպելու կամ դրա դեմ պայքարի կենսագործման համար:

Մյուս կողմից՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը ենթադրում է, որ դատական իշխանության նպատակը ու գործունե-

ուրջան հիմքում ընկած հիմնարար սկզբունքը պետք է լինի ոչ միայն անհատի արդար դատաքննության իրավունքի գործնականում իրացման հնարավորություն ընձեռելը, այլև գործադիր իշխանության ոչ իրավաչափ իրացման դեմ ընդհանուր հակակշիռ լինելը, ինչին հնարավոր չի լինի հասնել, եթե վարչական դատավարությունում դատարանն օժտված չլինի հանրային շահի պաշտպանությունն ապահովելու և գործադիր իշխանության՝ այդ շահը խախտող գործունեությանը արդարադատության գործիքակազմով արձագանքելու անհրաժեշտ կառուցակարգերով:

Վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանությանը միտված առանձին ինստիտուտների ներդրման անհրաժեշտությունը քննարկվող յուրաքանչյուր դեպքում տարբեր հիմնավորումներ ունի: Մասնավորապես, հնարավոր են իրավիճակներ, երբ անձը, ունենալով իրավական շահագրգռվածություն, դիմի վարչական դատարան իր իրավունքներն անմիջականորեն խախտող վարչական ակտի վիճարկման պահանջով, սակայն, միևնույն ժամանակ, վարչական ակտն իր բնույթով այնպիսին լինի, որ շոշափին նաև այլ, այդ թվում՝ լայն շրջանակի անձանց իրավունքներ, որոնք կան չջանկանան մասնակցել դատավարությանը, կան այդպիսի անձանց շրջանակն այնքան լայն լինի, որ օբյեկտիվորեն անհնարին լինի նրանց անհատականացնելը և դատավարությանը մասնակից դարձնելը: Ընդ որում, այդ անձանց իրավունքները շոշափվելը կարող է չունենալ իրավաբանորեն այնպիսի նշանակալիություն, որ վերջիններս իրավունք ստանան դատավարությանը մասնակցել երրորդ անձի կարգավիճակով: Այսինքն, եթե նույնիսկ նման դեպքերում իրավական շահագրգռվածություն ունեցող անձը չդիմեր դատարան և չվիճարկեր վարչարարությունը, այդ դեպքում, օրինակ, հասարակական կազմակերպությունը, չէր ունենա հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու և նշված վարչական ակտը վիճարկելու իրավունք, քանի որ դժվար կլիներ նման դեպքերում ապահովել դատարան դիմելու համար անհրաժեշտ «շահագրգռվածության» առկայությունը:

Մյուս կողմից, հնարավոր են դեպքեր, երբ կոնկրետ գործով վարչարարությունը վիճարկվի, սակայն վարչական մարմնի պրակտիկայում առկա լինեն անձանց իրավունքների ենթադրյալ խախտման բազմաթիվ նմանատիպ դեպքեր, որոնց հասցեատերերը, սակայն, խմբային հայց չեն ներկայացրել կամ դեռևս հայց չեն ներկայացրել դատարան, իսկ մյուս կողմից՝ չունեն իրավական որևէ կառուցակարգ՝ տվյալ գործի շրջանակում բարձրաձայնելու վարչական մարմնի կողմից անձանց իրավունքների հիմնարար և/կամ համակարգային խախտումները: Այսպիսի դեպքերում ևս

վարչարարությունից ակնհայտ «տուժողի» կարգավիճակ ունեցող անձի առկայության և վերջինիս կողմից դատարան դիմած լինելու, մյուս կողմից՝ խմբային հայց չներկայացվելու պայմաններում անձանց իրավունքների համակարգային խախտման հետևանքով հանրային շահի պաշտպանության համատեքստում առաջացող «սպառնալիքը» իրավական գնահատականի չի արժանանում նաև իրավական համապատասխան կառուցակարգի բացակայության հետևանքով:

Նմանատիպ և այլ խնդիրների հաղթահարման նպատակով վերջին տարիներին վարչական դատավարությունում աստիճանաբար տարածում է գտնում «դատարանի ընկերոջ» (amicus curiae) իրավական ինստիտուտը՝ որպես վարչական դատավարությունում հանրային շահի պաշտպանության առանցքային գործիքներից մեկը:

Amicus curiae-ն իրավաբանական հասկացություն է, որը լատիներենից թարգմանվում է որպես «դատարանի ընկեր» և կոչված է բնութագրելու դատավարությանն այնպիսի անձանց մասնակցությունը, որոնք մասնակցում են դատավարությանը՝ ներկայացնելու համար դատավարության մասնակիցների դիրքորոշումից անկախ այլ՝ արտաքին դիրքորոշում: Այլ կերպ ասած՝ այս ինստիտուտը թույլ է տալիս որևէ մեկին, որը չի հանդիսանում գործի մասնակից և կարող է կամ չի կարող ստանալ որևէ կողմի միջնորդությունը, աջակցել դատարանին՝ առաջարկելով գործի համար որևէ նշանակություն ունեցող տեղեկատվություն, փորձաքննություն կամ լուսաբանում:

«Դատարանի ընկերոջ» ինստիտուտի ներդրման օբյեկտիվ անհրաժեշտությունը հանրային շահի պաշտպանությանն առնչվող ժամանակակից դատավարություններում պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից դատավորի և դատարանի դերը կողմերի միջև զուտ իրենց իրավունքներին առնչվող վեճերը քննողից վերափոխվել է որպես բազմաշերտ ու բարդ հարցեր քննողի, ինչը, բնականաբար, դատավորին առաջադրում է նոր որակներ ու պահանջում է, որ վերջինս լայն ու համընդգրկուն տեղեկատվություն ունենա վեճին առնչվող մի շարք հանգամանքների վերաբերյալ:

Մինչ դեռ, նշված տեղեկատվությունը հաճախ հնարավոր չի լինում ձեռք բերել դատավարության մասնակիցներից, քանի որ կողմերը կարող են կան չտիրապետել այդպիսի տեղեկատվության, կան շահագրգռված չլինել այն ներկայացնել՝ հատկապես այն դեպքերում, երբ դատավարական կանոնները վերջիններիս չեն պարտավորեցնում դա ներկայացնել (օրինակ՝ քանի որ այն չի դիտարկվում որպես ապացույց): Այս հանգամանքով պայմանավորված՝ դատարանը հաճախ կարիք է ունենում տեղեկատվության «արտաքին» աղբյուրի, որն է գորու կլինի ներկայացնել օբյեկտիվ դիրքորոշում:

www.aradaradutyjournal.com

Մյուս կողմից, սոցիալական լայն նշանակություն ունեցող հարցեր քննելիս դատարանները պետք է իրական հնարավորություն ունենան քննարկել նաև իրենց կողմից կայացվելիք դատական ակտի հնարավոր լայն սոցիալական ազդեցությունը, և վեճը դիտարկել ավելի լայն տեսանկյունից, ինչը կրկին հաճախ հնարավոր չի լինում իրականացնել միայն «ավանդական» դատավարական փաստաթղթերի հիման վրա:

Գատավարությունում «դատարանի ընկերոջ» ինստիտուտի ներդրման կողմնակիցները դրա հիմքում դնում են այն ելակետային գաղափարը, որ հանրային իրավական հարաբերություններում անհատական վեճի առնչությամբ կայացված ցանկացած դատական ակտ բացի այդ վեճի կողմերի շահերից շոշափում է նաև այնպիսի երրորդ անձանց շահերը, որոնք դատավարությանը չեն մասնակցում: Մենք համամիտ ենք նշված մտքի հետ՝ այն համատեքստում, որ վարչաիրավական հարաբերություններից բխող վեճերը, ի սկզբանե ծագելով հանրային շահի պաշտպանության և իրացման համատեքստում, չեն կարող հավասարեցվել մասնավոր իրավունքից բխող վեճերին և վերաբերելի համարվել միայն դատավարության կողմերին. ցանկացած վարչական ակտ, վարչարարության ցանկացած դրսևորում որոշակիորեն առնչվում է հանրային շահին, ինչպիսի առնչությունը, սակայն, դեպքերի ճնշող մեծամասնությունում իրավաբանորեն այնքան արժևորվող չէ, որ որոշակի անձանց վերապահի դատավարությանը որևէ, օրինակ՝ երրորդ անձի կարգավիճակով մասնակցելու հնարավորություն: Մյուս կողմից, այդպիսի առնչությունն այնքան ոչ նշանակալի չէ, որ անտեսվի և չարժանանա իրավական որևէ արձագանքի:

Մաքս Փլանկի՝ Միջազգային վարության իրավունքի վերաբերյալ հանրագիտարանում կառավարությունների, միջազգային կազմակերպությունների, մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտների և հասարակական միավորումների կողմից «դատարանի ընկերոջ» կարգավիճակում ներկայացվող դիրքորոշումների երեք նպատակ է առանձնացվում.

1. տեղեկատվական նպատակ՝ դատարանին քննվող գործի փաստական հանգամանքների կամ համեմատական իրավական նյութերի տրամադրումը.
 2. ներկայացուցչական նպատակ՝ այն խմբերի շահերի ներկայացումը, որոնք տվյալ գործի կողմ չեն, բայց որոնց շահերին առնչվում է այդ գործը.
 3. համակարգային նպատակ՝ դատարանին օգնել զգայուն ոլորտներում գործերի քննության համատեքստում ձևավորել ընդհանուր սկզբունքներ և չափանիշներ:
- Այսպիսով, քննարկվող ինստիտուտի էությունը հանգում է նրան, որ դատավարության կողմ չհան-

դիսացող անհատին կամ կազմակերպությանը հնարավորություն է տալիս դատավարությանն ունենալ իրական մասնակցություն, ներգրավվածություն, իր դիրքորոշման բարձրաձայման հնարավորություն՝ դատարանին տվյալ գործի շրջանակում քննարկման ենթակա հարցերի վերաբերյալ անկախ մասնագիտական կարծիքի, համեմատական իրավաբանական հետազոտությունների, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող տեղեկատվության տրամադրմամբ: Կարևոր ենք համարում ընդգծել, որ amicus կարգավիճակով գործին մասնակցությունը և այս ինստիտուտի ներդրումը որևէ պարագայում չպետք է հանգեցնի դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի ընդլայնման կամ փաստացի հանգեցնի actio popularis հայցատեսակի ներդրմանը: Այս ինստիտուտը որևէ լրացուցիչ, իրավական շահագրգռվածություն չունեցող սուբյեկտի դատարան դիմելու իրավունք չի վերապահում, այլ իրենից ենթադրում է բացառապես դատարանի համար խորհրդատվական նշանակություն ունեցող դիրքորոշումների ներկայացման հնարավորություն: Մյուս կողմից, amicus curiae կարգավիճակով ներկայացված դիրքորոշումները դատարանին որևէ կերպ չեն կաշկանդում այս կամ այն կողմի օգտին վճիռ կայացնելու հարցում. այս ինստիտուտն ի սկզբանե միտված է դատարանին օգնել՝ կայացնել առավել հիմնավոր, պատճառաբանված և արդարացի դատական ակտ:

«Գատարանի ընկերոջ» ինստիտուտի կիրառման միջազգային փորձը և առկա մոդելները

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ վարչական դատավարությունում «դատարանի ընկերոջ» ինստիտուտն առավել լայնորեն կիրառվում է անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում: Ընդ որում, Մեծ Բրիտանիայում դատարաններն առավել հակված են amicus դիրքորոշումներն ընդունել այն գործերով, որոնցով քննարկման առարկան հանրային կարևորության կամ համակարգային ազդեցության հարցեր են, և որոնցում կշռադատված amicus միջնորդությունները կարող են դատարանին էապես օգնել՝ տրամադրելով մասնագիտացվածություն, համեմատական իրավական նյութեր և քաղաքականության մասին առավել լայն պատկերացում: Մեծ Բրիտանիայում դատարանները, սակայն, այսպիսի դիրքորոշումներ ընդունում են միայն նորմատիվ կարգավորման տեսանկյունից որակավորված այնպիսի սուբյեկտներից, որոնց դիրքորոշումների քննարկումը կողմերի իրավահավասարության տեսանկյունից խնդիր չի կարող առաջացնել: Մեծ Բրիտանիայում, այսպիսով, քննարկվող ինստիտուտն առավելապես արդյունավետ է սահմանադրական կարևորություն կամ

համակարգային հանրային ազդեցություն ունեցող գործերի քննության շրջանակում, մյուս կողմից՝ դրա հիմնական առանձնահատկությունը այսպիսի դիրքորոշումների թույլատրելիության խիստ չափանիշների սահմանմամբ դատավարական իրավահավասարության երաշխավորումն է:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում գիտական ու գործնական մակարդակում «դատարանի ընկերոջ» ինստիտուտը դիտարկվում է որպես վարչարարության դատական վերանայման համատեքստում հանրային շահի ներկայացվածության կարևորագույն գործիք: ԱՄՆ Գերագույն դատարանի վերաբերյալ Քոլինսի, Զորլեյի և Համների հետազոտությամբ ընդգծվում է, որ Գերագույն դատարանի որոշումներում հաճախ ուղղակիորեն արտացոլված են amicus դիրքորոշումների ձևակերպումները՝ որպես որոշումների հիմնավորում՝ հատկապես իրավաբանորեն լավ հիմնավորված դիրքորոշումների դեպքում: Ամերիկյան մոդելը, այսպիսով, առանձնանում է amicus դիրքորոշումների՝ դատարանի պատճառաբանությունների վրա ունեցած մեծ ազդեցությամբ: Ամերիկյան մոդելը, սակայն, լուրջ մտահոգություններ է առաջացնում դատարանների ծանրաբեռնվածության ավելացման և դատարանի անկախության վրա ենթադրյալ բացասական ազդեցության տեսանկյունից:

Հետխորհրդային իրավական համակարգերում «դատարանի ընկերոջ» ինստիտուտը դեռևս նոր, դոկտրինալ աղբյուրներում վիճելի և օրենսդրական մակարդակում գրեթե չամրագրված ինստիտուտ է: Ռուսական գիտական աղբյուրներում, սակայն, ՌԴ Սահմանադրական դատարանի պրակտիկայում ներդրված «նախաձեռնողական գիտական կարծիքների» ինստիտուտի (նույնանուն է «դատարանի ընկերոջ» ինստիտուտի հետ) կիրառման պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում դրա ակնհայտ դրական ազդեցության վերաբերյալ եզրակացություն է արվում՝ նշելով, որ ուսումնասիրված գործերի 75 տոկոսում սահմանադրական դատարան ներկայացված դիրքորոշումները որևէ կերպ օգտագործվել են փաստերի վերաբերյալ դիրքորոշումների, հիմնավորումների կամ հատուկ կարծիքների շրջանակում քննարկման տեսանկյունից: Օ. Կրյաժկովան, անդրադառնալով սահմանադրական դատարանում «դատարանի ընկերոջ» կողմից ներկայացվող դիրքորոշումներին, ընդգծել է, որ այդ դիրքորոշումները հանրային նշանակություն ու կարևորություն ունեցող հարցերով քաղաքացիական հասարակության կարծիքի արտահայտման կարևոր գործիք են, որոնք, ներկայացված լինելով հանրության տվյալ շահի պաշտպանության ոլորտում մասնագիտացված սուբյեկտի կողմից, ունեն օբյեկտիվության և գիտական հիմնավորվածության բարձր աստիճան¹⁰:

Չնայած այն հանգամանքին, որ ավելի վաղ ժամանակաշրջանի ռուսական գրականությունում «դատարանի ընկերոջ» ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը կապվում էր առավելապես սահմանադրական արդարադատության և հիմնարար իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի հետ, ռուսական ժամանակակից գրականությունում արդեն հիմնավորվում է նաև վարչարավական հարաբերություններում, օրինակ՝ Պետական հսկամենաշնորհային ծառայության կողմից իրականացվող վարույթի շրջանակում, այս ինստիտուտի կիրառման անհրաժեշտությունը¹¹:

Թեև քննարկվող ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում թե՛ վարչական դատավարության և թե՛ քաղաքացիական դատավարության համակարգում մինչ օրս չի կիրառվել, այն, ըստ էության, ներպետական իրավական համակարգում իր որոշակի դրսևորումներն ունի: Խոսքը, մասնավորապես, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի¹² 44-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության, Բարձրագույն դատական խորհրդի, Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների պաշտպանի, գլխավոր դատախազի ներկայացուցիչները (...) դատաքննության ընթացքում կարող են հրավիրյալների կարգավիճակով պարզաբանումներ տալ Սահմանադրական դատարանի՝ իրենց ուղղած հարցերի վերաբերյալ: Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանից պարզաբանումներ ստանալու հնարավորությունը բավականին ակտիվորեն կիրառվում է Սահմանադրական դատարանի կողմից, և Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սահմանադրական դատարանում քննվող գործերի շրջանակում հատուկ կարծիքներ (amicus curiae) ներկայացնելու պրակտիկան շատ բարձր է գնահատվել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահի կողմից, ով ընդգծել է, որ նման գործելակերպն ամբողջությամբ բխում է Եվրոպայի խորհրդի առաջնահերթություններից, այն է՝ Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեցիային երկրի իրավական համակարգի առավել համապատասխանեցմանն ուղղված սուբսիդիարության սկզբունքից¹³:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող ինստիտուտի երկու հիմնական մոդել կա, որից առաջինի դեպքում իրավասու սուբյեկտները կարող են ազատորեն դատավարության շրջանակում ներկայացնել իրենց amicus curiae դիրքորոշումը, իսկ երկրորդի՝ «թույլատվական» մոդելի դեպքում՝ իրենց դիրքորոշումը կարող են ներկայացնել միայն դատարանի թույլտվությամբ: Որոշ երկրներում, օրինակ Մոլդովայում, Վրաստանում, Ռումինիայում և Ուկրաինայում, գործում է դատարանի ընկերոջ ինստիտուտի խա-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

որ մոդելը, և իրավասու սուբյեկտներն իրենց դիրքորոշումը կարող են ներկայացնել ինչպես իրենց նախաձեռնությամբ, այնպես էլ դատարանի խնդրանքով¹⁴ : Նշված մոդելներից ներպետական իրավական համակարգի համատեքստում առավել կիրառելի մոդելի ընտրությունը պետք է իրականացվի այս ինստիտուտի համակողմանի վերլուծության, այդ թվում՝ դրա ներդրումից բխող հնարավոր ռիսկերի և բացասական հետևանքների առանձնացման հիման վրա:

Այսպիսով, «դատարանի ընկերոջ» ինստիտուտի՝ վարչական դատավարության համակարգում կիրառման միջազգային փորձի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ amicus curiae ինստիտուտը վարչական դատավարությունում այժմ վերածվում է հանրային շահերի ներկայացվածության ապահովման կարևորագույն գործիքի՝ տարբեր իրավական համակարգերում ստանալով նորմատիվ տարբեր կարգավորումներ և բովանդակություն՝ հանդես գալով որպես դատարանին մասնագիտացված գիտելիք ու վեճի սոցիալաքաղաքական ավելի լայն համատեքստ տրամադրող միջոց, մյուս կողմից՝ դատական պատճառաբանությունների վրա էական ազդեցություն ունեցող միջոց: Հետխորհրդային իրավական համակարգերում ինստիտուտը դեռևս լիարժեք օրենսդրական ամրագրում չի ստացել, սակայն դոկտրինալ մակարդակում և սահմանադրական արդարադատության շրջանակներում արդեն արձանագրվում է դրա գործնական նշանակությունը: ՌԴ Սահմանադրական դատարանի փորձը, ինչպես նաև ժամանակակից գիտական հիմնավորումները, վկայում են, որ հանրային նշանակություն ունեցող հարցերում դատարանին արտաքին մասնագիտական դիրքորոշումների տրամադրումը կարող է նպաստել իրավական վերլուծության խորացմանը:

Թեև Հայաստանի Հանրապետությունում վարչական դատավարությունում amicus curiae ինստիտուտը մինչ օրս ներդրված չէ, ներպետական իրավական համակարգում առկա են դրա որոշակի ֆունկցիոնալ նախադրյալներ, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի վարությամբ արտաքին սուբյեկտների ներգրավման հնարավորության ձևով: Սա վկայում է, որ քննարկվող կառուցակարգը օտար չէ հայաստանյան իրավակարգին, այլ պահանջում է համակարգված և հայեցակարգային ձևակերպում վարչական դատավարության շրջանակում:

Ընդհանուր առմամբ, միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ քննարկվող ինստիտուտի մեկ միասնական նախընտրելի մեթոդ առկա չէ, և այս ինստիտուտի արդյունավետությունը կախված է երեք հիմնարար սկզբունքների հավասարակշռումից՝ հանրային շահի պաշտպանության, դատարանի

անկախության և դատավարական արդյունավետության: Հետևաբար, ներպետական իրավական համակարգում կիրառելի մոդելի ընտրությունը պետք է հիմնված լինի ոչ թե մեխանիկական փոխառության, այլ համատեքստային ադապտացիայի վրա:

«Դատարանի ընկերոջ» ինստիտուտի գործնական կիրառման հիմնախնդիրները, հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ուղիները

Միջազգային փորձի և տեսական աղբյուրների վերլուծության հիման վրա հանգել ենք այն եզրակացության, որ քննարկվող ինստիտուտի առնչությամբ երկու հիմնական բացասական կողմ է առանձնացվում: Առաջինն այն է, որ դատարանում ամիկուս դիրքորոշումների ներկայացումը կարող է ազդել դատարանի ներքին համոզմունքի վրա և «դրդել» նրան կայացնել այնպիսի որոշում, որն այլ հավասար պայմաններում չէր կայացվի: Օրինակ, ԱՄՆ գերագույն դատարանը 2010-2016 թվականներին կայացված որոշումների 50, իսկ 2015-2016 թվականների որոշումների 54 տոկոսում հղում է տվել իրեն ներկայացված տարբեր amicus curiae դիրքորոշումներին¹⁵ : Այնուամենայնիվ, ինչպես ԱՄՆ գերագույն դատարանի, այնպես էլ որևէ դատարանի առնչությամբ մինչ օրս չի արվել որևէ հիմնավոր և առարկայական հետազոտություն, որը ցույց կտար նշված դիրքորոշումների որևէ ոչ իրավաչափ կամ որևէ կողմի օգտին դատարանին «հակող» ազդեցություն, ինչպիսի պայմաններում, կարծում ենք, որ այս կարգավիճակով ներկայացվող դիրքորոշումների՝ դատարանի վրա ազդեցությունը համադրելի և համեմատելի է դատավարության կողմերի կողմից ներկայացվող դիրքորոշումներին: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդպիսի դիրքորոշումների նպատակը ոչ թե դատավարության որևէ կողմին պաշտպանելն է, այլ օբյեկտիվ փաստեր ներկայացնելը, կարծում ենք, դրանք համապատասխան ազդեցության և դատարանի համոզմունքի ձևավորման տեսանկյունից անհամեմատ ավելի նվազ ռեթակատարում ունեն, քան դատավարական որևէ այլ փաստաթուղթ:

Քննարկվող ինստիտուտի երկրորդ հնարավոր բացասական կողմն այն է, որ դատարանի ընկերոջ կարգավիճակ ունեցող սուբյեկտների կողմից դատարան ներկայացվող դիրքորոշումներն էականորեն ծանրաբեռնում են դատարանին այնպիսի տեղեկատվությամբ, որը ոչ միայն օբյեկտիվորեն անհրաժեշտ չէ գործի քննության համար, այլև հանգեցնում է դատական ռեսուրսի վատնմանը, ինչն իր հերթին բացասաբար է ազդում կողմերի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի գործնականում երաշխավորման համար¹⁶ :

Առաջարկվող ինստիտուտը Հայաստանի

www.aradaradutyjournal.com

www.ardaradutyjournal.com

Հանրապետության վարչական դատավարության համակարգում նորույթ է, և դրա ներդրումը, չնայած մի շարք առավելություններին, կարող է իր նպատակին չծառայել, եթե այս ինստիտուտի կոնցեպտուալ հիմքերը չլինեն պատշաճ: Այս համատեքստում անհրաժեշտ է «դատարանի ընկերոջ» ինստիտուտի օրենսդրական ամրագրումն իրականացնել նաև հաշվի առնելով վերոգրյալ բացասական հետևանքների կանխարգելման անհրաժեշտությունը: Թե՛ դատարանի վրա անհամաչափ ազդեցության և թե՛ դատարանների անհարկի ծանրաբեռնվածության կանխարգելման տեսանկյունից արդյունավետ լուծում կարող է լինել «դատարանի ընկերոջ» ինստիտուտի թույլատվական մոդելի ներդրումը՝ իրավասու սուբյեկտներին համապատասխան դիրքորոշում ներկայացնելու հնարավորություն ընձեռելով միայն իրենց միջնորդության հիման վրա՝ դատարանի թույլտվությամբ, կամ դատարանի նախաձեռնությամբ: Այս ընթացակարգը դատարանին հնարավորություն կտա ի սկզբանե «ֆիլտրել» միայն այնպիսի դիրքորոշումները, որոնք իրեն անհրաժեշտ են գործի բազմակողմանի, րիվ և օբյեկտիվ քննության համար:

Մյուս կողմից, կարևոր նշանակություն ունի նաև այն սուբյեկտների շրջանակի որոշումը, որոնց պետք է վերապահվի քննարկվող դիրքորոշումները ներկայացնելու հնարավորություն: Հարկ ենք համարում ընդգծել, որ մեր ուսումնասիրությունների ընթացքում «դատարանի ընկերոջ» ինստիտուտի ներդրման անհրաժեշտությանը հանգելու տեսանկյունից հիմնաքարային նշանակություն է ունեցել ներպետական իրավակիրառ պրակտիկայում հասարակական կազմակերպությունների կողմից դատարան դիմելու ինստիտուտի խիստ անբավարար պրակտիկան, ինչը հիմք է տալիս նաև ենթադրելու, որ իրավական բավարար շահագրգռվածություն կամ համապատասխան հիմքեր չունենալը, մյուս կողմից՝ դատավարական գործընթացների խիստ ծանրաբեռնող ու ծախսատար բնույթը հասարակական կազմակերպություններին ողջամտորեն ձեռնպահ կարող է պահել հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելուց: Մինչդեռ, հաշվի առնելով այն, որ հասարակական կազմակերպության կողմից դատարան դիմելու նպատակը ոչ այնքան կոնկրետ գործով վեճի լուծում ունենալն է, որքան իրավաբանորեն արժևորվող և իր կանոնադրական նպատակների համատեքստում պաշտպանության ենթակա շահերի պաշտպանությունը, դատարանի ընկերոջ ինստիտուտն այս համատեքստում կարող է անհամեմատ առավել բարձր կիրառելիություն, մատչելիություն ու նպատակահարմարություն ունենալ:

Վերոգրյալի հիման վրա վարչական դատավարությունում *amicus curiae* կարգավիճակով մասնակցելու իրավունքը պետք է վերապահվի հասարակական կազմակերպություններին:

Սակայն այս դեպքում ևս այդպիսի իրավունք պետք է ունենա ոչ թե ցանկացած, այլ միայն այնպիսի հասարակական կազմակերպություն, որը սույն աշխատանքի նախորդ պարագրաֆի համատեքստում ունի տվյալ գործի շրջանակում շոշափվող «հանրային շահի պաշտպանությամբ իրական շահագրգռվածություն»: Վարչական դատարանում այդպիսի դիրքորոշումներ ներկայացնելու իրավունք պետք է ունենա նաև Մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նաև իրավաբան գիտնականները:

Դատարանի ընկերոջ ինստիտուտի ներդրումն այն պայմաններում, երբ չնայած Սահմանադրական դատարանում գործի քննության շրջանակում այս ինստիտուտի ամրագրմանը, Մարդու իրավունքների պաշտպանից զատ այլ սուբյեկտների դեպքում չկան այս ինստիտուտի վերաբերյալ ձևավորված պատշաճ իրավական ավանդույթներ, կարող է հանգեցնել Վարչական դատարանում միջնորդությունների տեղատարափի՝ այդ թվում համապատասխան չափանիշներին չբավարարող սուբյեկտների կողմից կամ այնպիսի գործերով, որոնց շրջանակում օբյեկտիվորեն առկա չէ նման դիրքորոշումների ներկայացման կարիք: Նման խնդիրներից խուսափելու, ինչպես նաև այս ինստիտուտի աստիճանական, սակայն իրավական ճիշտ համատեքստում կայացման նպատակով առաջարկում ենք այն սկզբնական շրջանում ներդնել միայն Վճռաբեկ դատարանում՝ հետագայում դրա գործողությունն աստիճանաբար, ըստ անհրաժեշտության, տարածելով նաև Վարչական դատարանում գործի քննության նկատմամբ:

Մյուս կողմից, բացի թույլատվական մոդելի ընտրությունից, նպատակահարմար է օրենսդրություն հատակ սահմանել *amicus curiae* դիրքորոշումների ընդունելիության չափանիշները: Մասնավորապես՝ առաջարկվում է սահմանել դատարանի կողմից այդպիսի դիրքորոշումների ներկայացումը թույլատրելիության նախապայմաններ, ներկայացվող փաստաթղթերի ծավալի ողջամիտ սահմանափակումներ և ներկայացման հստակ ժամկետներ՝ ապահովելու համար դատավարության արդյունավետ ընթացքը և կողմերի հավասար հնարավորությունները: Նպատակահարմար է նաև պարտադիր դարձնել ներկայացվող դիրքորոշման հրապարակայնությունը: Կարևոր նշանակություն ունի նաև այնպիսի երաշխիքների սահմանումը, որոնք կապահովեն դատարանի ընկերոջ կարգավիճակ ունեցող սուբյեկտների ինստիտուցիոնալ անկախությունն ու մասնագիտական որակը: Այս համատեքստում կարելի է սահմանել, որ հասարակական կազմակերպությունը պետք է գործի առնվազն որոշակի ժամանակահատվածում, իր կանոնադրական նպատակներով անմիջականորեն առնչվի ներկայացվող հարցին և չունենա տվյալ գործով

ուղղակի նյութական կամ այլ մասնավոր շահագրգռվածություն:

Այսպիսով, քննարկվող ինստիտուտի ներդրումը չի կարող դիտարկվել որպես դատավարության մասնակիցների շրջանակի մեխանիկական ընդլայնում կամ վարչական դատավարության շրջանակում առավել լայն շրջանակի սուբյեկտներին իրենց դիրքորոշումն արտահայտելու հնարավորության սահմանում: Քննարկվող ինստիտուտի ներդրման առաջնահերթ նպատակը պետք է լինի հանրային շահի պաշտպանության երաշխավորումը և վարչական դատարանին վարչարարության համակարգային ոչ իրավաչափ դրոշմներին արձագանքելու առավել լայն գործիքակազմով օժտելը: Միայն նման պայմաններում «դատարանի ընկերոջ» ինստիտուտը կարող է դառնալ վարչական դատավարությունում հանրային շահի պաշտպանության իրական և գործնականորեն կիրառելի մեխանիզմ:

Եզրակացություն

Այսպիսով, վերը շարադրվածի հիման վրա հանգում ենք հետևյալ հիմնական եզրահանգումներին.

1. Վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանությունը չի կարող ամբողջությամբ իրագործվել միայն սուբյեկտների որոշակի սահմանափակ շրջանակի վարչարարության բողոքարկման իրավունք վերապահելով: Հանրային շահերի պաշտպանության լիարժեք ապահովումը վարչական դատավարությունում հնարավոր է այլ գործիքակազմերի հետ համատեղ վարչական «դատարանի ընկերոջ» ինստիտուտի ներդրման միջոցով, ինչը հնարավորություն կտա առանձին սուբյեկտներին առանց դատավարությունում կողմի կարգավիճակ ունենալու դատարանին ներկայացնել իրենց դիրքորոշումը՝ վարչական մարմնի կողմից տվյալ գործի համանման

փաստական հանգամանքներում անձանց իրավունքների համակարգային և էական խախտումների և գործի քննության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող, սակայն դատավարության մասնակիցների կողմից չներկայացված հարցերի վերաբերյալ:

2. Վարչարարության բողոքարկման համատեքստում ներդրվելիք՝ մեր կողմից առաջարկվող մոդելն իր իրավական բնույթով պետք է լինի «դատարանի ընկերոջ ինստիտուտի թույլատվական մոդել», ինչպիսի պայմաններում *amicus* դիրքորոշում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտներին դիրքորոշում ներկայացնելու հնարավորություն ընձեռելով միայն իրենց միջնորդության հիման վրա՝ դատարանի թույլտվությամբ, կամ դատարանի նախաձեռնությամբ, իսկ որպես վարչական դատավարությունում *amicus curiae* կարգավիճակով դիրքորոշումներ ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտներ առաջարկվում է դիտարկել հասարակական կազմակերպություններին, սակայն միայն այն դեպքում, երբ վերջիններս ունեն տվյալ գործի շրջանակում շոշափվող «հանրային շահի պաշտպանությամբ իրական շահագրգռվածություն», ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանին և իրավաբան գիտնականներին:

3. Հաշվի առնելով քննարկվող ինստիտուտի վերաբերյալ ձևավորված պատշաճ իրավական ավանդույթների բացակայությունը, նպատակահարմար և անհրաժեշտ է համարվում այդ ինստիտուտի՝ վարչական դատավարությունում փուլային ներդրումը՝ այն սկզբնական շրջանում ներդնելով միայն Վճռաբեկ դատարանում, իսկ հետագայում դրա գործողությունն աստիճանաբար, ինստիտուտի՝ գործնականում արդյունավետության հարցում հավաստիանալուց հետո, դրա գործողությունը տարածելով նաև Վարչական դատարանում գործի քննության փուլի վրա:

¹ Տե՛ս, օրինակ, ECtHR, Practical Guide on Admissibility Criteria, 14 (2014), հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.echr.coe.int/Documents/Admissibility_guide_ENG.pdf, Françoise Hampson, Claudia Martin, Frans Viljoen, Inaccessible apexes: Comparing access to regional human rights courts and commissions in Europe, the Americas, and Africa, International Journal of Constitutional Law, Volume 16, Issue 1, January 2018, Pages 161–186, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://academic.oup.com/icon/article/16/1/161/4995556>, 16.02.2026թ. դրությամբ:

² Տե՛ս, օրինակ, Руководство ЮНЕСКО по участию как «Amicus Curiae» по делам о свободе выражения мнений, CI-2021/FEJ/G-1, էջ 2, հասանելի է՝ https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000379020_rus/PDF/379020rus.pdf.multi, 16.02.2026թ. դրությամբ:

³ Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, Փաստահավաք այց Հայաստան, Եվրոպայի խորհրդի Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների (ՄՈԿԿ) համաժողով, հասանելի է՝ <https://rm.coe.int/report-visit-of-the-conference-of-ingos-to-armenia-2019-ar/16809f00ae> էջ 7, 16.02.2026թ. դրությամբ:

⁴ Տե՛ս, օրինակ, Alexandru TĂNASE, George PAPUASHVILI, Amicus Curiae Concept In Modern Justice, Concept paper

for the Constitutional Court of Ukraine, 10 June 2022, էջ 6, <https://www.osce.org/files/f/documents/2/6/523437.pdf>, 16.02.2026թ. դրությամբ:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 14:

⁶ Տե՛ս T. Schilling, ‘Amicus Curiae: European Court of Human Rights (ECtHR)’ (MPEiPro, 2019):

⁷ Տե՛ս, օրինակ, Public Law Project, Third Party Interventions in Judicial Review: An Action Research Study (PLP 2001); Public Law Project, Third Party Interventions – A Practical Guide (PLP 2008).

⁸ Տե՛ս Paul M Collins Jr, Pamela C Corley and Jesse Hamner, ‘The Influence of Amicus Curiae Briefs on US Supreme Court Opinion Content’ (2015) 49 Law & Society Review 917:

⁹ Տե՛ս О. Н. Кряжкова, ‘Право быть услышанным: меморандумы amicus curiae в российском Конституционном Суде’ (2018) Сравнительное конституционное обозрение, էջ 17, <https://academia.ilpp.ru/wp-content/uploads/2021/10/SKO-5-126-2018-087-105-Kryazhkova.pdf>, 16.02.2026թ. դրությամբ:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹ Տե՛ս А.Р. Султанов, ‘Amicus curiae – друг суда и российское судопроизводство’ (2011) 6 Арбитражный и гражданский процесс, էջ 16:

¹² Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը Սահմանադրական դատարանի մասին, ընդունված է 17.01.2018թ., ՀՀՊՏ 2018.01.31/7(1365) Հոդ. 74:

¹³ Առավել մանրամասն տե՛ս <https://armenpress.am/arm/news/924039/echr-president-praises-armenian-ombudsmanE28099s-innovations-and-cooperation-with-constitutional-court.html>, <https://www.osce.org/files/f/documents/2/6/523437.pdf>, 16.02.2026թ. դրությամբ:

¹⁴ Տե՛ս А.Р. Султанов, նշված աշխատությունը, էջեր 9-10:

¹⁵ Տե՛ս, օրինակ, Paul M. Collins, Jr., Pamela C. Corley & Jesse Hamner, The Influence of Amicus Curiae Briefs on U.S. Supreme Court Opinion Content, 49 L. & SOC’Y REV. 917 (2015).

¹⁶ Տե՛ս, օրինակ, Alexandru Tănase, George Papuashvili, նշված աշխատությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Collins P. M. Jr., Corley P. C., Hamner J., The Influence of Amicus Curiae Briefs on U.S. Supreme Court Opinion Content, Law & Society Review, 2015, Volume 49, Issue 4, հերթական համարը 49, էջեր 917–942:
2. Conference of INGOs of the Council of Europe, Report on the Visit of the Conference of INGOs to Armenia (2019), <https://rm.coe.int/report-visit-of-the-conference-of-ingos-to-armenia-2019-ar/16809f00ae>, վերջին այցելությունը՝ 16.02.2026թ.:
3. European Court of Human Rights (ECtHR), Practical Guide on Admissibility Criteria, Strasbourg, 2014, էջ 14, http://www.echr.coe.int/Documents/Admissibility_guide_ENG.pdf, վերջին այցելությունը՝ 29.04.2024:
4. Hampson F., Martin C., Viljoen F., Inaccessible Apexes: Comparing Access to Regional Human Rights Courts and Commissions in Europe, the Americas, and Africa, International Journal of Constitutional Law, 2018, Volume 16, Issue 1, էջեր 161–186, <https://academic.oup.com/icon/article/16/1/161/4995556>, վերջին այցելությունը՝ 16.02.2026թ.:
5. О. Н. Кряжкова, Право быть услышанным: меморандумы amicus curiae в российском Конституционном Суде, Сравнительное конституционное обозрение, 2018, № 5 (126), Москва, էջեր 87–105, <https://academia.ilpp.ru/wp-content/uploads/2021/10/SKO-5-126-2018-087-105-Kryazhkova.pdf>, վերջին այցելությունը՝ 16.02.2026թ.:
6. Public Law Project, Third Party Interventions in Judicial Review: An Action Research Study, London, 2001:
7. Public Law Project, Third Party Interventions – A Practical Guide, London, 2008:
8. Schilling T., Amicus Curiae: European Court of Human Rights (ECtHR), Max Planck Encyclopedia of International Procedural Law (MPEiPro), Oxford, 2019:
9. А.Р. Султанов, Amicus curiae – друг суда и российское судопроизводство, Арбитражный и гражданский процесс, 2011, № 6, Москва, էջեր 9–16:
10. Tănase A., Papuashvili G., Amicus Curiae Concept in Modern Justice, Concept Paper for the Constitutional Court of Ukraine, Kyiv, 10 June 2022, էջեր 6, 14, <https://www.osce.org/files/f/documents/2/6/523437.pdf>, վերջին այցելությունը՝ 16.02.2026:
11. ЮНЕСКО, Руководство по участию как «Amicus Curiae» по делам о свободе выражения мнений, CI-2021/FEJ/G-1, Париж, 2021, էջ 2, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000379020_rus/PDF/379020rus.pdf.multi, վերջին այցելությունը՝ 16.02.2026թ.:
12. Armenpress, ECHR President Praises Armenian Ombudsman’s Innovations and Cooperation with Constitutional Court, <https://armenpress.am/arm/news/924039/echr-president-praises-armenian-ombudsmanE28099s-innovations-and-cooperation-with-constitutional-court.html>, վերջին այցելությունը՝ 16.02.2026թ.:

References

1. О. Н. Кряжкова, Pravo byt’ uslyshannym: memorandumumy amicus curiae v rossijskom Konstitucionnom Sude, Sravnitel’noe konstitucionnoe obozrenie, 2018, № 5 (126), Moskva, էջեր 87–105, <https://academia.ilpp.ru/wp-content/uploads/2021/10/SKO-5-126-2018-087-105-Kryazhkova.pdf>:
2. A.R. Sultanov, Amicus curiae – друг суда i rossijskoe sudoproizvodstvo, Arbitrazhnyj i grazhdanskij process, 2011, № 6, Moskva:

3. JuNESKO, Rukovodstvo po uclastiju kak .Amicus Curiaeti po delam o svobode vyrazhenija mnenij, CI-2021/FEJ/G-1, Parizh, 2021, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000379020_rus/PDF/379020rus.pdf.mmult:

Элина Гегамян

Преподаватель кафедры Конституционного
права юридического факультета ЕГУ
руководитель юридической службы ЗАО “ТАУЕР ИНТЕРНЕШНЛ КОНСАЛТАНТС”

РЕЗЮМЕ

Институт „друга суда“ в административном судопроизводстве в контексте защиты публичного интереса

Статья посвящена исследованию института „друга суда“ (amicus curiae) в административном судопроизводстве с особым акцентом на защиту публичных интересов. Анализ проводится в контексте переоценки роли суда в административной юстиции, подчеркивая эволюцию функций суда от разрешения индивидуальных споров к обеспечению эффективного противовеса системным незаконным действиям исполнительной власти. В статье показывается, что традиционные механизмы административного процесса недостаточны для обеспечения полноценной защиты публичного интереса, что обосновывает необходимость внедрения комплексного институционального инструментария.

Автор утверждает, что институт amicus curiae не должен рассматриваться лишь как процедурный инструмент, поддерживающий мотивированность судебных решений, а как самостоятельный механизм обеспечения защиты публичных интересов в административном процессе. На основе теоретических концепций, сравнительного международного опыта и функционального анализа выделяются основные модели участия amicus и предлагается внедрить допустимую модель в административное судопроизводство Республики Армения. На первом этапе она будет применяться исключительно в Кассационном суде с четко определенными условиями подачи, включая обстоятельства, при которых суд может принимать amicus-позиции.

Ключевые слова: административное судопроизводство, публичный интерес, amicus curiae, разделение властей, системные нарушения прав, кассационный суд, судебная роль.

Elina Geghamyan

Lecturer at the Faculty of Law, Yerevan State University (Chair of Constitutional Law)
Head of the Legal Department, “TOWER INTERNATIONAL CONSULTANTS” CJSC

SUMMARY

The institute of amicus curiae in administrative proceedings within the framework of public interest protection

This article investigates the institution of the “friend of the court” (amicus curiae) in administrative proceedings, with a particular focus on the protection of public interest. It situates the analysis within the broader context of re-evaluating the role of courts in administrative justice, emphasizing the evolving function of courts from resolving individual disputes to providing an effective counterbalance against systemic unlawful actions by the executive branch. The study demonstrates that conventional mechanisms in administrative proceedings are insufficient for achieving effective public interest protection, highlighting the need for a comprehensive institutional toolkit.

The author argues that the amicus curiae should not be understood merely as a procedural instrument supporting the reasoning of judicial decisions, but as a substantive mechanism ensuring the safeguarding of public interest within administrative litigation. Drawing upon theoretical frameworks, comparative international practice, and functional analysis, the article identifies principal models of amicus participation and proposes adopting a permissive model in the Republic of Armenia. Initially, this model would operate exclusively within the Court of Cassation, with clearly defined conditions for submission, including circumstances under which courts may admit amicus briefs.

Key words: Administrative Proceedings, Public Interest, Amicus Curiae, Separation of Powers, Systemic Rights Violations, Court of Cassation, Judicial Role.

Բնագիրը ներկայացվել է 16.02.2026թ.

Ընդունվել է տպագրության 27.03.26թ.

ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի հայցորդ

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ. ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հնդվածը քննում է արդար դատաքննության իրավունքի պատմաիրավական էվոլյուցիան՝ Միջագետքի հնագույն օրենսգրքերից մինչև ժամանակակից միջազգային ստանդարտները: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս հիմնարար իրավունքը ձևավորվել է բազմադարյան պատմական փորձի, սոցիալական պայքարի և իրավական մտքի զարգացման արդյունքում: Դիտարկվում են Ուր-Նամմուի և Համուրաբիի օրենսգրքերը, հունական և հռոմեական դատական համակարգերը, միջնադարյան ինկվիզիցիոն դատավարությունները: Հատուկ ուշադրություն է դարձվում Լուսավորության դարաշրջանի ազդեցությանը՝ Բեկկարիայի, Մոնտեսքյոյի և Վոլտերի գաղափարներին, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մարդու իրավունքների միջազգայնացմանը, ինչպես նաև «անհրաժեշտության» անվան տակ արդար դատաքննության սկզբունքների պաշտպանության ժամանակակից մարտահրավերներին, ներառյալ ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում:

Հիմնարարներ - Արդար դատաքննություն, մարդու իրավունքներ, պատմաիրավական էվոլյուցիա, պաշտպանության իրավունք, Միջագետքի իրավահամակարգ, իրավունքի զարգացում, իրավական փիլիսոփայություն, միջազգային իրավունք, դատավարական երաշխիքներ, իրավունքի գերակայություն:

Ներածություն

Իրավունքի պատմական զարգացման ուսումնասիրությունը երբեմն դիտարկվում է որպես ածանցյալ գործողություն, որը չի կրում առանձնահատուկ կարևորություն օրենքի կիրառման և իրավունքների իրագործման հարցում: Նմանատիպ մոտեցումը, սակայն, ինչպես կհիմնավորվի ստորև, կզրկի մեզ հնարավորությունից համապարփակ կերպով մոտենալ իրավունքի մեկնաբանմանը, կիրառմանը և դրանցով պայմանավորված արդիական խնդիրների հասցեագրմանը:

Արդար դատաքննության իրավունքը, որը ներկայում ընկալվում է որպես մարդու իրավունքների միջազգային և ներպետական պաշտպանության առանցքային հենք, ծնվել է մարդկության բազմադարյան պատմական փորձի, իրավական մտքի աստիճանական էվոլյուցիայի և սոցիալ-քաղաքական պայքարի միջավայրում: Պատմաիրավական վերլուծությունը հնարավորություն է տալիս ոչ միայն վերակառուցել արդար դատաքննության իրավունքի ձևավորման հիմնական փուլերը, այլև բացահայտել դրա ժամանակակից բովանդակության արժեքային հիմքերը և դրանց հետևում կանգնած գաղափարական տրամաբանությունը՝ ստեղծելով այս հիմնարար իրավունքի ամբողջական պատկերը:

Ավելին, պատմական վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչու է արդար դատաքննության իրավունքը ժամանակակից իրավական համակարգերում ձեռք բերել առանձնահատուկ գերակայություն: Դարեր շարունակ դատական կամայական

ությունը, անօրինական կալանքները, խոշտանգումների կիրառումը ապացույցներ ձեռք բերելու նպատակով, փակ և գաղտնի դատավարությունները ընկալվել են որպես սովորական, երբեմն էլ՝ իրավական համակարգի «իրավաչափ» բաղադրիչներ: Միայն դարերի փորձը բացահայտեց այդ գործողությունների դաժանությունը և դրանց անհամատեղելիությունը անձի արդարության փիլիսոփայության, անձանց արժանապատվության և հասարակության կայուն զարգացման հայեցակարգերի հետ:

Անգլիական «Star Chamber»-ի գաղտնի դատավարությունները, ֆրանսիական «lettres de cachet»-ի ինստիտուտը, ինկվիզիցիայի դատավարությունները դարձան այն պատմական դրվագներից, որոնք հստակ ցույց տվեցին՝ ինչպիսի ավերիչ հետևանքներ ունեն արդարադատության համակարգի սանձազերծումները (դատական իշխանության ազատումը ցանկացած սահմանափակումից) և ինչու է անհրաժեշտ դատավարական երաշխիքների հստակ համակարգ:

Պատմական վերլուծությունը միաժամանակ թույլ է տալիս հասկանալ արդար դատաքննության իրավունքի առանձին բաղադրիչների աստիճանական ձևավորումը: Հավասարների (equals) կողմից դատվելու գաղափարը, որն իր նախնական գրավոր ձևակերպումը ստացավ անգլո-սաքսոն իրավական ավանդույթում և ամրագրվեց 1215 թ. Մագնա Կարտայի մեջ՝ արտացոլում էր հասարակության պահանջը, որ անձը չդատվի իր սոցիալական դիրքով ակնհայտ բարձր մարմնի կողմից: Այս

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

սկզբունքը հետագայում վերաճեց ժյուրիի ինստիտուտի՝ դառնալով քաղաքացիական հասարակության մասնակցության կարևոր ձև դատական իշխանության իրականացմանը:

Նույն կերպ, դատական գործընթացի հրապարակայնության սկզբունքը ևս ունի երկարատև պատմական գենեզիս: Միջնադարյան Եվրոպայում, հատկապես քաղաքական կամ «հերետիկոսության» գործերով, դատավարությունները հաճախ փակ էին: Լուսավորության դարաշրջանի մտածողները՝ Մոնտեսքյուն, Վոլտերը, Բեկկարիան, պահանջում էին դատավարությունների թափանցիկություն այն դիտարկելով իշխանության կամայականության դեմ պայքարի արդյունավետ միջոց: Ջերեմի Բենթամի «հանրայնացման սկզբունքը» (publicity principle)-ը հիմնավորում էր այն միտքը, որ հրապարակայնությունը «դատարանի հոգին» է և դրա լավագույն անկողմնակալության երաշխիքը: Ժամանակակից ստանդարտներում դատավարության հրապարակայնությունը արդեն ընկալվում է որպես արդար դատաքննության հիմնական տարր, թեև պատմական փորձը ցույց է տվել նաև դրա սահմանների անհրաժեշտությունը՝ անչափահասների գործերի, պետական գաղտնիքի կամ անձնական կյանքի պաշտպանության պահանջների դեպքում:

Պաշտպանության իրավունքի ինստիտուտը ևս տարիների զարգացման արդյունք է: Հռոմեական իրավունքում արդեն առկա էր պաշտպանի (patronus) ինստիտուտը, սակայն միջնադարյան Եվրոպայում մեղադրյալն հաճախ զրկված էր իրավաբանական մասնագիտական օգնությունից, մասնավորապես եթե գործը վերաբերում էր պետական կամ կրոնական «հանցագործությունների»: Միայն 20-րդ դարում պաշտպանության իրավունքը ստացավ իր արդի ձևակերպումը ներառելով նաև անվճար իրավաբանական օգնության ինստիտուտը: Այս զարգացման նշանակալից հղումներից է Միացյալ Նահանգների Գերագույն դատարանի Gideon v. Wainwright (1963)՝ վճիռը, որով անվճար պաշտպանի նշանակումը ճանաչվեց որպես արդար դատաքննության անբաժանելի մաս:

Պատմական հայացքը կարևոր է նաև արդար դատաքննության իրավունքի սահմանափակումների և դրանց բացառությունների ծագումն ու տրամաբանությունը հասկանալու տեսանկյունից: Անհրաժեշտության և համաչափության սկզբունքները, որոնք այսօր գործում են արտակարգ իրավիճակներում, ձևավորվել են հենց պատմական փորձի հիման վրա: Առաջին համաշխարհային պատերազմի և այլ լայնամասշտաբ ճգնաժամերի ժամանակ բազմաթիվ երկրներ ժամանակավորապես սահմանափակեցին դատավարական երաշխիքները՝ հղում անելով անվտանգության պահանջներին: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո,

Նյուրնբերգյան⁶ և Տոկիոյի⁷ դատավարություններում անգամ ընդգծվեց, որ նույնիսկ պատերազմի հանցագործների դատաքննությունը չի կարող դուրս մնալ արդար դատաքննության նվազագույն չափանիշներից:

Պատմության էջերում առկա են նաև «անհրաժեշտության» անվան տակ բաց թողնված արդար դատաքննության իրավունքի խախտումների բազմաթիվ օրինակներ: Ֆրանսիական հեղափոխության հաջորդող տարիները, որոնք անվանվեցին Reign of Terror հայտնի են «հեղափոխության թշնամիների» նկատմամբ հեղափոխական տրիբունալների և արագացված վարույթների կիրառմամբ, որոնցում՝ «անհրաժեշտությամբ պայմանավորված» չէին գործում դատավարական երաշխիքները: Իրականությունը սակայն այն էր, որ այդ տրիբունալները կիրառվում էին քաղաքական ընդդիմությանը վերացնելու նպատակով:

ՄԱԿ-ի հակահարեկչական գլոբալ ռազմավարության հավելվածի 2(b) կետի համաձայն պետությունները պարտավորվում են հարգել մարդու հիմնարար իրավունքները հակահարեկչական գործողությունների ընթացքում:

ՄԱԿ-ի ահաբեկչության դեմ պայքարում մարդու իրավունքների հարցերով հատուկ զեկուցողը շարունակաբար հրապարակում է զեկույցներ այս ոլորտում հիմնարար իրավունքների պաշտպանության ուղեհիշներով:

Այսպիսով պատմությունը հստակ ցույց է տալիս, որ մարդու իրավունքների ոլորտում ձեռք բերված առաջընթացը երբեք անշրջելի չէ: Սահմանադրականորեն ամրագրված երաշխիքները կարող են գործնականում չեզոքացվել, եթե քայքայվում են ինստիտուտները, որոնք կոչված են ապահովել դրանք:

Այս ամենը միտված է մեկ եզրակացության՝ արդար դատաքննության իրավունքի պատմաիրավական էվոլյուցիայի ուսումնասիրությունը պարտադիր է ոչ միայն ակադեմիական, այլ նաև պրակտիկ տեսանկյունից: Այն օգնում է իրավաբաններին, դատավորներին, օրենսդիրներին և քաղաքացիական հասարակությանը գիտակցել, որ արդար դատաքննության ինստիտուտը հեշտությամբ ձեռք բերված և հավերժ ապահովված արժեք չէ: Այն պետք է մշտապես պաշտպանել և զարգացնել՝ հենվելով անցյալի դասերի վրա և զգոն մնալով այն վտանգների նկատմամբ, որոնք սպառնում են դատական իշխանության անկախությանը և դատավարության արդարությանը:

Հետագոտության մեթոդաբանություն
Ուսումնասիրությունը հիմնված է պատմաիրավական, համեմատական և փիլիսոփայական վերլուծության մեթոդների համադրության վրա: Կիրառվել է քրոնոլոգիական մոտեցում՝ արդար

www.aradaradatumjournal.com

դատաբնության իրավունքի էվոլյուցիան հետազոտելու համար՝ Միջագետքի հնագույն օրենսգրքերից մինչև ժամանակակից միջագային ստանդարտները: Օգտագործվել են պատմական փաստաթղթերի, իրավական կոդեքսների, փիլիսոփայական աշխատությունների և միջագային կոնվենցիաների վերլուծություն՝ բացահայտելու արդար դատաբնության հայեցակարգի աստիճանական ձևավորման և զարգացման առանցքային փուլերը: Հետազոտությունը ներառում է նաև համեմատական իրավական վերլուծություն՝ տարբեր իրավական ավանդույթների և ինստիտուտների ներգործության ուսումնասիրության համար, ինչպես նաև քննադատական մոտեցում պատմական փորձի գնահատման նկատմամբ՝ ընդգծելով ինչպես առաջընթացները, այնպես էլ հետընթացները արդարադատության ոլորտում:

Հետազոտության արդյունքեր և քննարկում

Հնագույն աշխարհի (Մ.թ.Ա 2-րդ 3-րդ հազարամյակ). Վեճերի լուծման ինստիտուտների ձևավորումը

Մարդկության վաղ պատմության ընթացքում արդարությունը հաճախ նույնացվում էր ուժի կիրառման հետ: Առկա չէին սահմանված հստակ նորմեր կամ վեճերի լուծման անաչառ մեխանիզմներ: Վրեժխնդրությունը, արյան վրիժառությունը և «պատվախին» սպանությունները ընկալվում էին որպես տարածայնությունների լուծման ընդունված միջոց: Այլ կերպ ասած գործում էր «ջունգլիների օրենքը»: Սակայն բռնությունը անխուսափելիորեն ծնում է նոր բռնություն:

Այս նախադատարանական իրականությունն էր, որ դարձավ առաջին պետական իրավակարգերի ձևավորման խթան: Քաղաքացիական բնակչության աճը, տնտեսական փոխանակումների բարդացումը և հանրային անվտանգության անհրաժեշտությունը պահանջում էին ստեղծել վեճերի լուծման կանխատեսելի ու ինստիտուցիոնալացված մեխանիզմներ: Դժվար է միանշանակ մատնանշել երբ է ձևավորվել անկողմնակալ երրորդ անձի կամ անձանց միջոցով վեճերի լուծման մշակույթը, սակայն մեզ հասած հնագույն ապացույցները գալիս են դեռևս Միջագետքի (Mesopotamia) քաղաքակրթություններից:

Մ.թ.ա. III հազարամյակում Շումերական Ուրի արքա Ուր-Նամմուն ստեղծեց մարդկության պահպանված հնագույն օրենսգիրքը: Արդարադատությունը այս ժամանակաշրջանում արմատականացված էր աստվածային հավատքի մեջ: Ուր-Նամմունի օրենսգիրքը սկսվում էր աստվածային մանդատի ընդգծմամբ: Օրենքները, ըստ արքայի տեսակետի, բխում էին աստվածների կամքից, իսկ թագավորը նրանց ընտրած գործիքն էր՝ երկրում արդարություն հաստատելու համար: Արդարությունը, հետևաբար, ստանում էր ոչ միայն աշխարհիկ,

այլև կրոնական լեգիտիմություն, ինչը նպաստում էր օրենքների ընդունելությանը հասարակության կողմից:

Միջագետքի քաղաքակրթություններին է վերագրվում նաև առաջին «դատարանների» հիմնադրումը: Իհարկե այդ իստիտուտները դեռևս ամբողջությամբ չէին նմանվում ժամանակակից դատարաններին սակայն արդեն իսկ մեկնարկել էին ժամանակակից դատական գործիքների ձևավորումը՝ ինչպիսիք են օրինակ վկայի ինստիտուտը:

Այդ ինստիտուտների դերակատարները խիստ բազմազան էին: Վեճերը լուծվում էին արքաների, պատրիարխների կամ մասնագիտացված դատավորների կողմից¹⁰: Հարկ է նշել, որ այս ժամանակահատվածում դատավոր եզրույթը դեռևս սերտորեն կապված էր Աստվածների հետ և երբեմն «դատավոր» հասկացությունը կիրառվում էր հենց աստվածային դատաստանի իմաստով այլ ոչ թե այն հայեցակարգով որով տվյալ տերմինը կիրառվում է ներկայիս ժամանակներում¹¹: Վելին, այս ժամանակաշրջանում «դատարան» հասկացությունը չէր խորհրդանշում մշտական գործող կառույց այլ վերաբերում էր վեճերի լուծման գործընթացը ղեկավարող անձի կամ անձանց (արքան, ավագները, ժամանակավոր ձևավորված խորհուրդները և այլն)¹²:

Հին Միջագետքում վկաների ցուցմունքները համարվում էին ամենահավաստի ապացույցը՝ գրանցվելով ինչպես մասնավոր, այնպես էլ դատական փաստաթղթերում:

Վերոգրյալը հավաստվում է նաև Ուր-Նամմունի օրենսգրքում վկաների ցուցմունքների վերաբերյալ առկա կարգավորումներով: Այս օրենսգիրքը առաջին անգամ գրավոր սահմանում էր կեղծ վկայություն տալու հետևանքները՝ նախատեսելով տուգանք 16 արծաթյա մետաղադրամի չափով¹³:

Միջագետքի իրավական միտքը հասավ իր գագաթնակետին Համուրաբիի օրենսգրքում (մոտ 1754 թ. մ.թ.ա.): Հատկանշական է, որ հենց այս կտավի վրա է ամրագրվել «արդարության տեսանկյունից» պահանջը¹⁴:

Օրենսգիրքը քանդակված էր բազալտե սյան վրա՝ հրապարակային ցուցադրման համար: Սա նշանավորում էր իրավունքի հրապարակայնացման սկզբունքի ձևավորումը. օրենքը պետք է լինի տեսանելի, հասանելի և բոլորի համար պարտադիր: Սյան վերին մասում պատկերված էր Համուրաբին, որը ստանում է օրենքի իշխանությունը արդարության աստված Շամաշից: Ինչպես Ուր Նամունի ժամանակաշրջանում, Համուրաբիի օրոք նույնպես, աստվածային լեգիտիմությունն ծառայում էր որպես իրավունքի գերակայության հնագույն հիմնավորող մեխանիզմ¹⁵:

Օրենսգիրքը ներառում էր մանրամասն դրույթներ քրեական, պայմանագրային, ընտանեկան և

www.ardaradutyjournal.com

աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ՝ ստեղծելով համեմատաբար ամբողջական իրավական դաշտ: Դրան կից, Համուրաբին կառուցեց նաև ձևավորված դատական համակարգ՝ հրապարակային, բանավոր դատավարություններով և սպացույցների բարդ կարգավորմամբ¹⁶:

Համուրաբիի օրենսգիրքն առանձնանում է դատավարական կարգավորման մանրամասնությամբ: Մեղադրանքները պետք է լինենին հստակ, իսկ սպացույցները՝ կոնկրետ: Կասկածը բավարար չէ, իսկ հանցագործը «պետք է բռնվի գործողության մեջ»¹⁷: Գողությունը չէր կարող սպացուցված համարվել, եթե սպրանքը չէր գտնվել տվյալ անձի մոտ:

Սուտ մեղադրանքը և սուտ վկայությունը պատժվում էին նույն պատժով, որն անհրաժեշտ կլիներ կիրառել մեղադրյալի նկատմամբ:

Դատավարությունները հրապարակային էին: Քարտազիրները արձանագրում էին յուրաքանչյուր գործողություն. դատական որոշումները գրվում էին, ինչը թույլ էր տալիս որոշակի նախադեպային ազդեցություն: Վկայական ցուցմունքները և աստվածների անունով երդումները հանդիսանում էին սպացույցների հիմքը¹⁸:

Մարդկային գիտելիքի սահմաններում չգտնվող հարցերը լուծվում էին «ջրային փորձության» միջոցով: Թեպետ այս մեխանիզմը հեռու է արդար քննության մասին ժամանակակից պատկերացումներից, այն այնուամենայնիվ ներկայացնում է սպացույցների բաշխման վաղ ձև՝ կիրառվող միայն այն ժամանակ, երբ այլ միջոցներ սպառված էին:

Միանշանակ է, որ արդեն Միջագետքում ձևավորվում էր դատավորի մասնագիտությունը: Օրինակ Համուրաբիի ժամանակաշրջանում (Ուր Նամույից մոտ 300 տարի հետո) դատավորները անգամ անցնում էին վերապատրաստումներ այլ քաղաքներում որտեղ իրավունքի ոլորտը համարվում էր առավել զարգացած¹⁹:

Համուրաբին նաև սահմանեց դատավորների համար խիստ պատասխանատվություն: Եթե դատավորը գրում էր որոշում, որը հետագայում սխալ էր ճանաչվում իր մեղքով, նա ստիպված էր վճարել մեծ տուգանք և ընդմիջտ գրկվում էր դատավոր լինելու իրավունքից: Դատական սխալի նկատմամբ նման անողորմ մոտեցումը ցույց է տալիս, որ անգամ հին Բաբելոնում դատավորի անկախությունն ուղեկցվում էր բարձր հաշվետվողականությամբ²⁰:

Դատարանները գործում էին թագավորի անվան ներքո, իսկ բողոքարկումը թագավորին հնարավոր էր, թեև ոչ ֆորմալացված ընթացակարգով: Դատական գործընթացը ղեկավարում էին և՛ դատավորները, և՛ «ավագների խորհուրդը», որոնք համատեղ որոշումներ էին կայացնում²¹:

Սումերական և բաբելոնյան դատական հա-

մակարգերը առաջին անգամ ձևավորեցին իրավունքի երեք առանցքային արժեքները՝ գրավոր օրենքի գերակայություն, դատական իշխանության ինստիտուցիոնալացում, սպացուցողական ընթացակարգերի ձևավորում: Նրանք նաև ձևավորեցին դատավորներին առաջադրվող պահանջները՝ պատրաստվածության և կոմպետենտության առումով:

Այս զարգացումները արտացոլում են դատական համակարգի և արդար դատաքննության հայեցակարգի ձևավորման ամենավաղ դրսևորումները: Թեև համակարգերը հեռու էին ժամանակակից ժողովրդավարական չափանիշներից, դրանցում արդեն առկա էին օրենքի հրապարակայնության, դատավորի անաչառության, դատավարության հրապարակայնության, սպացույցների քննության, և որոշ դեպքերում՝ բողոքարկման սկզբունքները:

Ի վերջո, Միջագետքի դատարանները մարդկության կողմից կատարված առաջին գիտակցված քայլն են դեպի արդարության ինստիտուցիոնալ ձևավորումը:

Հին աշխարհ. Իրավական փիլիսոփայության սկզբնաղբյուրները

Դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Միջագետքը դրեց ժամանակից արդարադատության հիմքը, ուղորդելով մարդկության պատմաիրավական զարգացումը: Միջագետքի քաղաքակրթություններից մինչև հին աշխարհի հասարակությունների միջև, ինչպիսիք են Աքեմենյան Պարսկաստանում, հին Հունաստանը, Հռոմը, հին Հայաստանը, անցել է մոտ մեկ հազարամյակ: Այս երկարատև ժամանակահատվածը ուղեկցվել է իրավական մտածողության և ինստիտուտների էական և բազմաշերտ (distinct) զարգացմամբ:

Հասնելով հին աշխարհի հասարակություններին մենք ակնհայտես ենք դառնում արդարադատության նոր որակական փուլի, որտեղ օրենքը դառնում է ավելի բարդ փիլիսոփայական, բարոյական և ինստիտուցիոնալ վերլուծության առարկա: Այստեղ ձևավորվում են ավելի զարգացած և բարդ օրենքներ և ինստիտուտներ, որոնք արտացոլում են արդարության մասին ավելի խորը պատկերացումներ:

Պատմության հենց այս ժամանակաշրջանում ձևավորվեցին արդարադատության այն տարրերը, որոնք հետագայում դարձան ընդհանուր եվրոպական իրավական ավանդույթի հիմնասյունը: Այստեղ արդարադատության գաղափարը առաջին անգամ դուրս եկավ գուտ կրոնավարչական կամ թագավորա-աստվածային առաքելությունից և սկսեց ընկալվել որպես քաղաքական, քաղաքացիական և հանրային կյանքի հիմնարար պայման:

Հին աշխարհի այս փուլում ձևավորվեցին նաև անձանց իրավունքների և ազատությունների վե-

րաբերյալ հիմնադրույթները:

Կյուրոս Մեծը (մ.թ.ա. 600-530 թթ.), Աքեմենյան կայսրության հիմնադիրը, ներկայացնում է հին աշխարհի իրավական և քաղաքական մտածողության մեջ հեղափոխական փուլ: Նրա կառավարման ժամանակաշրջանը նշանավորվեց ոչ միայն ռազմական նվաճումներով, այլև արդարության, հանդուրժողականության և մարդու արժանապատվության նկատմամբ անսովոր մոտեցմամբ, որը տարբերվում էր նախորդ կայսրությունների բռնությանը բնութագրվող քաղաքականությունից:

Հենց Կյուրոս Մեծի օրոք գրվեց այն փաստաթուղթը, համարվում է մարդկային պատմության մեջ առաջին մարդու իրավունքների հռչակագիրը՝ Կյուրոսի հռչակագիրը:

Այս հնագույն փաստաթուղթը, որը գրված է աքքադերեն լեզվով և փորագրված է կավե գլանի վրա, պարունակում է սկզբունքներ, որոնք զարմանալիորեն արդիական են՝ հանդուրժողականություն, տեղական մշակույթների նկատմամբ հարգանք և կրոնական ազատություն:

Թեև այս փաստաթուղթը երբեմն չափազանց շատ է ռոմանտիզացվում, և դրան վերագրվում են կարգավորումներ որոնք դուրս են այս փաստաթղթի իրական մեկնաբանությունից, այն այնուամենայնիվ չափազանց նշանակալից ձեռքբերում է մարդու իրավունքների պատմաիրավական զարգացման ոլորտում:

Գլանի տեքստում Կյուրոսը հայտարարում է, որ Բաբելոն մուտք է գործել «խաղաղությամբ» և չի թույլատրել, որ որևէ մեկը «սարսափեցնի ժողովրդին»: Նա ներկայացնում է իրեն որպես արդար կառավարիչ և գրառումներում շեշտում է, որ վերացրել է նախորդ արքայի կողմից բնակչության վրա դրված ծանր պարտադրանքները: Կյուրոսը նաև տեղեկացնում է, որ վերականգնել է վտարված կամ տեղահանված ժողովուրդներին իրենց քաղաքներում՝ վերադարձնելով նրանց աստվածների արձանները և վերակառուցելով տաճարները: Այս ուղղությամբ գլանը փաստում է Կյուրոսի օրոք կրոնական պաշտամունքի ազատության մասին²²:

Կյուրոսի թեև ամբողջությամբ չէր վերացրել ստրկությունը իր կայսրությունում, նա այնուամենայնիվ Բաբելոնը գրավելուց ազատել էր այնտեղ գտնվող²³ հրայներին յոթանասուն ամյա ստրկությունից: Հենց այս գործողությունն է ամրագրել Կյուրոսի դերը Հին Կտակարանում:

Կյուրոսի գլանի պատմական և իրավական նշանակությունը այնքան մեծ է, որ դրա պատճենները պահվում են Միացյալ Ազգերի Կազմակերպությունում: ՄԱԿ-ը 1971 թվականին պաշտոնապես ճանաչեց գլանը որպես հին աշխարհի մարդու իրավունքների առաջին հռչակագիր:

Աքեմենյան Պարսկաստանում արդարադատության համակարգը զարգացավ մի ուղղությամբ,

որը միավորում էր կենտրոնացված վերահսկողությունն ու տեղական իշխանությունների գործունեության նկատմամբ խիստ հաշվետվողականությունը²⁴:

Պարսիկ պաշտոնյաները, այդ թվում «դատաբարա»-ները, վերահսկում էին գործընթացը և ապահովում կայսրական կարգը: Արքան մնում էր արդարադատության գերագույն երաշխավորը, իսկ աստրապները իրականացնում էին դատական լիազորություններ նահանգների մակարդակում: Այս համակարգում գործում էին նաև հատուկ հանձնակատարներ, որոնց պարտականությունն էր վերահսկել պաշտոնյաների գործունեությունը և կանխել կամայականությունը:

Արդարադատության կիրառումը ընկալվում էր որպես աստվածային կարգի պահպանում, և այդ պատճառով դատավորի բարոյական որակները դիտվում էին ոչ պակաս կարևոր, քան իրավական գիտելիքները: Անարդար վճիռը համարվում էր ոչ միայն պետական կարգի խախտում, այլև տիեզերական հավասարակշռության խաթարում: Այս պատկերացումը հանգեցրեց այնպիսի կառուցվածքների առաջացման, որոնց նպատակն էր պաշտպանել թույլերին, սահմանափակել պաշտոնյաների կամայականությունը և ապահովել տեղական իշխանության նկատմամբ կենտրոնական վերահսկողություն²⁵:

Պարսկական դատական համակարգում ձևավորվում է նաև բողոքարկման սկզբունքին մոտող մեխանիզմ, երբ ենթադրաբար հնարավոր էր դիմել վերին իշխանությանը՝ վերանայելու տեղական վճիռները²⁶:

Այս համատեքստում կարևոր է ընդգծել, որ Կյուրոսի օրոք գործող դատական համակարգերը ձևավորվել էին տարածաշրջանի պատմության ընթացքում և չեն կարող լիովին վերագրվել արքայի կառավարմանը:

Մինչդեռ Համբուրգի ժամանակ դատարանները համալրված էին խառը և հաճախ ad hoc կազմով՝ երբեմն ղեկավարում էին դատավորները, երբեմն՝ ծերերի խորհուրդները կամ հենց թագավորը²⁷, ապա հաջորդ հազարամյակում Միջագետքի իրավական համակարգը աստիճանաբար անցավ ինստիտուցիոնալացման նոր մակարդակի²⁸: Նեոբաբելոնյան շրջանում դատարանները դարձել էին կայուն, մշտապես գործող կառույցներ՝ կայացված դատավորներով, գրագրական աշխատակազմով, տաճարային կամ վարչական շենքերում նստավայրերով և շարունակական արխիվներով²⁹: Հենց այս զարգացած համակարգն էր, որ Կյուրոս Մեծը ժառանգեց իր կողմից Բաբելոնը գրավելուց հետո՝ պահպանելով և օգտագործելով այն որպես կայսերական կառավարման հիմնասյուն:

Պատմության այս ժամանակաշրջանի իրավական զարգացումները չեն սահմանափակվում

www.ardaradutyjournal.com

միայն Մերձավոր Արևելքով: Պարսկաստանի կայսրության հաստատումից անմիջապես հետո հունական աշխարհը մտավ նոր դարաշրջան, որը խորապես փոխակերպեց հին աշխարհի իրավական ինստիտուտների ընդհանուր պատկերը:

Աթենքի դատարանները հիմնված էին քաղաքացիական մասնակցության, կոլեկտիվ դատողության և դատավարական հրապարակայնության սկզբունքների վրա: Աթենքի կենտրոնական դատական մարմինները՝ դիկաստերիաները (dikastai), բաղկացած էին մեծաթիվ քաղաքացի ատենակալներից, որոնք հատկացվում էին վիճակահանությանը ամեն օր: Այս մեխանիզմը նպատակ ուներ կանխարգելել կոռուպցիան և ապահովել լայն քաղաքացիական պատասխանատվություն արդարադատության իրականացման գործում³⁰: Չանգվածային ատենակալական այս մոդելը ներմուծեց բոլորովին նոր ինստիտուցիոնալ տրամաբանություն՝ արդարադատությունը այլևս կառավարչի կամ քահանայական դասակարգի արտոնությունը չէր, այլ գործառույթ, որը կատարվում էր սովորական քաղաքացիների կողմից, որոնք լիազորված էին քաղաքի ժողովրդավարական սահմանադրությամբ³¹:

Աթենքի դատարանները գործում էին առանց պրոֆեսիոնալ դատավորների՝ ժամանակակից իմաստով: Մագիստրատները (archon) նախագահում էին այս գործընթացները, սակայն որոշումների կայացման լիազորությունը պատկանում էր թվով մեծ 201-ից մինչև 501 ատենակալներին, իսկ բացառիկ հանրային գործերում այս թիվը կարող էր հասնել մինչև 1,501³²: Դատավարությունները հրապարակային էին, բանավոր և գործում էին հստակ ընթացակարգերի պահպանմամբ: Վեճի կողմերը ունեին հաստակ ժամանակ որի ընթացքում ներկայացնում էին իրենց դիքորոշումը: Այս ելույթները ուղեկցվում էին վկաների ցուցմունքներով և փաստաթղթային ապացույցներով: Մեծաթիվ ատենակալների մասնակցությունը, դատախազների բացակայությունը մասնավոր վեճերում և քաղաքացիական համայնքի անմիջական ներգրավվածությունը ներդրեցին նոր դատավարական երաշխիքներ, որոնք առկա չէին ավելի վաղ համակարգերում³³: Կոլեկտիվ որոշումների կայացումը, օլիգարխիայի ազդեցության վերացումը, թափանցիկության և կողմերի հավասարության պահանջ այն նորարարություններն էին, որոնք մինչ օրս կիրառվում են ժամանակակից իրավական համակարգերում:

Եթե Մետապոտամիայում թագավորները հրապարակում էին օրենքների կողոպուներ և նշանակվում էին դատավորներ՝ պահպանելով իշխանության ուղղահայաց կառուցվածքը, ապա հունական աշխարհում ձևավորվեց սկզբունքապես այլ մոտեցում՝ օրենքի լեգիտիմությունը բխում էր ոչ թե իշխանությունից, այլ քաղաքացիական համայնքից:

Հին Հունաստանը իր մեծ ներդրումն է ունեցել

արդար դատաբնության իրավունքի առանձին տարրերի ձևավորման հարցում: Հրապարակայնությունը՝ աթենյան արդարադատության հիմնասյուներից մեկը, դարձավ հիմնարար արժեք հետագա իրավական ավանդույթներում՝ հիմնված այն համոզմունքի վրա, որ բաց դատավարությունները կանխարգելում են շարաշահումները և ամրապնդում հանրային վստահությունը: Կողմերի հավասարության սկզբունքը (audi alteram partem) արտացոլված էր կողմերի ելույթների կառուցվածքում և ելույթների ժամանակային հավասարության խիստ պահպանմամբ³⁴:

Ավելին, քաղաքացիների կողմից վճիռների կայացման աթենյան պրակտիկան ձևավորեց այն հիմնարար սկզբունքը, որ անաչառությունը երաշխավորվում է ոչ թե մեկ փորձառու դատավորի մասնագիտական հեղինակությամբ, այլ քաղաքացիների կոլեկտիվ և անաչառ դատողությամբ: Այս գաղափարը, դարեր անց արտացոլվեց ատենակալների համակարգերում³⁵:

Հատկանշական է, որ այս ինստիտուտները ձևավորվում էին հունական փիլիսոփայական մտքի ավելի լայն համատեքստում:

Սոկրատեսի դատավարությունը և նրա պաշտպանական ելույթը Պլատոնի «Apology»-ում ներկայացնում են դատավորների և ատենակալների էթիկական պատասխանատվությունների վերաբերյալ պահպանված ամենավաղ դիտարկումը՝ շեշտելով, որ որոշումները պետք է հիմնված լինեն արդարության, այլ ոչ թե կանխակալության, պուլսիվի և զգացմունքայնություն վրա³⁶:

Պլատոնն ավելի ուշ մշակեց դատական համակարգի վերաբերյալ ավելի մանրամասն դիտարկումներ իր «The Laws» աշխատանքում: Մասնավորապես նա նկարագրում էր բազմաստիճան դատական համակարգ և մասնագիտացված դատարաններ: Նա նաև նշում է, որ դատավորները պետք է լինել ազնիվ և տիրապետեն օրենքի մասին խորը գիտելիքների³⁷:

Թեև աթենյան համակարգը գրկված էր ժամանակակից պատշաճ իրավական ընթացակարգի հետ կապված բազմաթիվ հատկանիշներից՝ ինչպիսիք են իրավական ներկայացուցչությունը, ապացուցողական կանոնները կամ բողոքարկման իրավունքները, դրա ինստիտուցիոնալ նորարարությունները վճռորոշ կերպով ձևավորեցին Արևմտյան իրավական մտածողության ուղին: Այս սկզբունքները ազդեցին նաև հետագա հռոմեական իրավական զարգացումների վրա:

Հռոմեական իրավունքը հաջորդ քայլն էր արդարադատության հայեցակարգի ձևավորման համար: Հռոմում նկատվում են իրավագիտության ձևավորումն որպես առանձին գիտություն: 12 սեղանի օրենքը, որը Հռոմի առաջին գրավոր օրենսգիրքն էր, իր մեջ պարունակում էր նաև դատական

գործընթացները կարգավորող դրույթներ:

Օրինակ եթե հայցվորը կանչում է պատասխանողին դատարան, պատասխանողը պարտավոր է ներկայանալ, իսկ եթե պատասխանողը փորձում է խուսափել կամ փախչել դատարան ներկայանալուց, հայցվորը կարող է ուժ գործադրել: Այն դեպքում երբ պատասխանողը հիվանդության կամ ծերության պատճառով դժվարանում է ներկայանալ դատարան հայցվորը պետք է նրան տրամադրի տրանսպորտ:

Այս օրենսգիրքը իր մեջ պարունակում էր դատական կոռուպցիայի դեմ ուղղված առաջին կարգավորումները: Մասնավորապես այն սահմանեց, որ դատավոր կամ արբիտր, ով վճիռ է կայացրել գումարի դիմաց պետք է մահապատժի ենթարկվի³⁸:

Հռոմեական իրավունքը սկսեց զարգանալ ոչ միայն օրենքների, այլ նաև իրավաբանների մեկնաբանությունների միջոցով. պրոֆեսիոնալ իրավաբանները (jurists) պատրաստում էին responsa, գրում էին տրակտատներ և մշակում իրավական եզրույթներ³⁹:

Ցիցերոնը (մ.թ.ա. 106-43 թթ.), որպես իրավական փիլիսոփա և փաստաբան, խորապես ազդեց իրավական մտածողության վրա՝ համադրելով հունական փիլիսոփայությունը հռոմեական իրավական պրակտիկայի հետ և մշակելով բնական իրավունքի հայեցակարգը, որը պնդում էր, որ գոյություն ունի համընդհանուր, բանականության վրա հիմնված արդարություն, որը գերազանցում է մարդկային օրենքները:

Հռոմեական իրավունքի ամենաբարձր ձևակերպումը նկատվում է դասական իրավաբանների դարաշրջանում (մ.թ. II-III դդ.), երբ Պապինիանը, Ուլպիանը և Գայուսը ստեղծեցին այն իրավաբանական գիտական համակարգը, որի վրա հետագայում հիմնվեց ամբողջ եվրոպական իրավական ավանդույթը: Նրանք դասակարգում էին իրավական ինստիտուտները, մեկնաբանում էին իրավական նորմերը և կարևորում օրենքի տրամաբանական կառուցվածքը⁴⁰:

Քաղաքացիական դատավարությունը նույնպես բարդացավ. ձևավորվեց երկսեայան ընթացակարգ, որտեղ մագիստրատը ղեկավարում էր in iure փուլը՝ սահմանելով իրավական հարցը, իսկ ընտրված դատավորը (iudex) քննում էր փաստերը (apud iudicem) և կայացնում էր որոշում: Այդ տարանջատումը՝ իրավական և փաստական հարցերի բաժանումը, դարձավ հռոմեական դատավարության առանցքային առանձնահատկությունը և հետագայում ազդեց եվրոպական քաղաքացիական դատավարության կառուցվածքի վրա⁴¹:

Այս ժամանակաշրջանում զարգացավ նաև իրավաբանական ներկայացուցչության ինստիտուտը, որոնք դատարանում հանդես էին գալիս կողմերի անունից⁴²:

Միջնադար. Կանոնական իրավունքի զարգացումը

Եվրոպական միջնադարի երկրորդ հազարամյակի իրավական զարգացումները չեն կարելի դիտարկել միայն առաջընթացի տեսանկյունից: Դրանք ձևավորում էին արդար դատաքննության հիմքեր, բայց միևնույն ժամանակ պարունակում էին զգալի հետընթացներ, որոնց հետևանքով դատարանները հաճախ դառնում էին քաղաքական կամ կրոնական վերահսկողության գործիքներ: Այս երկու ուղղությունները՝ ինստիտուցիոնալ զարգացումը և գաղափարական հետհոսքը, զուգահեռաբար ձևավորեցին այն միջավայրը, որտեղ արդար դատաքննությունը դեռևս փխրուն և մշտապես վտանգված էր:

Կանոնական իրավունքի (Canon law) զարգացումը XII դարում իր մեջ կրում էր այս երկակի բնույթը⁴³: Մի կողմից այն ստեղծեց Եվրոպայի առաջին համակարգված, գրավոր, արձանագրված և դատավորի կողմից ղեկավարվող դատավարությունը⁴⁴: Դատարանները սկսեցին գործել ոչ թե պարզապես որպես համայնքային վեճերի լուծման հարթակ, այլ որպես ինստիտուտներ, որտեղ գործը պետք է ամբողջությամբ գրանցվեր, դատավորն պարտավոր էր ակտիվորեն ուսումնասիրել փաստերը, իսկ ապացույցները պետք է ներկայացվեին գրավոր ձևով⁴⁵:

Բայց մյուս կողմից եկեղեցու ազդեցության աճը, որը հատկապես ուժեղացավ Գրիգորյանական բարեփոխման (Gregorian Reform) և հետո IV Լատերանի (Lateran IV) շրջանակում, հանգեցրեց այն բանի, որ հոգեվորականությունը սկսեց վերահսկել ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ դատական գործընթացները: Հերետիկոսության, ամուսնական վեճերի, ժառանգության, անգամ քրեական բնույթի որոշ գործեր տեղափոխվում էին եկեղեցական տիրույթ, որտեղ դատավարությունը հաճախ կորցնում էր հրապարակայնությունը, իսկ վկայի և ապացուցողական համակարգը զգալիորեն կախված էր հոգևոր իշխանությունների մեկնաբանություններից⁴⁶:

Այս ժամանակաշրջանի թե՛ եկեղեցական և թե՛ աշխարհիկ դատարանները օգտագործում էին ապացուցողական տարբեր մեթոդների խառնուրդ, որոնք միաժամանակ ներառում էին ինչպես ռացիոնալ, այնպես էլ աստվածային միջամտության գաղափարներ: Վկաների ցուցմունքների և գրավոր ապացույցների կողքին դատարանները հաճախ դիմում էին փորձությունների (ordeal), որոնք նախատեսում էին, որ ճշմարտությունը կբացահայտվի Աստծո կամքով՝ օրինակ տաք երկաթով կամ եռացող ջրով փորձության միջոցով: Այս մեթոդները կիրառվում էին հատկապես այն դեպքերում, երբ փաստերը հնարավոր չէր պարզել սովորական ապացույցներով, և դրանք խոր արմատներ ունեին

www.ardaradutyjournal.com

միջնադարյան իրավական մշակույթի մեջ⁴⁷ :

Փորձությունների արգելումը դարձավ եվրոպական դատավարության պատմության առանցքային շրջադարձ, քանի որ այն վերջ դրեց ապացույցների ստացման միստիկական մեթոդներին և ստիպեց աշխարհիկ դատարաններին անցնել ավելի ռացիոնալ և փաստահեն մեխանիզմների⁴⁸ : Սակայն նույն դարում եկեղեցին ամրապնդեց «inquisitio»-ի՝ քննչական դատավարության մոդելը, որի շրջանակում դատավորը ոչ միայն ղեկավարում էր վարույթը, այլ նաև ինքն էր նախապատրաստում գործը, հավաքում ապացույցները և երբեմն հանդես գալիս որպես մեղադրող կողմ: Այս համակարգում ամբաստանյալը սահմանափակ հնարավորություններ ուներ մասնակցելու գործընթացին կամ արդյունավետ պաշտպանություն իրականացնելու համար, ինչը եկեղեցական դատարաններում զգալիորեն մեծացնում էր դատավորի իշխանությունն ապացուցողական գործընթացի նկատմամբ⁴⁹ :

Անգլիական common law-ի ձևավորումը նույնպես գծային առաջընթաց չէր, այլ հակասություններով ու ուժային բալանսների փոփոխությամբ պայմանավորված գործընթաց: Հենրի II-ի (1154–1189) բարեփոխումները, որոնք ներդրեցին թագավորական դատավորների շրջիկ դատարանները (itinerant justices) և ապահովեցին թագավորության ամբողջ տարածքում ավելի միատեսակ դատական պրակտիկա, իսկապես կարևոր քայլ էին միավորված պետական արդարադատության համակարգի ձևավորման համար: Այդ բարեփոխումների հետևանքով դատարանները աստիճանաբար դուրս եկան տեղական ֆեոդալական տիրակալների վերահսկողությունից և դարձան թագավորական իշխանության ներքո գործող միասնական մարմիններ: Սակայն նույն կենտրոնացումը նաև ստեղծում էր լուրջ ռիսկեր. թագավորը վերահսկում էր դատավորների նշանակումները, կարող էր ազդել որոշ գործերի ելքի վրա, և դատարանները երբեմն օգտագործվում էին քաղաքական նպատակներով՝ ընդդիմախոսներին ճնշելու կամ թագավորական կամքը հաստատելու համար⁵⁰ :

Մագնա Կարտան, որը 1215 թվականին ամրագրեց «lex terrae» և «judicium parium» սկզբունքները, նույնպես առաջացավ ոչ թե շարունակական առաջընթացի, այլ քաղաքական ճնշման և իշխանության սահմանափակման պայքարի արդյունքում: Այն կամավոր բարեփոխում չէր. փաստաթուղթը պարտադրվեց թագավոր Ջոնին այն բանից հետո, երբ ազնվականությունը դժգոհեց թագավորական կամայական դատավարություններից և ֆինանսական ճնշումներից: Թեև Մագնա Կարտան հետագայում դարձավ սահմանադրական ազատությունների խորհրդանիշ և իրավունքի գերակա-

յության հիմնասյուն, հենց XIII–XIV դարերում անգլիական միապետները բազմիցս անտեսեցին, չեղարկեցին կամ վերաիմաստավորեցին դրա դրույթները: Այսպիսով, թեև այն ձևակերպեց կարևոր ընթացակարգային երաշխիքներ՝ օրինական դատավարության, հավասարների կողմից դատվելու և անօրինական կալանքի արգելքի շուրջ, դրանց գործնական իրագործումը դեռևս խիստ կախված էր ժամանակի քաղաքական կոնյուկտուրայից, և դատարանների իրական անկախությունը չկարողացավ հանդես գալ լիարժեք կայացած ինստիտուտի ձևով⁵¹ :

Կիլիկյան Հայաստանում դատաիրավական համակարգի զարգացումը ներկայացնում էր միաժամանակ առաջընթաց և սահմանափակումներ: Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» (մոտ 1184–1215) իր ժամանակի համար ստեղծեց համապարփակ իրավական կարգավորումներ, որոնք համադրում էին եկեղեցական իրավունք, հայկական սովորության ճանաչում և կիրառվող դատական պրակտիկա: Այն ներառում էր դատական մարմինների կազմակերպության, դատավորի պարտականությունների, ապացույցների գնահատման և վարույթի ընթացքի վերաբերյալ մանրամասն կանոնակարգեր:

Սակայն Կիլիկյան Հայաստանը գործում էր լատինական և բյուզանդական ազդեցությունների խաչմերուկում, որտեղ թագավորական իշխանությունը կարող էր միջամտել աշխարհիկ կամ համայնքային վեճերի լուծմանը, իսկ եկեղեցական դատարանների իրավասությունները երբեմն ընդարձակվում էին այն աստիճանի, որ առաջացնում էին իրավասությունների մրցակցություն: Այս բազմակենտրոն դատական կառուցվածքը միշտ չէր ապահովում կայուն և կանխատեսելի դատավարական միջավայր:

XIII դարում Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» ամրապնդեց դատարանների աստիճանակարգումը և բողոքարկման մեխանիզմները, ի հայտ բերելով ավելի կառուցվածքային դատական համակարգ: Սակայն նույն շրջանում ֆեոդալական իշխանությունների ուժեղացումը սահմանափակում էր դատարանների ինքնավարությունը՝ վեճերի մի մասի լուծումը կախված դարձնելով ոչ թե ընթացակարգային կանոններից, այլ քաղաքական զավթումների և տեղական իշխանական հարաբերությունների դիմամիկայից:

Այս զարգացումները ցույց են տալիս, որ միջնադարյան իրավական մշակույթում արդար դատաբանության երաշխիքները ձևավորվում էին բազմակողմ ազդեցությունների՝ իրավական կողմի ֆիկացիայի, եկեղեցական իրավասությունների, թագավորական վերահսկողության և ֆեոդալական ուժակենտրոնացումների միջև բարդ փոխազդեցության արդյունքում:

Ուշ միջնադար.

Վաղ նոր ժամանակաշրջանում միջնադարյան ձևավորված դատարանները աստիճանաբար ստացան սահմանադրական և օրինական հստակ հիմքեր: Եթե միջնադարում արդարադատության իրականացումը հաճախ կախված էր միապետի կամ տեղական ավանդույթի հեղինակությունից, ապա XVII դարից դատարանները սկսեցին դիմել որպես պետական իրավակարգի հիմնական ինստիտուտներ, ենթակա օրենքին և սահմանադրական վերահսկողությանը:

Անգլիական զարգացումները առանձնահատուկ նշանակություն ունեն այս փուլում: «Petition of Right»-ը (1628) սահմանափակեց միապետի իրավասությունը կալանավորել կամ հարկադրել առանց օրինական հիմքի և պահանջեց, որ ազատությունից զրկումները կատարվեն միայն օրինականության հիման վրա⁵²:

«Habeas Corpus Act»-ը (1679) հաստատեց, որ յուրաքանչյուր կալանավորված անձ պետք է անհապաղ բերվի դատարան, և որևէ պետական մարմին չի կարող ձգձգել կամ խոչընդոտել դատական վերահսկողությունը⁵³:

«Bill of Rights»-ը (1689) ամրագրեց, որ օրենքների կիրառումը, դատավարությունները և սահմանված պատիժը պետք է իրականացվեն միայն օրենքով ստեղծված դատարաններում, առանց թագավորական խորհրդի կամ արտակարգ տրիբունալների միջամտության:

Վաղ նոր ժամանակաշրջանում Եվրոպայում սկսվեց նաև դատական ծառայության մասնագիտականացում: Որոշ երկրներում, օրինակ՝ Ֆրանսիայում, դատավորական պաշտոնները գնվում էին (venality of offices), սակայն պաշտոնակատարները պարտավոր էին ունենալ իրավական պատրաստվածություն և աշխատել գրավոր ընթացակարգերով, ինչը նպաստեց իրավական ոլորտի մասնագիտացմանը⁵⁴:

Լուսավորության դարաշրջանը և ինկվիզիցիոն դատավարության քննադատությունը

XVIII դարի կեսերին Եվրոպայի մեծ մասում քրեական արդարադատությունը շարունակում էր գործել միջնադարյան ինկվիզիտորական մոդելով՝ գաղտնի, գրավոր ընթացակարգով և «օրինական ապացույցների» համակարգով, որտեղ խոստովանությունը համարվում էր հիմնական ապացույց: Ֆրանսիայում 1670թ. «Ordonnance criminelle»-ը պահպանում էր փակ, դատավորի կողմից վերահսկվող գործընթացը՝ գրեթե առանց պաշտպանության իրավունքների, իսկ գերմանական տարածքներում «Constitutio Criminalis Carolina»-ն (1532) շարունակում էր գործել տարբեր տեղային փոփոխություններով: Այստեղ «լիակատար ապացույց» կարելի էր ստանալ երկու վկայով կամ խոստովանությամբ, ինչն հանգեցնում էր խոշտանգ-

ման լայն կիրառման՝ որպես ապացույցների հավաքագրման «օրինական մեթոդ»⁵⁵:

Այս համակարգը ստեղծում էր բազմաթիվ կառուցվածքային խնդիրներ. դատավորները պարտավոր էին կիրառել խոշտանգումներ, եթե կային «կիսատ ապացույցներ» (indices), բայց չկար լրիվ ապացույց:

Այս համակարգի ֆոնին 1764թ. Չեզարե Բեկկարիան հրապարակեց իր «Dei delitti e delle pene» աշխատությունը, որում նա պահանջում էր օրենքի գերակայություն՝ «ոչ հանցանք, ոչ պատիժ առանց օրենքի», պատժի համաչափություն, խոշտանգման ամբողջական արգելում և բաց ու հրապարակային դատավարություն՝ կանխելու դատավորի կամայականությունը⁵⁶: Նրա քննադատությունը կտրուկ հակադրվում էր գաղտնի ինկվիզիտորական մոդելին և դարձավ եվրոպական բարեփոխումների ինստիտուտալ հիմքը:

Բեկկարիայի հիմնական նորույթը կայանում էր նրանում, որ նա վերլուծեց ողջ քրեական արդարադատության համակարգը՝ ոչ թե աստվածաշնչային կամ բնական իրավունքի, այլ հասարակական պայմանագրի և օգտակարության սկզբունքի տեսանկյունից: Նրա համար քրեական օրենքը և դատավարությունը պետք է ծառայեին հասարակության ընդհանուր բարեկեցությանը, այլ ոչ թե վրեժխնդրությանը կամ աստվածային արդարության իրականացմանը:

Բեկկարիայի ամենահեղափոխական պահանջը վերաբերում էր խոշտանգումների բացարձակ արգելմանը: Նա ցույց տվեց, որ խոշտանգումը ոչ միայն անմարդկային է, այլև անարդյունավետ՝ ուժեղ մարդիկ դիմանում են և խուսափում մեղադրանքից, մինչդեռ թույլերը խոստովանում են նույնիսկ չկատարած հանցագործությունները: Նա գրում էր. «Խոշտանգումը հանցագործի և անմեղի միջև տարբերակման այնպիսի միջոց է, որը կախված է ոչ թե ճշմարտությունից, այլ մկանների ուժից»:

Շառլ Լուի դը Սեկոնդա, բարոն դը Մոնտեսքյուն (Charles-Louis de Secondat, Baron de Montesquieu) ժամանակաշրջանի մեկ այլ հեղափոխական ստեղծագործն էր: Նա իր հիմնարար աշխատությունում «Օրենքների ոգին մասին» (De l'esprit des lois, 1748), մշակեց այն սահմանադրական կառուցվածքը, որը դարձավ արդիական արդար դատաբանության հիմքը⁵⁷:

Մոնտեսքյոյի իշխանությունների բաժանման տեսությունը պահանջում էր, որ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները լինեն անկախ միմյանցից: Դատական իշխանությունը, նրա մոտ, չպետք է ենթարկվեր ոչ թագավորին, ոչ էլ պառլամենտին: Դատավորները պետք է լինեին անկախ և անկողմնակալ, իսկ նրանց գործառույթը՝ միայն օրենքի կիրառումը, այլ ոչ թե նրա ստեղծումը կամ

www.aradaradutyjournal.com

քաղաքական որոշումների կայացումը:

Մոնտեսքյոն նաև քննադատեց ինկվիզիտորական ընթացակարգը: Նա պաշտպանում էր մեղադրողական համակարգը, որտեղ կողմերը հավասար են, և դատավարությունը բաց: Նրա համար ազատությունը չէր կարող գոյություն ունենալ գաղտնի դատավարության պայմաններում:

Մոնտեսքյոյի ազդեցությունը դատական կառուցվածքի վրա այնքան մեծ էր, որ XVIII դարի վերջի և XIX դարի իշխանությունների տարանջատման սկզբունքը դարձավ գրեթե բոլոր ժամանակակից պետությունների սահմանադրական կարգի հիմնասյուն:

Միջնադարյան մեթոդների անարդարության հանրահայտ օրինակ է Ժան Կալասի գործը: 1761թ.-ին Տուլուզում, ֆրանսիական Լանգոկի նահանգի մայրաքաղաքում, պրոտեստանտ վաճառական Ժան Կալասը մեղադրվեց իր որդու սպանության մեջ: Տեղական դատարանը (Parlement de Toulouse), հիմնվելով գաղտնի ընթացակարգի և խոշտանգումների վրա, 1762 թվականին դատապարտեց Կալասին մահապատժի: Կալասը պնդում էր իր անմեղությունը մինչև վերջ, նույնիսկ խոշտանգումների ժամանակ:

Վոլտերի համար պարզ էր, որ Կալասը կրոնական անհանդուրժողականության և գաղտնի դատավարության հերթական զոհն է: Նա սկսեց Կալասի մահապատժի վերանայելուն միտված համակարգված արշավ: 1762-1765 թվականների ընթացքում Վոլտերը հրապարակեց բազմաթիվ հոդվածներ և պամֆլետներ, որոնցում բացահայտում էր Տուլուզի դատավարության թերությունները՝ գաղտնի քննությունը, ապացույցների բացակայությունը, կրոնական նախապաշարմունքների դերը:

Վոլտերի արշավը ստեղծեց նախադեպ, երբ առաջին անգամ հրապարակային կարծիքը դարձավ դատական վճռի դեմ պայքարի գործիք և իր ցույց դրեց ինկվիզիցիոն մեթոդների ողջ անարդարությունը՝ դառնալով հենք հետագա բարեփոխումների համար:

Լուսավորական մտքի ազդեցությամբ XVIII դարի վերջին իրականացվեցին հիմնարար բարեփոխումներ: Ֆրանսիական Հեղափոխական Ժողովը 1789 թվականին ընդունեց «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը» (Déclaration des droits de l'homme et du citoyen), որը սահմանադրականացրեց լուսավորական մտածողների սկզբունքները:

Հռչակագրի 7-րդ հոդվածը սահմանեց. «Ոչ ոք չի կարող մեղադրվել, ձերբակալվել կամ բանտարկվել, բացի օրենքով սահմանված դեպքերում և օրենքով նախատեսված ձևով»: 8-րդ հոդվածը հաստատեց օրենքի գերակայությունը քրեական իրավունքում. «Օրենքը պետք է սահմանի միայն խիստ և բացահայտ անհրաժեշտ պատիժներ»: 9-

րդ հոդվածը ներկայացրեց անմեղության կանխավարկածը. «Զանի դեռ մարդը չի ճանաչվել մեղավոր, եթե անհրաժեշտ է նրան ձերբակալել, օրենքը պետք է խստորեն պատժի ցանկացած խստություն, որը չէ անհրաժեշտ նրան ապահովելու համար»:

1791 թվականի Code pénal (Քրեական օրենսգիրք) բեկանում էր հանցագործությունների և պատիժների հիմնական կարգը: Վերացվեց մահապատժի մեծ մասը, արգելվեց խոշտանգումը, ներդրվեց պատիժների համաչափությունը: Նույն թվականին ընդունված Code de procédure criminelle (Քրեական դատավարության օրենսգիրք) փոխարինեց 1670 թվականի Ordonnance criminelle-ը: Այն ներդրեց ժյուրիների դատարանը քրեական գործերի համար՝ որպես անգլիական մոդելի ընդունում: Նախաքննությունը մնաց գրավոր և մասամբ գաղտնի, բայց դատական փուլում ներդրվեց բանավոր և հրապարակային դատաքննություն:

Իհարկե, հեղափոխության տարիներին (հատկապես 1793-1794) այս սկզբունքները հաճախ խախտվում էին: Հեղափոխական դատարանը (Tribunal révolutionnaire) գործում էր հակառակ բոլոր սկզբունքներին՝ արագացված դատավարությամբ, առանց պահպանելու սահմանված ընթացակարգերը կամ ընձեռելու իրական պաշտպանության իրավունքի: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ օրենքի և ընթացակարգի գոյությունը ինքնին երաշխիք չէ արդար դատաքննության իրավունքի պաշտպանության համար:

Այս համատեքստում XVIII դարի վերջին ձևավորվեց նոր մոտեցում՝ արդար դատաքննության իրավունքները այլևս չէին համարվում պարզապես դատավարական կանոններ, այլ սահմանադրական իրավունքներ, որոնք պետք է պաշտպանվեին պետական իշխանության ցանկացած ազդեցությունից:

Այս ժամանակաշրջանում ձևավորվեց նաև հասկացությունը, որ արդար դատաքննության իրավունքները պատկանում են բոլոր անձանց, անկախ իրենց սոցիալական կարգավիճակից, ծագումից, կրոնից: Սա էր հիմնարար խզում միջնադարյան հասարակարգի հետ, որտեղ տարբեր դատական համակարգեր գործում էին տարբեր սոցիալական խմբերի համար:

Այսպիսով, XVIII դարը դարձավ շրջադարձային փուլ արդար դատաքննության պատմաիրավական զարգացման համար: Գաղտնի, բռնությամբ ուղեկցվող միջնադարյան դատավարությունը սկսեց փոխարինվել բաց, մրցակցային և իրավահեն դատական մոդելով, դառնալով ժամանակակից արդար դատաքննության իրավունքի հիմքը:

Արդար դատաքննության իրավունքի պաշտպանության միջազգայնացումը

Երկրորդ համաշխարհային պատերազմը

Մարդու իրավունքների ոլորտում ունեցավ առանցքային դեր: Ռազմական շրջանի զանգվածային ոճրագործությունները՝ զուգորդված գործող իրավական մեխանիզմների բացահայտ անգործությամբ ստիպեցին միջազգային հանրությանը վերագնահատել պետությունը անհատների պաշտպանության համակարգերը:

Այս ժամանակաշրջանում պարզ դարձավ, որ պետություններին հնարավոր չէ լիովին վստահել մարդու իրավունքների պաշտպանության հարցում: Եթե չլինեն ավելի առարկայական մեխանիզմներ անձանց իրավունքների պաշտպանության համար, մտղային կյանքերը կհանձնվեն պետությունների քմահաճույքին: Այլ կերպ ասած, մարդկությունը գիտակցեց, որ մարդու իրավունքների պաշտպանությունը ոչ միայն ներպետական խնդիր է, այլ միջազգային հանրության հանձնառություն:

Այսպիսով միջազգային մարդու իրավունքների ոլորտի զարգացումն առանցքային դեր ունեցավ արդար դատաքննության ժամանակակից հայեցակարգի հաստատման և ամրապնդման համար:

Նյուրնբերգյան միջազգային ռազմական դատարանը (International Military Tribunal at Nuremberg, 1945-1946) և Տոկիոյի միջազգային ռազմական դատարանը (International Military Tribunal for the Far East, 1946-1948) դարձան առաջին միջազգային քրեական դատարանները, որոնք դատեցին անհատներին միջազգային հանցագործությունների համար:

Նյուրնբերգյան գործընթացում ներդրվեցին այնպիսի դատավարական երաշխիքներ, որոնք մինչ այդ միջազգային հարթակում գոյություն չուներին, ինչպիսիք են՝ պաշտպան ունենալու իրավունքը, ապացույցների ներկայացման վերաբերյալ կարգավորումները, վկաների հարցաքննության, ինչպես նաև բանավոր և հրապարակային դատաքննության իրավունքները⁵⁸:

Այս գործընթացներում առկա էր մեկ հատկանշական խնդիր, որը ներկայիս պայմաններում կարող է դիտվել որպես անօրինական, այն է՝ որոշ հանցակազմեր որոնց համար անձիք այս դատավարություններում ենթարկվում էին պատասխանատվության նոր ձևակերպված հանցակազմեր: Սա հակասում էր «nullum crimen sine lege» սկզբունքին (չկա հանցանք առանց օրենքի): Այնուամենայնիվ, այս խնդիրը բխում էր միջազգային քրեական իրավունքի յուրահատկությունից, ինչպես նաև այն հանգամանքից, որ պատերազմական ոճրագործությունների համար մեղավորները արդարացիորեն պետք է պատասխանատվություն կրեին⁵⁹:

Այս տրիբունալները, սակայն, ի ցույց դրեցին շատ կարևոր մի սկզբունք, մասնավորապես այն, որ յուրաքանչյուր դատարան, անգամ նմանատիպ բարդ գործերով, պարտավոր է գործել անհատա-

կան իրավունքների նվազագույն երաշխիքների շրջանակում⁶⁰:

Այս դատավարություններից անմիջապես հետո 1948 թվականի դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ժողովը Փարիզում ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (Universal Declaration of Human Rights)⁶¹: Այս փաստաթուղթը, դարձավ առաջին համընդհանուր միջազգային փաստաթուղթը, որը համակարգված կերպով ամրագրում էր մարդու հիմնական իրավունքները:

Հռչակագրի 10-րդ հոդվածը սահմանում է հետևյալը. «Յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար լիակատար հավասարության հիմունքով իրավունք ունի այն բանի, որ իր գործը քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից հրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ»: Սա առաջին անգամն էր, որ արդար դատաքննության իրավունքը ամրագրվում էր որպես համընդհանուր, անբաժանելի իրավունք միջազգային մակարդակում:

Հռչակագրի 11-րդ հոդվածը ներկայացնում է քրեական արդարադատության հիմնական սկզբունքները, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածը, հրապարակային դատաքննության պահանջը, դատական պաշտպանության երաշխիքների առկայությունը: Համաձայն սույն հոդվածի, ոչ ոք չպետք է դատապարտվի այնպիսի արարքի կամ անգործության համար, որը կատարման պահին ազգային կամ միջազգային իրավունքի համաձայն հանցագործություն չէր համարվում:

Հռչակագիրը, թեև չունի իրավաբանական ուժ, դարձավ բարոյական և քաղաքական ուժ ունեցող փաստաթուղթ, որը ազդեց հետագա բոլոր միջազգային և ազգային իրավական զարգացումների վրա: Նրա մեջ արտահայտված սկզբունքները դարձան միջազգային իրավունքի մաս և ազդեցին մեծաթիվ ազգային սահմանադրությունների վրա:

Չնայած հռչակագրի կարևորությանը, միջազգային հանրությունը գիտակցեց մարդու իրավունքների ոլորտում պարտադիր իրավական ուժ ունեցող փաստաթղթի անհրաժեշտությունը: Այսպիսով 1966 թվականին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ժողովը ընդունեց Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (International Covenant on Civil and Political Rights, ICCPR)⁶²: Դաշնագիրը (14-րդ հոդվածի հիմքով) մանրամասնորեն կարգավորեց արդար դատաքննության իրավունքը: Այն սահմանեց դատարանների առջև հավասարության սկզբունքը, վերահաստատեց հրապարակային դատաքննության պահանջը, անմեղության կանխավարկածը, ինչպես նաև կոնկրետացրեց արդար

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դատաքննության երաշխիքների շրջանակը:

Դաշնագրով նաև ստեղծվեց Մարդու իրավունքների կոմիտե (Human Rights Committee), որը վերահսկում է փաստաթղթի պատշաճ կիրարկումը անդամ պետությունների կողմից:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում հաջորդ քայլը եղավ Եվրոպայի որիդի հիմնադրումը 1949 թվականին: Եվրոպայի խորհուրդը դարձավ առաջին միջազգային կազմակերպությունը, որի հանձնառության հիմքում դրված էր մարդու իրավունքների պաշտպանությունը: Հենց այս կառույցի շրջանակներում 1950 թվականին ստորագրվեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ)⁶³:

ՄԻԵԿ-ը մարդու իրավունքների ոլորտում աննախադեպ փաստաթուղթ էր: Այն սահմանեց մարդու իրավունքները չտեսնված մանրամասնությամբ, դառնալով ոլորտային կարևորագույն փաստաթուղթ:

Կոնվենցիայի առանձնահատկությունն այն է, որ այն ստեղծեց Եվրոպական մարդու իրավունքների դատարանը: Այս զարգացումը այնքանով էր հեղափոխական, որ առաջին անգամ պատմության մեջ անհատներին իրավունք ընձեռնվեց դատական կարգով պատասխանատվության ենթարկել պետություններին՝ իրենց իրավունքների պաշտպանության նպատակով:

Հենց ՄԻԵԿ-ի նախադեպային պրակտիկայի միջոցով զարգացավ և ընդլայնվեց ՄԻԵԿ-ով ամրագրված իրավունքների պաշտպանությունը:

ՄԻԵԿ-ի պրակտիկան ստեղծել է հսկայական նախադեպային իրավունք արդար դատաքննության վերաբերյալ: Դատարանը մեկնաբանել է 6-րդ հոդվածը լայն ու դինամիկ կերպով՝ ներառելով այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ մեղադրանքի և պաշտպանության «զենքերի հավասարությունը» (equality of arms), խնդրահարույց ապացույցների օգտագործման կանոններ, լռելու իրավունքը, իրավաբանական օգնության արդյունավետությունը և այլն:

Եվրոպական մոդելից ոգեշնչված՝ այլ տարածաշրջաններ նույնպես ստեղծեցին սեփական մարդու իրավունքների պաշտպանության համակարգերը, ինչպիսիք են Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան (American Convention on Human Rights, Pact of San José), Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան (African Charter on Human and Peoples' Rights, Banjul Charter) և այլն:

Այսպիսով XX-րդ դարը դարձավ մարդու իրավունքների, այդ թվում արդար դատաքննության իրավունքի, համար կարևորագույն և առանցքային փուլը: Անհատի պաշտպանությունը աճաջին անգամ սկսեց դիտվել որպես միջազգային խնդիր, իսկ

մարդու իրավունքները ստացան համապարփակ ձևակերպում:

Պատմության խոշորագույն իրոնիան և ցավը կայանում է նրանում, որ մարդկայնությունը ծնվում է հենց ամենաանմարդկային իրադարձությունների հետևանքով: Արդար դատաքննության իրավունքը ցավոք նույնպես բացառություն չէ: Այս առանցքային իրավունքի զարգացման հիմքում ընկած են մարդկային աննկարագելի տառապանքներ և այս անանուն անհատների զոհաբերությունը, թեև ակամա, անթույլատրելի կլինեք մոռանալ:

Եզրակացություն

Արդար դատաքննության իրավունքի պատմաիրավական էվոլյուցիան վկայում է, որ այն չի ձևավորվել որպես ժամանակակից սահմանադրական ճարտարապետության պատահական արդյունք: Այն ձևավորվել է մարդկության սոցիալական փորձի, քաղաքական հակասությունների և իրավական մտքի երկարատև էվոլյուցիայի արդյունքում:

Միջագետքի իրավական համակարգերը՝ Ուր-Նամուի և Համուրաբիի օրենսգրքերով, առաջին անգամ ամրագրեցին գրավոր օրենքի հրապարակայնության, ապացուցողական ընթացակարգերի, կեղծ վկայության պատասխանատվության և դատավորի հաշվետվողականության գաղափարները: Թեև այդ համակարգերը հիմնված էին աստվածային լեգիտիմության վրա և հեռու էին ժամանակակից իրավունքի պատկերացումներից, դրանք կարևոր էին նրանով, որ ձևավորեցին կանխատեսելիության և իրավունքի տեսանելիության պահանջը՝ որպես արդարության ինստիտուցիոնալացման հիմք:

Հին աշխարհի և միջնադարի ընթացքում արդար դատաքննության զարգացումը կայուն և միանշանակ չէր: Աթենյան դատարաններում ձևավորվեցին հրապարակայնության, կողմերի հավասարության և քաղաքացիների մասնակցության սկզբունքները, մինչդեռ հռոմեական իրավունքը ներդրեց իրավական և փաստական հարցերի տարանջատումը, իրավաբանական մասնագիտացման զարգացումը և դատավարության կառուցվածքային տրամաբանությունը: Միևնույն ժամանակ միջնադարյան Եվրոպայում ինկվիզիցիոն մոդելի տարածումը, գաղտնի վարույթները, խոշտանգման կիրառումը և դատավորի գերշխող դիրքը ցույց տվեցին, թե որքան արագ կարող են քայքայվել արդար դատաքննության հիմքերը, երբ դատական գործընթացը զրկվում է հրապարակայնությունից, մրցակցայնությունից և վերահսկողությունից: Magna Carta-ի, habeas corpus-ի և անգլիական սահմանադրական ավանդույթի առաջացումը հենց այս վտանգների նկատմամբ արձագանք էր՝ ուղղված միապետական կամայականության սահմանափակմանը:

Լուսավորության դարաշրջանը որակապես վերաիմաստավորեց արդար դատաքննության գաղափարը՝ այն տեղափոխելով բարոյա-փիլիսոփայական և սահմանադրական հարթություն: Բեկկարիան բացահայտեց ինկվիզիցիոն դատավարության կառուցվածքային անարդարությունը՝ խոշտանգման և օրինական ապացույցների մեխանիկական համակարգի քննադատությամբ:

Մոնտեսքյոն ձևակերպեց դատական անկախության և իշխանությունների բաժանման այն մոդելը, առանց որի արդար դատաքննությունը կորցնում է իր բովանդակությունը, իսկ Վոլտերի պայքարը Ժան Կալասի գործով ցույց տվեց հանրային կարծիքի և հրապարակայնության դերը դատական կամայականության դեմ: Այդ գաղափարները ստացան իրավական ձևակերպում Ֆրանսիական հեղափոխության ընթացքում՝ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում, սակայն նույն պատմական փորձը բացահայտեց նաև սահմանադրական լեզվի փխրունությունը, երբ հեղափոխական տրիբունալները «անհրաժեշտության» անվան տակ չեզոքացնում էին հենց նոր հռչակված երաշխիքները:

XX դարում արդար դատաքննության իրավունքը ստացավ միջազգային չափում՝ ի պատասխան զանգվածային բռնությունների և պետության կողմից իրավունքների պաշտպանության ձախողման: Նյուրնբերգյան և Տոկիոյի տրիբունալները,

իրենց հակասություններով հանդերձ, հաստատեցին նվազագույն դատավարական երաշխիքների անանցանելիությունը նույնիսկ ամենաձանձուր հանցագործությունների դեպքում: Այդ տրամաբանությունը համակարգված կերպով ամրագրվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում և Եվրոպական մարդու իրավունքների կոնվենցիայում՝ ստեղծելով նաև վերահսկողական մարմիններ՝ ՍԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն և Եվրոպական մարդու իրավունքների դատարանը: Սակայն պատմական փորձը միաժամանակ ցույց է տալիս, որ այս ձեռքբերումները երբեք լիովին ապահովված չեն. «անհրաժեշտության» և անվտանգության հռետորաբանությունը շարունակաբար վտանգ է ներկայացնում արդար դատաքննության էության համար՝ լինի դա Գուանտանամոյի կալանավայրերի պրակտիկան, արտակարգ դրությունների երկարաձգումը կամ դատական անկախության ինստիտուցիոնալ քայքայումը: Արդար դատաքննության իրավունքը, հետևաբար, պետք է ընկալվի ոչ միայն որպես իրավական նորմ, այլ որպես պատմականորեն նվաճված, մշտական պաշտպանություն և ինստիտուցիոնալ զոգնություն պահանջող արժեք:

¹ The National Archives (UK), “Magna Carta, 1215: British Library Magna Carta, Runnymede,” The National Archives: Education Classroom Resources, accessed December 11, 2025,

<https://www.nationalarchives.gov.uk/education/resources/magna-carta/british-library-magna-carta-1215-runnymede/>

² The Works of Jeremy Bentham, published under the Superintendence of his Executor, John Bowring (Edinburgh: William Tait, 1838-1843). 11 vols. Vol. 4., 494

³ Rena Van Den Bergh, “The Historical Development of the Patronus as Representative in Civil Proceedings,” *Studia Universitatis Babeş-Bolyai – Iurisprudentia* 54, no. 4 (2009): 129–139

⁴ John H. Langbein, *The Origins of Adversary Criminal Trial* (Oxford: Oxford University Press, 2003), 10–11.

⁵ *Gideon v. Wainwright*, 372 U.S. 335 (1963)

⁶ Charter of the International Military Tribunal, art. 16, annexed to the Agreement for the Prosecution and Punishment of the Major War Criminals of the European Axis, United Kingdom, United States of America, France, and Union of Soviet Socialist Republics, signed at London, August 8, 1945, 82 U.N.T.S. 294.

⁷ Charter of the International Military Tribunal for the Far East (Tokyo Charter), art. 9, proclaimed 19 January 1946 by the Supreme Commander for the Allied Powers, 4 Bevans 20.

⁸ Yisroel Silverstein, “Reign of Terror,” *Research Starters: History*, EBSCOhost, 2023, accessed December 11, 2025, via EBSCOhost.

⁹ United Nations General Assembly, *United Nations Global Counter-Terrorism Strategy*, A/RES/60/288 (8 September 2006), Annex, para. 2(b).

¹⁰ Sophie Démare-Lafont and Daniel E. Fleming, eds., *Judicial Decisions in the Ancient Near East* (Atlanta: SBL Press, 2023), 2.

www.aradadutyjournal.com

- ¹¹ Sophie Démare-Lafont and Daniel E. Fleming, eds., *Judicial Decisions in the Ancient Near East* (Atlanta: SBL Press, 2023), 3:
- ¹² Տե՛ս նույն տեղում, 8.
- ¹³ Samuel Noah Kramer, *History Begins at Sumer* (Philadelphia: University of Pennsylvania Press, 1981)
- ¹⁴ C. H. W. Johns, *Babylonian and Assyrian Laws, Contracts, and Letters*, Library of Ancient Inscriptions (New York: Charles Scribner's Sons, 1904), 390.
- ¹⁵ Martha T. Roth, ed., *Law Collections from Mesopotamia and Asia Minor*, 2nd ed. (Atlanta: Scholars Press, 1997)
- ¹⁶ Տե՛ս նույն տեղում, 71-142.
- ¹⁷ Hugo Radau, *Early Babylonian History Down to the End of the Fourth Dynasty of Ur: To Which Is Appended an Account of the E. A. Hoffman Collection of Babylonian Tablets in the General Theological Seminary, New York, U.S.A.* (New York: Oxford University Press, American Branch; London: A. Frowde, 1900).
- ¹⁸ Dominique Charpin, *Writing, Law, and Kingship in Old Babylonian Mesopotamia* (Chicago: University of Chicago Press, 2010)
- ¹⁹ Stephen J. Lieberman, "Nippur: City of Decisions," in *Nippur at the Centennial: Papers Read at the 35th Rencontre Assyriologique Internationale*, ed. Maria de Jong-Ellis (Philadelphia: The Pennsylvania State University, 1992), 127–136
- ²⁰ Martha T. Roth, ed., *Law Collections from Mesopotamia and Asia Minor*, 2nd ed. (Atlanta: Scholars Press, 1997)
- ²¹ Marek Kuryłowicz, "Some Observations on Judicial Procedure in the Code of Hammurabi," *Zeszyty Prawnicze* 17, no. 2 (2017): 157–169,
- ²² Irving Finkel, *The Cyrus Cylinder* (British Museum Press, 2013)
- ²³ Pierre Briant, *From Cyrus to Alexander: A History of the Persian Empire* (Winona Lake, IN: Eisenbrauns, 2002)
- ²⁴ Amélie Kuhrt, *The Persian Empire: A Corpus of Sources of the Achaemenid Period*, Vol. 1 (London: Routledge, 2007)
- ²⁵ Briant, Pierre. *From Cyrus to Alexander: A History of the Persian Empire*. Translated by Peter T. Daniels. Winona Lake, IN: Eisenbrauns, 2002.
- ²⁶ Տե՛ս նույն տեղում.
- ²⁷ Dominique Charpin, *Writing, Law, and Kingship in Old Babylonian Mesopotamia* (Chicago: University of Chicago Press, 2010), 64–78; Raymond Westbrook, "Court Procedure," in *A History of Ancient Near Eastern Law*, vol. I (Leiden: Brill, 2003)
- ²⁸ Michael Jursa, *Aspects of the Economic History of Babylonia* (Leiden: Brill, 2010), 106–120; M. Stolper, *Entrepreneurs and Empire* (Leiden: Brill, 1985)
- ²⁹ Pierre Briant, *From Cyrus to Alexander: A History of the Persian Empire* (Winona Lake: Eisenbrauns, 2002), 495–504; Amélie Kuhrt, *The Persian Empire*, vol. I (London: Routledge, 2007)
- ³⁰ Edward M. Harris and Lene Rubinstein, eds., *The Law and the Courts in Ancient Greece* (London: Duckworth, 2004).
- ³¹ Douglas M. MacDowell, *The Law in Classical Athens* (Ithaca, NY: Cornell University Press, 1978)
- ³² Adriaan M. Lanni, *Law and Justice in the Courts of Classical Athens* (Cambridge: Cambridge University Press, 2006).
- ³³ Adriaan M. Lanni, "Social Norms in the Courts of Ancient Athens," *Journal of Legal Studies* 38, no. 1 (2009)
- ³⁴ Տե՛ս նույն տեղում.
- ³⁵ Mogens Herman Hansen, *Athenian Democracy in the Age of Demosthenes: Structure, Principles, and Ideology* (Oxford: Blackwell, 1991).
- ³⁶ Plato, *Apology*, in *Plato: Complete Works*, ed. John M. Cooper (Indianapolis: Hackett Publishing, 1997).
- ³⁷ Plato, *Laws*, trans. Trevor J. Saunders, in *Plato: Complete Works*, ed. John M. Cooper (Indianapolis: Hackett Publishing, 1997).
- ³⁸ Allan Watson, *The Law of the Ancient Romans: The Twelve Tables* (Dallas: Southern Methodist University Press, 1975).
- ³⁹ Alan Watson, *The Spirit of Roman Law* (Athens, GA: University of Georgia Press, 1995).
- ⁴⁰ David Johnston, *Roman Law in Context* (Cambridge: Cambridge University Press, 1999).
- ⁴¹ Gordon P. Kelly, *Roman Litigation: Cicero's Adjustment of Existing Practice to the Defense of Milo* (Oxford: Oxford University Press, 2014).
- ⁴² John A. Crook, *Law and Life of Rome* (Ithaca, NY: Cornell University Press, 1967).
- ⁴³ Brundage, James A. *Medieval Canon Law*. London: Longman, 1995.
- ⁴⁴ Brundage, James A. *The Medieval Origins of the Legal Profession: Canonists, Civilians, and Courts*. Chicago: University of Chicago Press, 2008.
- ⁴⁵ Helmholz, R. H. *The Spirit of Classical Canon Law*. Athens, GA: University of Georgia Press, 1996.
- ⁴⁶ Տե՛ս նույն տեղում.
- ⁴⁷ Bartlett, Robert. *Trial by Fire and Water: The Medieval Judicial Ordeal*. Oxford: Clarendon Press, 1986.
- ⁴⁸ Bartlett, Robert. *Trial by Fire and Water: The Medieval Judicial Ordeal*. Oxford: Clarendon Press, 1986.
- ⁴⁹ Pennington, Kenneth. "Inquisitio and the Transformation of Medieval Judicial Procedure." In *The History of Courts and Procedure in Medieval Canon Law*, edited by Wilfried Hartmann and Kenneth Pennington, Catholic University of America Press, 2016.
- ⁵⁰ J. H. Baker, *An Introduction to English Legal History*, 5th ed. (Oxford: Oxford University Press, 2019).

⁵¹ David Carpenter, *Magna Carta* (London: Penguin Classics, 2015)

⁵² Lockyer, Roger. *The Early Stuart Monarchy: Politics, Government and Religion, 1603–1640*. London: Longman, 1999.

⁵³ Baker, J. H. *An Introduction to English Legal History*. 5th ed. Oxford University Press, 2019.

⁵⁴ Doyle, William. *Venality: The Sale of Offices in Eighteenth-Century France*. Oxford University Press, 1996.

⁵⁵ John H. Langbein, *Torture and the Law of Proof: Europe and England in the Ancien Régime* (Chicago: University of Chicago Press, 1977).

⁵⁶ Beccaria, Cesare. *On Crimes and Punishments*. 1764. Translated by David Young. Indianapolis: Hackett Publishing, 1986.

⁵⁷ Montesquieu. *The Spirit of the Laws*. 1748. Translated by Anne M. Cohler, Basia Carolyn Miller, and Harold Samuel Stone. Cambridge: Cambridge University Press, 1989,

⁵⁸ International Military Tribunal. *Charter of the International Military Tribunal (Annex to the Agreement for the Prosecution and Punishment of the Major War Criminals of the European Axis)*, August 8, 1945, art. 16.

⁵⁹ Donnedieu de Vabres, Henri. *The Judgment of Nuremberg and the Principle of Legality*. Translated by J. Herrison. Originally published as “Le Jugement de Nuremberg et le principe de légalité,” *Revue de droit pénal et de criminologie* (1947)

⁶⁰ Taylor, Telford. *The Anatomy of the Nuremberg Trials: A Personal Memoir*. New York: Knopf, 1992

⁶¹ United Nations General Assembly. *Universal Declaration of Human Rights*. GA Res. 217 A (III), December 10, 1948.

⁶² United Nations. *International Covenant on Civil and Political Rights*. Adopted December 16, 1966, entered into force March 23, 1976. 999 UNTS 171.

⁶³ Council of Europe. *Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms*. Adopted November 4, 1950, entered into force September 3, 1953. ETS No. 005.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Bartlett, Robert. *Trial by Fire and Water: The Medieval Judicial Ordeal*. Oxford: Clarendon Press, 1986.
2. Baker, J. H. *An Introduction to English Legal History*. 5th ed. Oxford: Oxford University Press, 2019.
3. Beccaria, Cesare. *On Crimes and Punishments*. 1764. Translated by David Young. Indianapolis: Hackett Publishing, 1986.
4. Bentham, Jeremy. *The Works of Jeremy Bentham*. Edited by John Bowring. 11 vols. Edinburgh: William Tait, 1838–1843.
5. Briant, Pierre. *From Cyrus to Alexander: A History of the Persian Empire*. Translated by Peter T. Daniels. Winona Lake, IN: Eisenbrauns, 2002.
6. Brundage, James A. *Medieval Canon Law*. London: Longman, 1995.
7. Brundage, James A. *The Medieval Origins of the Legal Profession: Canonists, Civilians, and Courts*. Chicago: University of Chicago Press, 2008.
8. Charpin, Dominique. *Writing, Law, and Kingship in Old Babylonian Mesopotamia*. Chicago: University of Chicago Press, 2010.
9. Council of Europe. *Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms*. Adopted November 4, 1950, entered into force September 3, 1953. ETS No. 005.
10. Crook, John A. *Law and Life of Rome*. Ithaca, NY: Cornell University Press, 1967.
11. Démare-Lafont, Sophie, and Daniel E. Fleming, eds. *Judicial Decisions in the Ancient Near East*. Atlanta: SBL Press, 2023.
12. Donnedieu de Vabres, Henri. *The Judgment of Nuremberg and the Principle of Legality*. Translated by J. Herrison. Originally published as “Le Jugement de Nuremberg et le principe de légalité,” *Revue de droit pénal et de criminologie* (1947).
13. Doyle, William. *Venality: The Sale of Offices in Eighteenth-Century France*. Oxford: Oxford University Press, 1996.
14. Finkel, Irving. *The Cyrus Cylinder*. London: British Museum Press, 2013.
15. Hansen, Mogens Herman. *Athenian Democracy in the Age of Demosthenes: Structure, Principles, and Ideology*. Oxford: Blackwell, 1991.
16. Harris, Edward M., and Lene Rubinstein, eds. *The Law and the Courts in Ancient Greece*. London: Duckworth, 2004.
17. Helmholz, R. H. *The Spirit of Classical Canon Law*. Athens, GA: University of Georgia Press, 1996.
18. International Military Tribunal. *Charter of the International Military Tribunal*. Annex to the Agreement for the Prosecution and Punishment of the Major War Criminals of the European Axis, August 8, 1945.
19. International Military Tribunal for the Far East. *Charter of the International Military Tribunal for the Far East (Tokyo Charter)*. Proclaimed January 19, 1946. 4 Bevans 20.
20. Johns, C. H. *W. Babylonian and Assyrian Laws, Contracts, and Letters*. New York: Charles Scribner’s Sons, 1904.
21. Johnston, David. *Roman Law in Context*. Cambridge: Cambridge University Press, 1999.
22. Jursa, Michael. *Aspects of the Economic History of Babylonia*. Leiden: Brill, 2010.
23. Kelly, Gordon P. *Roman Litigation: Cicero’s Adjustment of Existing Practice to the Defense of Milo*. Oxford: Oxford

- University Press, 2014.
24. Kramer, Samuel Noah. *History Begins at Sumer*. Philadelphia: University of Pennsylvania Press, 1981.
 25. Kuhrt, Amélie. *The Persian Empire: A Corpus of Sources of the Achaemenid Period*. Vol. 1. London: Routledge, 2007.
 26. Kuryłowicz, Marek. "Some Observations on Judicial Procedure in the Code of Hammurabi." *Zeszyty Prawnicze* 17, no. 2 (2017): 157–169.
 27. Langbein, John H. *The Origins of Adversary Criminal Trial*. Oxford: Oxford University Press, 2003.
 28. Langbein, John H. *Torture and the Law of Proof: Europe and England in the Ancien Régime*. Chicago: University of Chicago Press, 1977.
 29. Lanni, Adriaan M. *Law and Justice in the Courts of Classical Athens*. Cambridge: Cambridge University Press, 2006.
 30. Lanni, Adriaan M. "Social Norms in the Courts of Ancient Athens." *Journal of Legal Studies* 38, no. 1 (2009).
 31. Lieberman, Stephen J. "Nippur: City of Decisions." In *Nippur at the Centennial: Papers Read at the 35th Rencontre Assyriologique Internationale*, edited by Maria de Jong-Ellis, 127–136. Philadelphia: The Pennsylvania State University, 1992.
 32. Lockyer, Roger. *The Early Stuart Monarchy: Politics, Government and Religion, 1603–1640*. London: Longman, 1999.
 33. MacDowell, Douglas M. *The Law in Classical Athens*. Ithaca, NY: Cornell University Press, 1978.
 34. Montesquieu. *The Spirit of the Laws*. 1748. Translated by Anne M. Cohler, Basia Carolyn Miller, and Harold Samuel Stone. Cambridge: Cambridge University Press, 1989.
 35. Pennington, Kenneth. "Inquisitio and the Transformation of Medieval Judicial Procedure." In *The History of Courts and Procedure in Medieval Canon Law*, edited by Wilfried Hartmann and Kenneth Pennington. Washington, DC: Catholic University of America Press, 2016.
 36. Plato. *Apology*. In *Plato: Complete Works*, edited by John M. Cooper. Indianapolis: Hackett Publishing, 1997.
 37. Plato. *Laws*. Translated by Trevor J. Saunders. In *Plato: Complete Works*, edited by John M. Cooper. Indianapolis: Hackett Publishing, 1997.
 38. Radau, Hugo. *Early Babylonian History Down to the End of the Fourth Dynasty of Ur*. New York: Oxford University Press, American Branch; London: A. Frowde, 1900.
 39. Roth, Martha T., ed. *Law Collections from Mesopotamia and Asia Minor*. 2nd ed. Atlanta: Scholars Press, 1997.
 40. Silverstein, Yisroel. "Reign of Terror." *Research Starters: History*. EBSCOhost, 2023.
 41. Taylor, Telford. *The Anatomy of the Nuremberg Trials: A Personal Memoir*. New York: Knopf, 1992.
 42. The National Archives (UK). "Magna Carta, 1215: British Library Magna Carta, Runnymede." *The National Archives: Education Classroom Resources*. Accessed December 11, 2025. <https://www.nationalarchives.gov.uk/education/resources/magna-carta/british-library-magna-carta-1215-runnymede/>
 43. United Nations. *International Covenant on Civil and Political Rights*. Adopted December 16, 1966, entered into force March 23, 1976. 999 UNTS 171.
 44. United Nations General Assembly. *Universal Declaration of Human Rights*. GA Res. 217 A (III), December 10, 1948.
 45. United Nations General Assembly. *United Nations Global Counter-Terrorism Strategy*. A/RES/60/288 (September 8, 2006).
 46. Van Den Bergh, Rena. "The Historical Development of the Patronus as Representative in Civil Proceedings." *Studia Universitatis Babeş-Bolyai – Iurisprudentia* 54, no. 4 (2009): 129–139.
 47. Watson, Alan. *The Law of the Ancient Romans: The Twelve Tables*. Dallas: Southern Methodist University Press, 1975.
 48. Watson, Alan. *The Spirit of Roman Law*. Athens, GA: University of Georgia Press, 1995.
 49. Westbrook, Raymond. "Court Procedure." In *A History of Ancient Near Eastern Law*, vol. I. Leiden: Brill, 2003.

Анаит Абраамян

Соискатель ученой степени кандидата юридических наук
факультета права Евразийского международного университета

РЕЗЮМЕ

*Эволюция становления и развития права на справедливое судебное разбирательство:
историко-правовое исследование*

Статья исследует историко-правовую эволюцию права на справедливое судебное разбирательство от древних месопотамских кодексов до современных международных стандартов. Исследование показывает, что это фундаментальное право сформировалось в результате многовекового исторического опыта, социальной борьбы и развития правовой мысли. Анализируются кодексы Ур-Намму и Хаммурапи, греческая и римская судебные системы, средневековые инквизиционные процедуры. Особое внимание уделяется влиянию эпохи Просвещения через идеи Беккариа, Монтескье и Вольтера, интернационализации прав человека после Второй мировой войны через Всеобщую декларацию и региональные конвенции, а также современным вызовам нарушения принципов справедливого правосудия под предлогом «необходимости» в контексте борьбы с терроризмом. Подчеркивается хрупкость этих прав и необходимость их постоянной защиты.

Ключевые слова: Справедливое судебное разбирательство, права человека, историко-правовая эволюция, право на защиту, правовая система Месопотамии, развитие права, правовая философия, международное право, процессуальные гарантии, верховенство права.

Anahit Abrahamyan

PHD Candidate of the Law Faculty of Eurasia International University

SUMMARY

*The evolution of the formation and development of the right to a fair trial:
a historical-legal study*

This article examines the historical and legal evolution of the right to fair trial from ancient Mesopotamian codes to contemporary international standards. The study demonstrates that this fundamental right emerged through centuries of historical experience, social struggle, and the development of legal thought. The analysis covers Ur-Nammu's and Hammurabi's codes, Greek and Roman judicial systems, and medieval inquisitorial procedures. Special attention is given to the Enlightenment's influence through the ideas of Beccaria, Montesquieu, and Voltaire; the post-World War II internationalisation of human rights via the Universal Declaration and regional conventions; and modern challenges to fair trial principles under the guise of "necessity" in counterterrorism contexts. The research emphasises that fair trial rights remain fragile and require constant protection against institutional erosion and political manipulation.

Key words: Fair trial, human rights, historical-legal evolution, right to defence, Mesopotamian legal system, development of law, legal philosophy, international law, procedural guarantees, rule of law.

ԲԱՐԵՂԱՄ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ Հակակոռուպցիոն դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր
մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**ՏՈՒԺՈՂԻ ԵՎ ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻ
ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Սույն հոդվածում քննարկել ենք Հայաստանի Հանրապետությունում տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի կիրառման ընթացքում առաջացող խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցները:

Քրեական իրավունքի տեսության մեջ բացակայում են միասնական տեսակետներ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի վերաբերյալ մի շարք հարցերում, ինչպես նաև օրենսդրությամբ առկա են մի շարք բացեր, որոնք հանգեցնում են միասնական իրավակիրառ պրակտիկայի խաթարմանը:

Տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի ուսումնասիրության արդյունքում սույն հոդվածում իմ կողմից վեր են հանվել մի շարք հիմնախնդիրներ, դրանց լուծման համար առաջարկվել են փոփոխություններ և լրացումներ, ինչի կատարումը կնպաստի նշյալ ինստիտուտի կատարելագործմանը:

Հիմնաբառեր - Տուժող, հանցանք կատարած անձ, հաշտություն, քրեական պատասխանատվություն, ազատել պատասխանատվությունից, հիմնախնդիրներ, կիրառման պրակտիկա, իրավական կարգավորումներ, քրեական իրավունքի տեսություն, օրենսդրական բացեր, դատական պրակտիկա:

1. Ներածություն

Հանցավորության դեմ պայքարը բոլոր ժամանակների և հասարակարգերի առջև ծառայած մեծագույն խնդիրներից է: Հանցավորության դեմ պայքարի առավել գործուն միջոցը պետության կողմից երաշխավորված հարկադրանքն է՝ պատժի սպառնալիքով: Պատիժն իր հերթին հետապնդում է նպատակներ, որոնք են՝ հանցանք կատարած անձին ուղղելը, նոր հանցագործությունները կանխելը և սոցիալական արդարության վերականգնումը:

Շատ հաճախ պատժի նպատակն իրագործվում է մինչև անձին քրեական պատասխանատվության բերելն ու պատիժն ի կատար ածելը: Նման դեպքերը վերաբերում են այն իրողություններին, երբ հանցանք կատարելուց հետո հանցանք կատարած անձի կողմից դրական վարքագիծ դրսևորելու արդյունքում ի հայտ է գալիս այնպիսի իրավիճակ, երբ կարելի է փաստել, որ հանցանք կատարած անձը կորցրել է իր երբեմնի վտանգավորությունը կամ ծագած իրավահարաբերությանը կորցրել է իր արդիականությունը:

Հարկ է նկատել, որ հանցանք կատարած անձի և տուժողի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու օրենսդրական ներկայի բնորոշումն էականորեն տարբերվում է քրեական նախկին օրենսգրքում առկա ձևակերպումից: Հիմնական տարբերությունը հանգում է նրան, որ քննարկվող քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը դարձել է իմպերատի-

վե, այսինքն, եթե նախկին ձևակերպմամբ նշվում էր՝ «(...) կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից (...)», ապա նոր տարբերակում ձևակերպումը հետևյալն է՝ «(...) ազատվում է քրեական պատասխանատվությունից (...)», այսինքն՝ անհրաժեշտ վավերապայմանների առկայության պարագայում՝ անձը պարտադիր ազատվում է քրեական պատասխանատվությունից և դա չի թողնում վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը: Պետք է նկատել, որ նոր ձևակերպումները ինչպես լուծել են նախկինում առկա իրավական բացերը, այնպես էլ առաջացրել են մի շարք հարցեր, որոնք պրակտիկայում պետք է ստանան իրենց լուծումները և հանգուցալուծվեն, ինչի համար պարտադիր է նաև տեսական մեկնաբանումների և հայեցակարգերի առկայության անհրաժեշտությունը: Որպես նորացված և առավել լայն կիրառություն ստացած օրենսդրական խրախուսական նորմ, հանցանք կատարած անձի և տուժողի հաշտությունը արժանի է պատշաճ իրավական գնահատման և վերլուծության, քանի որ սույն ինստիտուտի գործարկումն իրավակիրառ պրակտիկայում հանդիպում է հաճախ և վարույթն իրականացնող մարմնին բախվում է մի շարք խնդիրների, որոնք դիսպոզիտիվ առումով լայն մեկնաբանված չեն:

Այլ խոսքով՝ թեմայի արդիականությունը պայմանավորված է 2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի ընդունմամբ:

Տուժողի հետ հաշտվելու պարագայում հանցանք կատարած անձը զոջում է իր կատարած արարքի համար, գիտակցում դրա հասարակական վտանգավորությունը, կատարման անթույլատրելիությունը և կամավոր հատուցում հանցագործությանը պատճառված վնասը: Հանցավորի կողմից կամավոր, առանց որևէ հարկադրական գործողության, իր մեղքն ընդունելը և զոջալը էապես նվազեցնում են այն հնարավորությունը, որ հանցավորը հետագայում հանցանք կկատարի, այսինքն՝ ինստիտուտն ունի նաև պրևենտիվ գործառույթ: Առաջին հերթին այս ինստիտուտի կիրառումը մեծ նշանակություն ունի տուժողի համար, քանի որ հաշտեցման արդյունքում իր շահերի պաշտպանությունը, կապված պատճառված վնասների հատուցման հետ, տեղի է ունենում առավել արագ և արդյունավետ:

Այս առումով ինստիտուտի կիրառումը նաև մեծ նշանակություն ունի պետության համար, քանի որ հաշտեցումը հանցավորության դեմ պայքարի այլընտրանք է, իսկ հանցանքը ուղղված է ոչ միայն տուժողի, այլև ամբողջ հասարակության և պետության դեմ: Ինստիտուտի առկայությունը և գործածումը պետության համար ձեռնտու է նաև այն առումով, որ խնայվում է նաև վերջինիս նյութական ծախսերը՝ կապված պատժի իրականացման հետ:

2. Հետագոտության մեթոդաբանության հիմքը հողվածում դիալեկտիկական մատերիալիզմն է, որը թույլ է տվել քննել ստեղծված քրեաիրավական իրականությունը դրա զարգացման դիալեկտիկայի և արդի հասարակության այլ իրողությունների հետ փոխկապվածության մեջ: Ինչպես նաև, օգտագործվել են մասնավոր գիտական մեթոդներ՝ համեմատական վերլուծության, համակարգային վերլուծության, համեմատական-իրավական, դատական պրակտիկայի ընդհանրացման: Կիրառվել է նաև տրամաբանական մեթոդների համալիր՝ վերլուծության, համադրման, ինդուկցիայի և դեդուկցիայի:

3. Հետագոտության արդյունքեր և քննարկում
Բազմաթիվ քրեագետներ, հանցագործության կանխման առավել արդյունավետ միջոց համարել են ոչ թե պատժի խստությունը, այլ դրա անխուսափելիությունը: Վերջինս իր ամրագրումն է գտել տարբեր երկրների քրեական օրենսգրքերում, համաձայն որի՝ հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է քրեական պատասխանատվության: Այս ամենով հանդերձ, տարբեր երկրների քրեական օրենսգրքեր պատասխանատվության անխուսափելիության հետ միասին ամրագրել են քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ինստիտուտ՝ նշելով այն անհրաժեշտ հիմքերն ու պայմանները, որոնց առկայության դեպքում միայն անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից:

Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը չի կարող համարվել զուտ քրեաիրավական հիմնախնդիր: Բանն այն է, որ տվյալ ինստիտուտի կիրառման համար կարևոր նշանակություն ունի նաև դատավարական կողմը: Ուստի պետք է համաձայնել մասնագիտական գրականության մեջ իրավացիորեն արտահայտված այն կարծիքին, որ տվյալ դեպքում խոսքը համալիր քրեաիրավակալն և քրեադատավարական ինստիտուտի մասին է:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը հակասում է պատժի և պատասխանատվության անխուսափելիության սկզբունքին, սակայն միաժամանակ պարզ է նաև, որ գործնականում միշտ չէ, որ նպատակահարմար է հանցանք կատարած անձին ենթարկել քրեական պատասխանատվության և պատժի՝ կապված կատարված հանցավոր արարքի բնույթի, ծանրության աստիճանի, անձի դրսևորած վարքագծի, վերջինիս բնութագրող հանգամանքների հետ: Այդ առումով բազմաթիվ երկրներ, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունը, իրենց քրեական օրենսգրքերում ամրագրել են քրեական օրենսդրության այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են արդարության, մարդասիրության, պատասխանատվության անհատականացման սկզբունքները, որոնց դրսևորման եղանակներից են հանդիսանում քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն զոջալու, տուժողի հետ հաշտվելու, իրադրության փոփոխման և այլ հիմքերով:

Ի տարբերություն արդարացման և այլ հիմքերով քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների, որոնց դեպքում քրեական պատասխանատվության հարց ընդհանրապես առաջանալ չի կարող, քրեական պատասխանատվությունից ազատելը հնարավոր է միայն այն դեպքերում, երբ անձի արարքը պարունակում է կոնկրետ հանցագործության բոլոր հատկանիշները և առկա են անձի քրեական պատասխանատվության ենթարկելու բոլոր նախադրյալները:

Հետևաբար, քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը պետք է դիտել որպես պետության քրեական քաղաքականության կարևորագույն մաս, իսկ քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու դեպքում՝ որպես քրեական քաղաքականության կարևորագույն մասի բաղադրիչ:

Ժամանակակից բազմաթիվ պետությունների օրենսդրությունների չափորոշիչներից են դրանց համապատասխանեցումը մարդասիրության սկզբունքների պահանջներին, մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթներից բխող բազմաթիվ միջազգային պայմանագրերին:

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մարդասիրության սկզբունքի պահանջների իրացումը պետությունները կատարել են տարբեր եղանակներով, այդ թվում՝ գործուն գոջալու, տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու, մեղադրողի և մեղադրյալի միջև գործարքի կնքման, հաշտության (մեղիացիալի), վերականգնողական արդարադատության և այլ ինստիտուտների ներդրման միջոցով: Ընդ որում, այդ ինստիտուտները համարվում են հեռանկարային, մի կողմից՝ անձի հետագա հանցավոր գործունեության կանխարգելման, մյուս կողմից հանցագործություններից տուժած անձանց իրավունքների, մասնավորապես՝ նյութական վնասի վերականգնման առումով: Դրանով էլ պայմանավորված ինչպես տեսական, այնպես էլ գործնական կիրառական առումով հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

Ընդհանրապես, առանց ներելու քրեական արդարադատությունը կորցնում է իր իմաստը և վերածվում է պատժիչ համակարգի: Քրեական իրավունքը, անկասկած, չի կարող հիմնվել միայն պատժողական քաղաքականության վրա: Այդ մասին է վկայում քրեական իրավունքում քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը: Փաստորեն, պետությունը պատժողական քաղաքականությունից անցում է կատարում հաշտեցման կամ վերականգնողական արդարադատության, որի նպատակն է տուժողի իրավունքների վերականգնումը, նրան հասցված վնասի հատուցումը, հանցավորի կողմից մեղքի քավումը:

Ցանկացած պետություն ձգտում է, որ իր քաղաքացիները կատարեն հանրօգուտ գործողություններ: Դրա համար նա փորձում է ստեղծել պայմաններ, այդ թվում՝ օրենսդրական եղանակով, երբ նման գործողություններ կատարելը շահավետ է, երբ դրանից քաղաքացին ինքն օգուտ է ստանում: Օրենսդրությունը միջոց է, որի օգնությամբ ձևավորվում են դրական սոցիալական վարքագծի կարծրատիպեր: Ընդ որում, յուրաքանչյուր պետության համար կարևոր է, որ այդ կարծրատիպերը ձևավորվեն մարդու գործունեության ամենատարբեր բնագավառներում: Առանձնապես կարևոր է քրեական դատավարության ոլորտը կարգավորելը, քանի որ այն ներառում է պետության և հասարակության համար առավել նշանակալի հարաբերությունների, արժեքների պաշտպանությունը: Քրեական իրավունքում տիրապետողը կարգավորման իմպերատիվ մեթոդն է՝ քրեական օրենսդրությունում որոշակի գործողությունների արգելման մեթոդը: Դրանից զատ, կիրառվում է (թեկուզև ավելի փոքր ծավալով) խրախուսման մեթոդը: Խրախուսման մեթոդի արդյունավետությունը պայմանավորված է այն բանով, որ այն չի հարկադրում մարդուն կատարել հասարակության ու պետության համար ցանկալի գործողություններ, այլ նրա մեջ համոզ-

մունք է ձևավորում, որ հատկապես նշյալ գործողություններն են իր համար առավել օգտակար: Կոնկրետ անձինք, որոնց հասցեագրված են քրեական օրենքի համապատասխան նորմերը, նման համոզմունքն ընկալում են որպես որևէ մեկի կողմից չպարտադրված, սեփական որոշման արդյունք, ուստի համապատասխան գործողությունները կատարում են ինքնակամ՝ առանց որևէ հարկադրանքի:

Ընդ որում, այն հարցում, թե ինչպես պետք է կիրառել խրախուսման միջոցները, կան տարբերություններ՝ պայմանավորված տվյալ պետության պատմական-իրավական ավանդույթներով: Այսպես, նախկին ԽՍՀՄ հանրապետությունների ավանդույթը ենթադրում է գործողությունների՝ միանգամայն որոշակի շրջանակ, որոնց կատարումը պետք է խրախուսվի: Այդ գործողությունների միջուկը տուժողի հաշտվելն է համապատասխան հանցագործությունը կատարելու մեջ իրեն մեղավոր ճանաչող անձի հետ: Դա զգալի չափով պայմանավորված է այն բանով, որ քրեական դատավարության նշյալ նորմերը որևէ չափով չեն վարկաբեկվել անգամ պատմական այն ժամանակափուլերում, որոնք աչքի են ընկել ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ բնակչության տարբեր խավերի նկատմամբ ազդեցության բռնի միջոցների կիրառման չարաշահմամբ: Առավել ևս, որ խրախուսման միջոցները քրեական դատավարությունում ենթադրում են հավասարակշռության հաստատում հասարակությունում կոնկրետ անձի մասնավոր շահի և ամբողջ հասարակության շահի միջև, որը շահագրգռված է իրավակարգը վերականգնելու հարցում: Խրախուսման ժամանակ կարևոր է կանխարգելիչ արդյունքը, որի էությունն այն է, որ անձը պետք է ձևավորի իր մեջ հանրօգուտ որոշակի գործողությունների անհրաժեշտության համոզմունք: Նման համոզմունքի առկայության դեպքում նա հետագայում ձեռնպահ կմնա հանցագործություններ և նույնիսկ այլ տիպի իրավախախտումներ կատարելուց:

Խրախուսման մեթոդը լիովին համապատասխանում է քրեական իրավունքի սկզբունքներին, որոնք ձևավորվել են հետխորհրդային տարածքի պետությունների քրեական օրենսդրությունում: Ուստի այն նորմերը, որոնցում այդ մեթոդը արտացոլվում է, փաստորեն կանխորոշել են քրեական դատավարության համակարգը, որը ձևավորվել է այնպիսի սկզբունքների հիման վրա, ինչպիսիք են մարդասիրությունը, արդարությունը և այլն: Այսպես՝ մարդասիրության սկզբունքը արտահայտվում է այն բանով, որ պետությունն իմաստ չի տեսնում խիստ պատժամիջոցներ կիրառելու այն անձանց նկատմամբ, որոնք զոջացել են և, համապատասխանաբար, բացասաբար են գնահատել իրենց կատարած հանցագործությունը, քանի որ հանցավոր

www.aradadatuynjournal.com

արարքների անթույլատրելիության մասին իրենց մեջ ձևավորված համոզմունքից ելնելով՝ նրանք այլևս հասարակական վտանգ չեն ներկայացնում:

Դա հաստատվում է իրավապահ մարմինների պրակտիկայով, որը վկայում է այն մասին, որ զոջացողները հազվադեպ են նոր հանցանքներ գործում: ՀՀ քրեական օրենսգրքում խրախուսումը լիովին արտացոլված է 81 և 82 հոդվածներում: Նշյալ նորմերը կոչված են հանցագործություն կատարելու համար մեղավոր անձի մեջ ձևավորելու համոզմունք առ այն, որ իր կատարած արարքը հանցավոր է, ուստի այլևս անթույլատրելի է կատարել: Դրանով կոնկրետ մեղավոր անձն ուղղվում է քրեական օրենքի միջոցներով, ինչը դարձնում է նրան հասարակության համար ոչ վտանգավոր, քանի որ նրա մեջ ձևավորվում է նոր հանցագործություններ կատարելու անթույլատրելիության համոզմունք:

ԱՊՀ երկրներից շատերի համար բնութագրական է այն, որ հանցանք գործելու մեջ մեղավոր անձի՝ հասարակության ակնկալած որոշակի վարքագիծը խրախուսող նորմերին բնորոշ է միասնական կառուցվածքը, որը ներառում է կանխավարկածը, դիսպոզիցիան, պատժամիջոցն ու խրախուսումը: Բացի այդ, նշյալ նորմերը խթան են դառնում հանցանք գործելու մեջ մեղավոր անձի հանրօգուտ վարքագծի համար: Այսպես՝ ՌԴ քր. օր. -ի 75² հոդվածում որպես պայմաններից մեկը ուղղակիորեն նշված է գործուն գոջալը, այսինքն՝ անձի կողմից սեփական հանցավոր վարքագծի բացասական գնահատականը:

ՌԴ քր. օր. -ի 76 հոդվածում, թեև գործուն գոջալն անմիջականորեն չի նշվում, բայց այն ենթադրվում է, քանի որ տվյալ նորմով նախատեսված վնասը հարթելը գործողություն է, որը զոջման դրսևորում է: Բացի այդ, տուժողի հետ հաշտվելը նույնպես այն բանի արտահայտությունն է, որ մեղավորը գիտակցում է իր գործողությունների բացասական բնույթը և չի ցանկանում դրանց կրկնությունը: Ինչպես տեսնում ենք, նշյալ նորմերի թե՛ կառուցվածքը, թե՛ բովանդակային կողմը ամբողջովին նույնական է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության նորմերին: Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսդրության նշյալ նորմերը ևս մարդասիրության սկզբունքի դրսևորում են, որը բնութագրում է վերջին տասնամյակներին իրականացվող ամբողջ քրեական քաղաքականությունը:

Քրեական օրենսդրությունում խրախուսման մեթոդին համանման մոտեցում է ցուցաբերվում հետխորհրդային տարածքի այլ պետություններում ևս: Այսպես, Տաջիկստանի Հանրապետության քր.օր.-ում նախատեսված է գործուն գոջման կապակցությամբ պատասխանատվությունից ազատելու նորմ (ՏՀ քր. օր. -ի 72 հոդված) և նորմ, որով նախատեսվում է ազատել պատասխանատվու-

թյունից տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ (ՏՀ քր. օր. -ի 73 հոդված): Ուշագրավ է, որ նշյալ նորմերը գործնականում ամբողջությամբ նույնական են Հայաստանի Հանրապետության քր. օր. -ի համապատասխան նորմերին:

Դա կարելի է գնահատել այնպես, որ նշյալ նորմերի՝ այդպիսի կառուցվածքն ու բովանդակությունն առավելագույնս համապատասխանում են այդ պետությունում իրավունքի նորմերի կիրառման պրակտիկային: Ընդ որում, կապ չունի, որ այդ պետությունն անցել է ինքնուրույն, անկախ զարգացման բավականին տևական փուլ: Ավելին, տվյալ նորմերը մեծապես ուղղված են նշյալ պետության քրեական օրենսդրության ապագա զարգացմանը: Դրանում տեսնում են ներուժ, որը լիովին համապատասխանում է հասարակության ու պետության զարգացման մակարդակին: Նշյալ նորմերը նաև ընկալվում են որպես նորմեր, որոնք լիովին համապատասխանում են հասարակության ու պետության արժեքներին, մասնավորապես մարդասիրության վրա հիմնված արժեքներին:

Անգամ այն դեպքում, երբ հետխորհրդային տարածքի համապատասխան հանրապետության օրենսդրությունը լրջորեն բարեփոխվել է՝ հրաժարվելով նախկին խորհրդային իրավունքի մոդելից, նորմերը, որոնցում դրսևորվում է խրախուսման մեթոդը քրեական իրավունքում, որպես կանոն, մնում են նախկինը: Անշուշտ, ձևը կարող է որոշակիորեն փոփոխվել: Օրինակ՝ Ուկրաինայի քր. օր.-ում⁴ նախկինի պես առկա են նորմեր գործուն գոջալու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին (Ուկրաինայի քր. օր.-ի 45 հոդված) և նորմեր քրեական պատասխանատվությունից ազատելու մասին՝ տուժողի հետ մեղավորի հաշտվելու կապակցությամբ (Ուկրաինայի քր. օր.-ի 46 հոդված): Վերոնշյալ նորմերը գործնականում բառացի կրկնում են նախկին ՍՀՄ կազմում եղած այլ հանրապետությունների համապատասխան նորմերը: Դա ևս մեկ լրացուցիչ փաստարկ է հօգուտ այն բանի, որ նշյալ նորմերը կրում են համամարդկային արժեքներ, որոնք անկախ են ազգությունից և համապատասխան պետության ու հասարակության այլ յուրահատկություններից: Դրանք անկախ են անցյալի գնահատականներից. անցյալի, որը տարբեր կերպ է գնահատվում նախկին ԽՍՀՄ կազմում եղած հանրապետություններում: Ընդ որում, նշյալ նորմերը որևէ քննադատության չեն արժանանում. դրանք դիտվում են որպես տվյալ պետությունում իրականացվող բարեփոխումներին համապատասխանող:

Ուշագրավ է, որ նորմերը, որոնցում դրսևորվում է խրախուսման մեթոդը քրեական իրավունքում, առկա են նաև այն հանրապետություններում, որոնք նախկինում մտնում էին ԽՍՀՄ կազմի մեջ, բայց ներկայումս ԱՊՀ կազմում չեն, այլ Եվրամի-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ուրջան անդամ են: Չնայած խորհրդային անցյալի հետ կապված ամեն ինչի նկատմամբ կտրուկ բացասական վերաբերմունքին՝ քրեական օրենսդրությունում նկատվում է վերոնշյալ նորմերի մասով շարունակականություն: Այսպես, Լատվիայի քր. օր.-ում հատուկ չի առանձնացվում գործուն գղջալու և տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին նորմը: Դա մեծապես պայմանավորված է քրեական օրենսդրության կառուցվածքի առանձնահատկություններով, որոնք դրսևորվում են քրեական պատասխանատվությունից ազատելու մասին նորմերի շարադրման ձևով: Այսպես, Լատվիայի Հանրապետության քր. օր.-ում քրեական պատասխանատվությունից ազատելու մասին բոլոր նորմերը միավորված են հոդված 58-ում, որն այդպես էլ կոչվում է՝ «Քրեական պատասխանատվությունից ազատելը»: Ընդ որում, չնայած ձևի այդպիսի փոփոխությանը, Լատվիայի քր. օր.-ի վերոնշյալ հոդվածին ծանոթանալիս ակնհայտ է դառնում, որ օրենսդիրն այդպես էլ չի կարողացել զերծ մնալ քրեական իրավունքի խորհրդային դպրոցի ազդեցությունից: Դա մասնավորապես արտահայտվում է այն բանում, որ այստեղ նախկինի պես առկա են նորմեր, որոնք գրեթե բառացի կրկնում են այդ պետությունների խորհրդային շրջանի քրեական օրենսդրության նորմերը քրեական պատասխանատվությունից ազատելու մասով: Այսպես, Լատվիայի Հանրապետության քր. օր.-ի 58 հոդվածի 2-րդ մասում պարունակվում է նորմ, որի համաձայն՝ քրեական պատասխանատվությունից կարող է ազատվել այն անձը, որը հաշտության համաձայնագիր է կնքել տուժողի կամ նրա ներկայացուցչի հետ: Քրեական պատասխանատվությունից նշյալ հիմքով ազատվել չի կարող միայն այն անձը, որի գործողության արդյունքում տուժողը մահացել է: Այնտեղ է, որ նշյալ նորմը գործնականում չի տարբերվում նախկին խորհրդային հանրապետությունների քրեական օրենսդրության համանման նորմերից՝ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին: Այստեղ միանգամայն ակնհայտ է այն, որ օրենսդիրը ձգտել է խթանել համապատասխան անձի վարքագիծը՝ հարթելու այն վնասը, կորուստը, որը պատճառել է իր կատարած հանցագործության հետևանքով: Նշյալ նորմի առկայությունը Լատվիայի Հանրապետության քրեական օրենսդրությունում վկայում է այն մասին, որ այդ նորմում տեղ գտած արժեքները համամարդկային են և կախված չեն տվյալ պետությունների քաղաքական վարչակարգերի քաղաքական կամ այլ նախընտրություններից: Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին նորմը տեղ է գտել նաև Լիտվայի Հանրապետության քրեական օրենսդրությունում:

Ընդ որում, իր ձևով ու բովանդակությամբ այդ նորմն ավելի հոգեհարազատ է ԱՊՀ երկրների քրեական օրենսդրության համանման նորմերին: Այսպես, Լիտվայի Հանրապետության քր. օր.-ի 38-րդ հոդվածը այդպես էլ կոչվում է՝ «Քրեական պատասխանատվությունից ազատելը մեղավոր անձի և տուժողի հաշտության կապակցությամբ»: Այն նման է մեր և ԱՊՀ այլ երկրների քրեական օրենսդրության համապատասխան նորմերին:

Ի տարբերություն Լատվիայի Հանրապետության՝ Լիտվայի Հանրապետության օրենսդիրը չի ցանկացել հրաժարվել տուժողի հետ հաշտության կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին նորմի շարադրման ձևից, որն առկա էր տվյալ պետության՝ խորհրդային շրջանում: Միանգամայն ակնհայտ է, որ դա բնավ կապված է ոչ թե խորհրդային օրենսդրության զարգացման ավանդույթները պահպանելու, այլ այն բանի հետ, որ նշյալ նորմի և՛ ձևը, և՛ բովանդակությունն առավելագույնս համապատասխանում են քրեական օրենսդրությունից ունեցած սցիալական ակնկալիքներին: Նման ձևն ու բովանդակությունը հարկ է ճանաչել առավելագույնս օպտիմալ արդեն հանցագործություն կատարած անձանց հանրօգուտ վարքագիծը խթանելու համար: Այդ ձևն ու բովանդակությունը առավելագույն արդյունավետությամբ են ձևավորում համոզմունք համապատասխան անձանց մեջ, ինչը խոչընդոտում է նրանց կողմից նոր հանցագործություններ կատարելը:

Այնտեղ է, որ հենց դրանով է թելադրված Լիտվայի Հանրապետության օրենսդրի ցանկությունը՝ չառանձնացնելու տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին նորմը: Այն ամենաշատն է համապատասխանում համաշխարհային քրեական օրենսդրության զարգացման ընդհանուր միտումներին:

Այդուհանդերձ, Մերձբայթյան ոչ բոլոր հանրապետությունների քրեական օրենսդրությունում են առկա նորմեր, որոնցով տուժողի հետ հաշտվելը համարվում է քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք: Այսպես, Էստոնիայի Հանրապետությունն ամբողջովին հրաժարվել է քրեական պատասխանատվությունից ազատելու նշյալ հիմքը նշելուց: Բայց դա բնավ չի նշանակում, որ արդարադատության մարմիններն ուշադրություն չեն դարձնում հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձի և հանցագործությունից տուժած անձի միջև հաշտության փաստին: Էստոնիայի Հանրապետության օրենսդրության առանձնահատկությունն այն է, որ տուժողի հետ հաշտությունը չի դիտվում որպես քրեական իրավունքի ինստիտուտ: Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսդրությունում չկա նորմ տուժողի հետ հաշտվելու կա-

www.aradadutyjournal.com

պակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին: Սակայն դա բնավ չի նշանակում, որ հանցագործություն կատարելու մեջ մեղավորի և տուժողի միջև հաշտությունը չի խրախուսվում գործող օրենսդրությամբ: Քրեադատավարական օրենսդրությունում նախատեսված է մի հանգամանք, որը բացառում է քրեական գործով վարույթը, որը ձևակերպված է որպես տուժողի հետ մեղադրյալի հաշտեցում: Դա թույլ է տալիս կարճել քրեական գործը մեղադրյալի և տուժողի միջև հաշտության կապակցությամբ (Էստոնիայի Հանրապետության քր. դատ. օր.-ի հոդված 5-ի 6-րդ մաս): Նշյալ նորմը թեև քրեադատավարական է, այլ ոչ թե քրեական, պարունակում է հանրորեն դրական վարքագծի խթան, որն ակնկալում է պետությունը մեղադրյալից, եթե վերջինս մեղավոր է համապատասխան հանցագործությունը կատարելու մեջ: Այսինքն՝ Էստոնիայի Հանրապետության օրենսդրությունը չի հրաժարվել տուժողի հետ հաշտվելը խրախուսող նորմերից: Դրանով իսկ պահպանվել են խրախուսման մեթոդի կիրառման մոտեցումները:

Քրեական իրավունքում տուժողի հետ հաշտեցման ինստիտուտից հրաժարվելը և քրեադատավարական իրավունքում մեղադրյալի և տուժողի միջև հաշտության ինստիտուտը պահպանելը նպատակ ունենի խնայելու օրենսդրական միջոցները: Էստոնիայի Հանրապետության օրենսդիրն ավելորդ է համարել ևս մեկ անգամ կրկնել նույն նորմը: Այսինքն՝ քրեական և քրեադատավարական օրենսդրության՝ նշյալ նորմերն ընկալվել են որպես նույնական, ուստի օրենսդիրն ավելորդ է համարել նույն բանը կրկնել մեկ անգամ քրեական օրենսդրությունում, երկրորդ անգամ՝ քրեադատավարական օրենսդրությունում: Կարծում ենք՝ սա ճիշտ մոտեցում չէ, քանի որ չի կարելի նույնական համարել քրեական իրավունքում տուժողի հետ հաշտեցման ինստիտուտը և քրեադատավարական իրավունքում մեղադրյալի և տուժողի միջև հաշտության ինստիտուտը: Քրեադատավարական ինստիտուտը հաշտությունը դիտարկում է որպես քրեական դատավարության կողմերի միջև կայացվող որոշում, մինչդեռ քրեական իրավունքում տուժողի հետ հաշտեցումը դիտվում է որպես հանցագործությունը կատարած մեղավոր անձի զոջման գործողություն, որն ընդունվում է այդ հանցագործությունից տուժած անձի կողմից: Բացի այդ, քրեական իրավունքի և քրեադատավարական իրավունքի՝ նշյալ նորմերը նույնպես տարբերվում են, ինչպես որ տարբերվում են «հանցագործություն կատարելու մեջ մեղավորը» և «մեղադրյալը»: Մեղադրյալն անպայման մեղավոր չէ հանցագործություն կատարելու մեջ, քանի որ դա դեռ պետք է սպացուցել քրեական դատավարության ընթացքում օրենքով սահմանված կարգով: Միևնույն ժա-

մանակ, քրեական իրավունքում խոսքը միայն հանցագործություն կատարելու մեջ մեղավորի մասին է: Այս առումով քրեական իրավունքի և քրեական դատավարության՝ նշյալ դրույթները բավականին մոտ են իմաստով և լրացնում են իրար, սակայն դրանք չի կարելի նույնական համարել: Հետևաբար՝ ավելի տրամաբանական կլիներ չիրաժարվել տուժողի հետ հաշտեցման մասին դրույթից Էստոնիայի Հանրապետության քրեական իրավունքում:

Էստոնիայի Հանրապետության օրենսդրության վերլուծության մեջ կարևոր է այն, որ այստեղ էլ, չնայած ԽՍՀՄ օրենսդրական ժառանգությունից հրաժարվելու ակնհայտ ցանկությանը, այնուամենայնիվ չեն հրաժարվել հաշտեցման ինստիտուտից: Միակ առանձնահատկությունն այն է, որ դա տեղ է գտել քրեադատավարական իրավունքում, ինչը որոշ չափով աղքատացնում է հաշտեցումը որպես միջոցառում ինստիտուտ: Դա կարող է բացատրվել միայն այն բանով, որ նշյալ միջոցառումն ինստիտուտն անհրաժեշտություն է իրավունքի համակարգի համար, որը պետք է համապատասխանի մարդասիրության սկզբունքին՝ առավել ևս, երբ տվյալ ինստիտուտը նոր հանցագործությունները կանխարգելելու արդյունավետ միջոց է: Տուժողի հետ հաշտեցման դիմած մեղավոր անձը դադարում է լինել հանրորեն վտանգավոր, քանի որ հանգել է այն համոզմունքին, որ իր կատարած գործողություններն անընդունելի են. ուստի, անթույլատրելի է այլ գործողություններ կատարելը, որոնցով կարող է որևէ մեկին վնաս պատճառվել: Դա այն հիմնական պատճառներից է, որ Մերձբալթյան հանրապետությունների օրենսդրությունը չի հրաժարվել տուժողի հետ հաշտեցման ինստիտուտից: Դա նաև կարող է լավ փաստարկ դառնալ հոգուտ այն բանի, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ ցանկացած բարեփոխում չիրաժարվի տվյալ ինստիտուտից: Ընդ որում, չարժե հրաժարվել դրա քննադատական վերլուծությունից՝ այն կատարելագործելու և արդյունավետությունն ավելի բարձրացնելու նպատակով: Տվյալ ինստիտուտի արդյունավետությունը բարձրացնելը ենթադրում է նոր հանցագործությունների կատարումը կանխարգելելու արդյունավետության բարձրացում: Սակայն, դրանով հանդերձ, տվյալ ինստիտուտի հիմքում ընկած գաղափարն ինքնին հիմնված է մի սկզբունքի վրա, որը պետք է պայմանավորի ցանկացած ժամանակակից պետության ամբողջ քրեական օրենսդրությունը՝ մարդասիրության սկզբունքը: Այդ սկզբունքը արժեք է, որը պետք է արտացոլվի ամբողջ օրենսդրությունում:

Հետխորհրդային տարածքի պետությունների քրեական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հիմնական միտումը տու-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ժողի հետ հաշտեցման ինստիտուտը պահելն է: Ուշագրավ է, որ նշյալ ինստիտուտը պահպանվում է գրեթե անփոփոխ: Ընդ որում, կատարված հանցագործության հետևանքով առաջացած խնդիրները լուծելու արտադատարանական կարգը, որը հայտնի է որպես հաշտարարություն, դեռևս դիտարկվում է գուտ տեսական մակարդակում: Տուժողի հետ հաշտեցումը դիտարկվում է որպես հաշտարարության տեսակներից մեկը քրեական իրավունքում և քրեական դատավարությունում: Դա նույնպես համարվում է պատճառներից մեկը, որով տուժողի հետ հաշտեցումը, որպես միջոցառում ինստիտուտ, նախկինի պես արտացոլվում է քրեական և քրեադատավարական օրենսդրությունում: Ընդ որում, հաշտարարությունը քրեական դատավարությունում նույնացնում են հենց կողմերի հաշտեցման հետ, քանի որ այստեղ հաշտությունը համաձայնություն է հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձի և կատարված հանցագործությունից տուժածի միջև: Նշյալ հաշտության ձևն օրենսդրությամբ չի կարգավորվում: Այն կարող է լինել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Այդ համաձայնության գլխավոր նշանակությունն այն է, որ դրանից կարելի է միանշանակ հետևություն անել հաշտության առկայության մասին: Այս առումով ծագում են մի շարք հարցեր, որոնց պետք է պատասխանեն ԱՊՀ երկրների օրենսդրությունները: Դրանով է մեծապես պայմանավորված մեղավորի և տուժողի միջև ձեռք բերված հաշտության արդարացիության ընկալումը: Դրանից է կախված այն, թե որքանով է ձեռք բերվող հաշտությունն արտացոլում այն ձեռք բերող անձանց շահերը: Ներկայումս հաշտեցման ընթացակարգն օրենսդրությամբ որևէ կերպ չի կարգավորվում, որովհետև այն չի կարող լինել ո՛չ քրեական, ո՛չ քրեադատավարական իրավունքի կարգավորման առարկա, քանի որ գտնվում է քրեական դատավարության շրջանակներից դուրս:

Կարծում ենք տուժողի համար առաջնայինը նախ և առաջ պատճառված վնասի վերականգնումն է, հետո միայն ներողությունը, զղջալը, որը ի տարբերություն վերականգնված վնասի չափելի չէ, խիստ սուբյեկտիվ է և երբեմն կարող է կատարվել գուտ պատժից ու պատասխանատվությունից խուսափելու նպատակով:

Պատահական չէ, որ հաշտության էությունը հանդիսանում է պատճառված վնասի վերականգնումը, այսինքն այստեղ առաջնային նշանակությունը տրվում է օբյեկտիվորեն հանցավորի դրսևորած ակտիվ վարքագծին, ոչ թե ստուգման ոչ ենթակա խոստումներին, հավաստիացումներին, երդումներին և այլն: Ընդհանրապես խրախուսական նորմերի կարևորությունը կասկած չի հարուցում, սակայն մարդասիրությունը չի կարող դրսևորվել միայն հանցանք կատարած անձի

նկատմամբ, այլ այն հավասարապես պետք է դրսևորվի նաև հասարակության և պետության նկատմամբ, և որ այս երկուսը պետք է անպայման հակակշռեն միմյանց, որը և պետք է լինի խրախուսական նորմերի վերաբերյալ արված առաջարկությունների, հետևությունների օրենսդրական նախաձեռնությունների և ընդունվող օրենքների հիմքում: Այս գաղափարն էր ընկած դեռևս միջնադարյան հայ իրավունքի խոշորագույն մտածող Մխիթար Գոշի շուրջ 850 տարի առաջ պատիժների սահմանման հիմքում ներկայացված պահանջներում: Գոշն էր, ով մարդասիրությունը բարոյական արժեքից զատ դիտարկել և քննարկել է որպես իրավական սկզբունք օրինականության, արդարության, պատժի անհատականացման հետ միասին:

Այսինքն՝ տուժողի հետ հաշտվելը պետք է բխի ոչ միայն վեճի կողմերի, այն է՝ հանցավորի ու տուժողի շահերից, այլ հավասարապես նաև հասարակության և պետության շահերից, քանի որ այն ենթադրում է վերացնել հանցագործության բացասական հետևանքները և դրանով իսկ վերականգնել սոցիալական արդարությունը, իսկ սոցիալական արդարության բաղադրիչը դա նաև պատճառված վնասի վերականգնումն է, իսկ առանց դրա անձինք քրեական պատասխանատվությունից ազատելը կնսեմացնի պատժի դերը քրեական արդարադատություն իրականացնելիս, առավել ևս, երբ հասարակության աչքում և տարբեր անձանց ընկալմամբ հանցագործություն կատարած անձին պատժից ազատելը արդարացի չէ և «վատ օրինակ» կարող է ծառայել այլոց համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը նվիրված է տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատման ինստիտուտին, որի համաձայն, եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նրա ու տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը, սակայն հարկ է նշել, որ նախկինում տվյալ հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից: Այսինքն՝ նշված հիմքով հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար պետք է լինեն որոշակի պարտադիր պայմաններ, որ հիման վրա միայն հնարավոր է անձին ազատել քրեական պատասխանատվությունից:

Դրանք են՝

- հանցանքը պետք է լինի ոչ մեծ կամ միջին ծանրության,
- հանցանք կատարած անձը պետք է հաշտ-

վի տուժողի հետ,

- հանցանք կատարած անձը պետք է հատուցի կամ այլ կերպ հարթի վնասը կամ կողմերը ունենան դրա վերաբերյալ պարտավորագիր, պայմանագիր, հաշտեցման մասին արձանագրություն:

Այս ամենից գատ՝ անհրաժեշտ է նշել, որ քրեական օրենսգրքի վերոնշյալ հոդվածում առկա են նաև շատ կարևոր բացառող հանգամանքներ. դրանք են՝ երբ կատարված հանցանքում առկա են ընտանիքում բռնության հատկանիշներ և եթե հանցագործությունից տուժողը 14 տարին չլրացած անձ է կամ հոգեկան առողջության խնդիրների կամ մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով լրիվ կամ մասնակիորեն զրկված է իր դեմ ուղղված հանցագործության բնույթն ու հետևանքները գիտակցելու կամ իր վարքագիծը ղեկավարելու հնարավորությունից, ապա նրա դեմ ուղղված հանցանք կատարած անձը չի կարող հաշտության հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից:

Անդրադառնալով քրեական պատասխանատվությունից ազատվելու հիմքերին՝ անհրաժեշտ է նախ և առաջ հասկանալ՝ որոնք են ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունները:

Ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի՝ հանցագործությունները դասակարգվում են ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների:

Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար Քրեական օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, ինչպես նաև անգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երեք տարի ժամկետով ազատազրկումը:

Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև անգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը:

Հնարավոր այն դեպքում, երբ մեղադրյալը կատարել է երկու տարբեր արարքներ, կա ձևավորված հետևյալ դիրքորոշումը՝ անհրաժեշտ է, որ մեղադրյալը նախկինում տուժողի հետ հաշտվելու հիմքով ազատված չլինի քրեական պատասխանատվությունից և իրեն մեղսագրվող հանցանքները կատարած է նախկինում դատապարտված չլինելու

պայմաններում: Այսինքն՝ եթե մեղադրյալը կատարել է արարք նույն թվականի տարբեր ժամանակահատվածներում, ապա առաջին կատարած արարքի դեպքում կարող է հաշտվել տուժողի հետ և տվյալ դեպքում ազատվել քրեական պատասխանատվությունից: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածում առկա չէ հանցագործությունների համակցության դեպքում միայն առաջին դրվագի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ որևէ նշում, ինչպես նաև քննարկվող հոդվածում առկա չէ որևէ դրույթ, որի տրամաբանական մեկնաբանման դեպքում հնարավոր կլինի ինչ-որ եզրահանգում կատարել: Իսկ եթե առաջին արարքից հետո կատարած արարքով առկա է արդեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, ապա մեկնաբանվում է, որ մեղադրյալը կատարել է նշված առաջին արարքից հետո և ինչքան էլ արդեն իսկ օրինական ուժ մեջ մտած ակտ կա, սակայն չի կարող հաշվվել, որպես ռեզիդիվ կամ որպես խանգարող հանգամանք քրեական պատասխանատվությունից ազատվելու համար, քանի որ օրինական ուժ ստացած դատական ակտը վերաբերում է առաջին արարքից հետո կատարված արարքին:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «նախկինում» եզրույթը ենթադրում է, որ տուժողի հետ հաշտվելու պատճառաբանությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ժամանակահատվածների միջև պետք է լինի ժամանակային խզում: Այսինքն, եթե տուժողի հետ հաշտության պատճառաբանությամբ քրեական պատասխանատվությունից ազատվելուց հետո անձը կատարել է նոր հանցանք, ապա այդ նոր հանցանքի համար չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից: Սակայն հնարավոր դեպք է երբ մեղադրյալը նույն թվականի տարբեր ամիսներին կատարի ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքներ, և նրանիցից յուրաքանչյուրով դեռևս օրինական ուժ ստացած դատական ակտ չլինի ստացվում է, որ մեղադրյալը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից այնքան անգամ, որքան կատարել է որպես այդպիսին համարվող առաջին արարք. քանի դեռ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ չկա:

Արդեն իսկ ձևավորված դիրքորոշում առկա է նաև հաջորդ ՀՀ Վերաքննիչ դատարանի ակտում⁸, համաձայն որի՝ բողոքաբերը նշել է, որ անընդունելի է երկու դրվագով քրեական պատասխանատվությունից ազատելու առաջին ատյանի դատարանի կայացված որոշումը:

Վերադաս ատյանը իրավակարգավորումների, վերլուծությունների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով փաստական տվյալները՝ հանգում է հետևության, որ մեղադրյալնե-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րի նկատմամբ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունը հիմնավոր է և իրավաչափ, իսկ դրա հետ չհամաձայնելու հիմքերը բացակայում են:

Այսինքն, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ հանցանքների համակցության դեպքում բոլոր հանցանքների համար անձը կարող է ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի հիման վրա ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նախկինում նշված հիմքով ազատված չի եղել քրեական պատասխանատվությունից և մեղսագրվող հանցանքները կատարել է նախկինում դատապարտված չլինելու պայմաններում: Վերաքննիչ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածում առկա չէ հանցագործությունների համակցության դեպքում միայն առաջին դրվագի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ որևէ նշում, ինչպես նաև քննարկվող հոդվածում առկա չէ որևէ դրույթ, որի տրամաբանական մեկնաբանման դեպքում հնարավոր կլինի այդպիսի եզրահանգում կատարել:

Հաջորդ պարտադիր պայմանը, դա տուժողի հետ ունեցած հաշտությունն է (համաձայնագիր, պարտավորագիր, արձանագրություն), և սույն դեպքում անհրաժեշտ է հասկանալ թե ով կարող է լինել տուժող: Տուժող կարող է ճանաչվել իրավաբանական անձը, որին հանցագործությամբ պատճառվել է բարոյական կամ նյութական վնաս: Անձը «տուժող» ճանաչվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարվող ստուգողական գործողությունների արդյունքում՝ պարզելով, որ անձի իրավունքների խախտումը քրեական օրենքով արգելված արարքի կատարման հետևանք է, և այդ արարքի կատարման հետևանքով անձին անմիջականորեն պատճառվել է կամ կարող էր պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժողն ունի նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ: Տուժողն իրեն պատկանող իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձամբ կամ ներկայացուցչի միջոցով, եթե դա համապատասխանում է համապատասխան իրավունքների և պարտականությունների բնույթին: Անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը: Այսինքն՝ ցանկացած անձ, ում վնաս է պատճառվել հանցավոր արարքով, անկախ սեռից, տարիքից, հոգեկան վիճակից կամ այլ հատկանիշներից, կարող է ճանաչվել տուժող, բայց

հաշտեցումը կայանալու համար որպես կողմ կարող է մասնակցել միայն այն դեպքում, եթե օժտված է իրավունակությամբ և գործունակությամբ, եթե ֆիզիկական անձ է, իսկ իրավաբանական անձի դեպքում պետք է օժտված լինի իրավունակությամբ: Այսպիսով՝ հաշտեցումը փոխզիջումների որոնման գործընթաց է, հանցագործի և տուժողի միջև համաձայնության ձեռքբերում, հակամարտությունների լուծում, իսկ որպես արդյունք՝ փոխշահավետ պայմանավորվածության ձեռք բերում:

Վճռաբեկ դատարանը ևս իր ԵԱԶԳ/0157/01/10¹⁰ քրեական գործով հուլիսի 13-ի որոշման մեջ անդրադարձել է հաշտեցմանը նշելով, որ հանցանք կատարած անձի համար հաշտությունը հանցանքի կատարման մեջ իրեն մեղավոր ճանաչելն է, այդ արարքի համար զոջալը, ափսոսանք հայտնելը, իսկ տուժողի համար՝ հանցանք կատարած անձին ներելը: Բացի այդ, հաշտությունը ենթադրում է տուժողի և ենթադրյալ հանցագործի կամավոր և փոխադարձ համաձայնություն միմյանց հետ հաշտվելու վերաբերյալ: Այսինքն՝ հաշտությունը պետք է լինի ինչպես գործողություն, այնպես էլ փոխադարձ գործողությունների արդյունք: Հաշտության կամավոր բնույթը ենթադրում է հաշտվելու վերաբերյալ կողմերի ինքնուրույն և ազատ կամահայտնություն: Հաշտության փոխադարձ բնույթը նշանակում է, որ կողմերից երկուսն էլ պետք է հայտարարեն հաշտության մասին: Հաշտության կամավոր և փոխադարձ բնույթի բացակայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը չի կարող որոշում կայացնել հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ: Հաշտեցումը ենթադրում է, որ տուժողը դեմ չէ հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվությունից ազատմանը: Այլ կերպ ասած հաշտությունը երկու կողմերի փոխադարձ կամահայտնությունն է, այն երբեք չի կարող կրել միակողմանի բնույթ, և եթե տուժողը ցանկություն է հայտնում հաշտվելու, իսկ հանցանք կատարած անձը դրա դեմ առարկում է, կամ հակառակը, ապա հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու իրավական հիմքը բացակայում է: Նույն կերպ, հաշտությունը կամավոր և փոխադարձ չի կարող համարվել, հետևաբար՝ այդ հիմքով քրեական գործի վարույթը չի կարող դադարեցվել, եթե հաշտությունը հետևանք է տուժողի նկատմամբ հանցանք կատարած անձի գործադրած ոչ իրավաչափ ներգործության: Հետևաբար, ոչ ոք չի կարող որևէ կերպ ներագրել կողմերի վրա՝ հաշտության կայացման համար:

Կարևոր է նշել, որ տվյալ դեպքում կարևոր չէ, թե կողմերից ով է նախաձեռնում հաշտությունը, քանի որ երկու կողմն էլ կարող են հանդես գալ

www.aradaradutyjournal.com

նման հայտարարությամբ: Իսկ տվյալ պարագայում Դատարանը կարող է ողջամիտ ժամկետ տրամադրել նրանց միջև հաշտության գալու համար: Դատավարության բոլոր փուլերում և դատական նիստերից յուրաքանչյուր ժամանակ հնարավոր է կողմերից որևիցե մեկը հանդես գա նման հայտարարությամբ մինչև դատարանի կողմից առանձին սենյակ հեռանալը վերդիկտ կայացնելու համար:

Հաջորդ պայմանը այս հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու այն է, որ հանցավորը պետք է հատուցի կամ այլ կերպ հարթի պատճառված վնասը: Այլ կերպ այս պայմանը փորձում է ինքնին հանդիսանալ որպես կողմերի միջև նախկինում ունեցած տարածայնությունների կամ վնասի հատուցման հիմք, որով մեղադրյալը կարող է այլ կերպ ցույց տալ իր փոխադարձությունը: Այն պետք է հիմք հանդիսանա համաձայնության, պայմանագրերի բոլոր պայմանների քննարկման համար: Կողմերից ոչ մեկը չպետք է պարտադրի իր որոշումը: Առանձնահատուկ նշանակություն ունի ինչպես տուժողի, այնպես էլ մեղադրյալի հաշտեցման ցանկության անկախությունը: Տվյալ պարագայում երկու կողմն էլ իրենց հաշտեցման տարբերակով կարող են հանդես գալ օրինակ՝ պարտավորագրում նշելով, որ մեղադրյալը պարտավորվում է որոշումը օրինական ուժ ստանալուց հետո ամսական վճարումներ, փոխանցումներ կատարել տուժողին: Շատ դեպքերում հնարավոր է, որ տուժողը ինքը ինչ-որ պայմանից ելնելով, հրաժարվի ներկայացված վնասի փոխհատուցումից, քանի որ հաշտեցումը ինքնին չի ենթադրում վնասի հատուցում, քանի որ տուժողը ինքը կարող է հրաժարվել հատուցում ստանալուց, այսինքն կողմերն են համաձայնության գալիս, թե ինչ չափով պետք է հատուցվի վնասը, երբ պետք է հատուցվի, կամ էլ արդյոք հատուցվելու է, թե ոչ:

Հաշտեցումը կարելի է և պետք է դիտարկել որպես տուժողի մասնակցության ձև մեղավոր անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցի լուծմանը: Տուժողն ինքն է որոշում թե վնասի որ չափն է բավարարում իրեն, ինչիպիսի փոխհատուցում է ակնկալում, միգուցե առհասարակ նա որևէ պահանջ չունի այդ պահին, թե ինքը նախկինում կրել է վնաս, այդ իսկ պատճառով դրա վերաբերյալ կաշկանդվածություն չպետք է ունենալ: Վերոգրյալի հիման վրա հարկ է ևս մեկ անգամ նշել, որ կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ հնարավոր է հաշտություն կողմերի միջև իրականացնել և մեղադրյալին ազատել քրեական պատասխանատվությունից: Նախ և առաջ Դատարանի, ինչպես նաև ուրիշների կողմից այն ընկալվում է, որպես բուն հաշտեցում՝ նպատակ հետապնդելով անձին հնարավոր շանսի տրամադրումով: Տվյալ հիմքը քրեական օրենսգրքի ամենամուրբ

հիմքն է, և այս պարագայում կարող է նաև դիտարկվել, որպես ռեաբիլիտացիոն հնարավորություն՝ նախկին վարքի, համբավի, բարի անվան վերականգնում:

Այսպես.

Յուրաքանչյուր գործով տուժողն ու հանցավորը համաձայնության են գալիս վնասի հատուցման շուրջ, և տուժողն էլ որոշում է, թե ինչ գործուղություններ պետք է կատարի հանցավորը, որոնք բավարար կլինեն իր համար: Վճռաբեկ դատարանը ևս գտնում է, որ եթե տուժողն իրեն պատճառված վնասի հատուցման պահանջ չի ներկայացնում, կամ տուժողն ու հանցանք կատարած անձը համաձայնության են գալիս վնասը ապագայում հատուցելու մասին, կամ տուժողը զիջում է պարտքը, կամ պարգապես չի ցանկանում ստանալ իրեն պատճառված վնասի փոխհատուցում, ապա այդ հանգամանքը չի կարող խոչընդոտել հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից հաշտեցման հիմքով ազատելուն՝:

Բազմաթիվ քննարկումներից հատկանշական է նաև անդրադառնալ այն դեպքին, երբ հանցագործության օբյեկտը հանդիսանում է ոչ միայն անձը, այլև պետությունը: Նման դեպքում օրենսդիրը մեկնաբանում է այսպես՝ իշխանական դիրք, պաշտոն, լիազորություններ ունեցող աշխատակցի դեմ բռնություն գործադրելու պարագայում անհասկանալի է արդյոք ով է հանդիսանում տուժող ֆիզիկական անձը, ում պատճառվել է վնաս, թե պետությունը ում շահերը այդ պահին պաշտպանում էր տվյալ ֆիզիկական անձը:

Քրեական իրավունքում, սակայն, հաշտության բովանդակային իմաստի բացահայտման ժամանակ միակարծիքություն առկա չէ: Օրինակ՝ Խ.Գ. Ալիկալերովը հաշտությունը համարում է փոխզիջման որոշակի ակտ: Սակայն, նրա կարծիքով, այդ փոխզիջումը տեղի է ունենում ոչ միայն/ոչ այնքան հանցանք կատարած անձի և տուժողի, այլև, ավելի շուտ, պետության և հանցանք կատարած անձի միջև :

Նույնկերպ Ա.Վ. Նաումովը և Ս.Գ. Կելինան համարում են, որ տուժողի հետ հաշտությունը հանցավորության դեմ պայքարի գործում փոխզիջման դրսևորում է, սակայն միաժամանակ նշում են, որ այդ փոխզիջումը լիովին կախված է տուժողի կամահայտնությունից, քանի որ «... հենց նա է ընտրում արդարության վերականգնման համապատասխան եղանակը» :

Դատարանի¹⁴ գնահատմամբ երկօբյեկտ հանցագործությունների յուրաքանչյուր դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է հիմնավորի, թե ինչպես ֆիզիկական անձին, այնպես էլ պետությանն իրականում ինչ վնաս է պատճառվել (կոնկրետ ինչ հետևանքներ է առաջացրել և ով է իրական տուժողը): Դատարանի գնահատմամբ,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ողջամիտ չէ, որ ոստիկանի նկատմամբ իր ծառայողական, օրինական գործողությունների կապակցությամբ բռնություն կիրառելու հանգամանքը բավարար է պնդելու, որ պետությանն իրականում անմիջականորեն վնաս է պատճառվել, որպիսի պայմաններում պետք է հաշտվի նաև պետությունը կամ հաշտություն ընդհանրապես չի կարող լինել:

Այլ կերպ ասած՝ Դատարանի եզրահանգումը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատվի՝ կատարված գործողություններով պետությանն իրականում վնաս պատճառվել է, թե իրական վնասի կրողը հենց ֆիզիկական անձն է, ով հանդես է գալիս պետության անունից: Հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ հաշտության կողմ կարող է լինել այն սուբյեկտը, ում անմիջականորեն վնաս է պատճառվել:

Խոսքը չի վերաբերում անմիջական օբյեկտի վնասմանը այլ այն մասին է, թե հաշտության կողմ՝ սուբյեկտ լինելու տեսանկյունից, հանցագործությամբ իրական վնասը ով է կրել և հետևանքներն ում վրա են տարածվել: Պետք է նշել նաև, որ հաշտության ինստիտուտը նախատեսում է հնարավորություն դադարեցնել հանրային բնույթ ունեցող այն իրավահարաբերությունները, որի շրջանակներում ենթադրյալ հանցանք կատարած անձն ու տուժողը հաշտվել են: Այսինքն՝ այս ինստիտուտի կիրառման պարագայում կարևորագույն տարր է «տուժողի» հետ հաշտության հանգամանքը, իսկ տուժողի դատավարական կարգավիճակ է տրված միայն այն անձին/ անձանց ում նախաքննության ընթացքում տրվել է տուժողի կարգավիճակ:

Այսինքն կարելի է եզրակացնել, որ հաշտության համար բնութագրական է հետևյալը՝

1. Կամավորությունը
2. Գիտակցվածությունը
3. Փոխադարձությունը
4. Թույլատրելիությունը
5. Պարտադիրությունը.

Այսպիսով՝ անձը պետք է ունենա կամային դրսևորում. այսինքն՝ կողմերը բարեխղճորեն, առանց որևէ հարկադրանքի, սպառնալիքի կամ ճնշումների: Հաշտեցման մասնակիցները պետք է գիտակցեն, հասկանան իրենց ընդհանուր հայտարարի գալու մասին արձանագրության կարևորությունը, չնդորեցնեն մեկը մյուսին, ճիշտ ընկալել իրադրությունը և գնահատել մեկ անգամ օրենքի հնարավորությամբ քրեական պատասխանատվությունից ազատվելը: Հաշտությունը պարտադիր պետք է մասնակցեն այն անձինք ում վերաբերելի է, այն անձանց ովքեր հանդիսանում են օբյեկտ, պահանջվում է հանցագործություն կատարած անձի համաձայնությունը, այսպես կոչված, ոչ վերականգնողական հիմքեր, այսինքն՝ փաստացի ընդունել է իր մեղքը:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ

հոդվածի 5-րդ կետի՝ նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից:

Արդյոք արգելում է այս մասն ազատվել քրեական պատասխանատվությունից երկրորդ արարքի համար, եթե այն արարքը կատարելու հետո՝ մինչև քրեական պատասխանատվությունից ազատվելը կարատել է երկրորդ արարքը:

Այս պարագայում կարծում ենք, որ անձը առաջին արարքից հետ կատարել է երկրորդ արարքը, որից հետո ազատվել պատասխանատվությունից առաջին արարքի համար, ապա երկրորդ արարքի համար արդեն իսկ չի կարող ենթակա լինել 82-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառման:

Ինչ վերաբերում է այն դեպքին, երբ անձը կատարում է առաջին արարքը (որի համար դեռևս նախատեսված պատասխանատվությունից չի ազատվել), կատարում է երկրորդ արարքը և դրա դեպքում վարույթը կարճվում է տուժողի հետ հաշտության հիմքով, փաստացի ստացվում է, որ անձը կատարել է առաջին արարքը ավելի վաղ քան երկրորդ արարքը, ուստի հիմքեր չկան պնդելու, որ նա երկրորդ անգամ չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից:

Այսինքն՝ նախկինում տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը, նույն հիմքով կրկին ազատվելու արգելքը գործում է այն դեպքում, երբ անձը առաջին արարքը կատարելու հետ ազատվում է պատասխանատվությունից, այնուհետև կատարում է երկրորդ արարքը:

Սակայն, այն իրավիճակում երբ անձի վերաբերյալ չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, ստացվում է անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից առաջին, երկրորդ և եթե դեռևս նախկինում կատարած արարքները ստացած չլինեն օրինական ուժ, անգամ երրորդ անգամ:

ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար օրենսդիրը նախատեսել է որոշակի պարտադիր պայմաններ, այն է՝ անձի կողմից առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած լինելը, նրա ու տուժողի միջև հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնության առկայությունը և նախկինում նույն հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված չլինելը:

Նշված պայմաններից առաջինի հասկացությունը տրված է ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ըստ որի՝ առաջին անգամ հանցանք կատարած է այն անձը, որը

www.ardadatuynjournal.com

նախկինում հանցանք չի կատարել կամ կատարել է, սակայն ազատվել է քրեական պատասխանատվությունից, կամ որի դատվածությունը սույն օրենսգրքով սահմանված կարգով մարվել կամ վերացվել է:

Ինչ վերաբերում է երրորդ պայմանին, ապա գտնում են, որ այն սերտորեն փոխկապակցված է առաջին պայմանի հետ, և այն նախատեսելով՝ օրենսդիրը նպատակ է ունեցել հնարավորություն չտալ նույն հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից այն անձանց, ովքեր նախկինում տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելուց հետո կրկին կատարել են ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք:

Քննարկվող նորմի բովանդակությամբ նշված «նախկինում» եզրույթը վերաբերում է այն իրավիճակներին, երբ անձը տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելուց հետո, այսինքն՝ արդեն իսկ քննարկվող խրախուսական նորմից օգտվելուց հետո կրկին հանցանք է կատարում: Բանն այն է, որ նշված նորմի ընդհանուր տրամաբանությունից հետևում է, որ մեղադրյալը քննարկվող խրախուսական նորմից կարող է օգտվել միայն մեկ անգամ և, եթե ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով սահմանված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելուց հետո դարձյալ հանցանք կատարի, ապա նշված հիմքով չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից: Հետևաբար՝ նշված պայմանի բացակայության հիման վրա անձին քրեական պատասխանատվությունից ազատելը չի թույլատրվի միայն այն դեպքում, երբ վերջինս նախկինում տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելուց հետո կրկին հանցանք է կատարել:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասի « Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է ...», ինչպես նաև նույն հոդվածի 5-րդ մասի՝ «նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից»:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հարց է առաջանում, եթե անձը միջին ծանրության հանցանք է կատարել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի գործածության ընթացքում և տվյալ հանցագործությունը համարվել է միջին ծանրության հանցագործություն (ինչի վերաբերյալ նախկին քրեական օրենսգրքում չկա թույլատրող կարգավորում/նորմ), կարող է արդյոք անձը ազատվել քրեական պատասխանատվությու-

նից 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի օրոք:

Տվյալ պարագայում անհրաժեշտ է համապատասխանեցնել տվյալ հոդվածը գործող քրեական օրենսգրքին և կիրառվի միայն մեղմացնող հատվածը, այսինքն՝ կիրառելի լինեն նախկին կարգավորումները, և միայն միջին ծանրության հանցանք կատարած անձանց դեպքում տուժողի հետ հաշտության ինստիտուտից օգտվելու համար օրենքի հետադարձ ուժ կիրառել:

Հետաքրքիր վիճելի հարց է առաջանում հանցագործությունների համակացության պարագայում՝ իդեալական և իրական:

Շատ իրավաբանների կողմից ձևավորվել է տեսանկյուն, որ ազատվել քրեական պատասխանատվությունից իդեալական համակացության դեպքում հնարավոր չէ, ինչը մեր դիրքորոշմամբ այլ է՝ քանի, որ իդեալական համակացության ժամանակ անձը կատարում է մեկ արարք, որն իր մեջ միաժամանակ պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներ, նախատեսված հանցագործության հատկանիշներ, այսինքն՝ մեկ արարքով կատարվում է երկու հանցագործություն:

Կարծում ենք, որ երկու դեպքում էլ հնարավոր է կարճել վարույթը և ազատել անձին քրեական պատասխանատվությունից, քանի որ ի վերջո համակացության մեջ մտնող յուրաքանչյուր հանցագործություն դեպքում անձը համարվում է առաջին անգամ հանցագործություն կատարած անձ:

Առկա խնդիրների վերաբերյալ ձևավորված միատեսակ դիրքորոշումներ այս պահին առկա չեն, ինչը ինքնին ստեղծում է անհասկանալի իրավիճակ և տվյալ ինստիտուտի կիրառումը դարձնում է կախված վարույթն իրականացնող մարմնի սույն ինստիտուտի կիրառելիության մոտեցումից:

Տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու կիրառելիությունը առանձին անձանց դեպքում

Իրավական պրակտիկայում մինչ նոր կարգավորումների ուժի մեջ մտնելը մշտապես խնդրի առարկա է դարձվել այն հարցը՝ արդյոք տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով վարույթի կարճումը տարածվում է այն դեպքերի վրա, երբ տուժողն անշափահաս է, թե ոչ: Նախկինում իրավիճակն օրենսդրական ամրագրման ուժով չէր կարգավորվում, և ինստիտուտի կիրառման առանձնահատկությունները պրակտիկայում քննարկման առարկա էին դարձվում բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում:

Սույն հարցի վերաբերյալ քրեագետներն ունենին տարբեր դիրքորոշումներ: Մասնավորապես՝ մի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մասը պնդում էր, որ այն դեպքում, երբ տուժողն անչափահաս է, ապա նրա կողմից հաշտության գալը չի կարող անձին ազատել քրեական պատասխանատվությունից, ինչը կապվում էր հիմնականում անչափահասի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների վերհանմամբ պայմանավորված:

Քրեագետների մյուս մասը գտնում էր, որ ինստիտուտն, այնուամենայնիվ, հնարավոր է կիրառել, երբ անչափահասի անունից հանդես են գալիս վերջինի օրինական ներկայացուցիչները կամ հենց ծնողները: Սույն պրակտիկան կիրառվում է մի շարք երկրներում, օրինակ՝ Գերմանիայում, Շվեյցարիայում և այլ Եվրոպական պետություններում, սակայն այն մշտապես տարամեկնաբանումների և քննադատությունների առիթ է դարձել: Օրինակ՝ տեսակետի հակառակի մասին պնդողները գտնում էին, որ օրենսդիրը հստակ ամրագրում է հանցանք կատարած անձի և տուժողի միջև կնքվող հաշտության մասին, իսկ տուժողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը նման կարգավիճակով օժտված չէ:

Քրեագետների երրորդ խումբը որևէ խնդիր չէր տեսնում ինստիտուտի կիրառման հարցում, երբ կողմերից մեկն անչափահաս է, եթե վերջինը կարող է արտահայտել իր ազատ կամքը: Նման դիրքորոշումն իր հերթին նոր հարցեր է առաջացնում մասնագետների համար. մասնավորապես, որ տարիքից սկսած կարելի է համարել, որ տուժողն այլևս ի գործ է արտահայտել իր ազատ կամքը, թեև անչափահաս է:

Գաղափարի հեղինակներն առաջարկում էին առաջնորդվել քրեական օրենսդրության տրամաբանությամբ: Մասնավորապես, մի շարք հանցագործությունների դեպքում օրենսդիրը հանցագործության կատարման սուբյեկտ է դիտարկում 14 տարին լրացած անձանց, իսկ մյուս դեպքերում՝ 16: Հատկանշական է նշել նաև, որ 12 տարին լրացած անձը համարվում է անօգնական վիճակում գտնվող անձ, որով պայմանավորված չի կարող ազատ կամային հատկանիշներ ունենալ:

Այսինքն, նշված տարիքային շեմն, ըստ օրենսդրի, բավարար է, որպեսզի անձինք գիտակցեն իրենց կողմից կատարված արարքի բնույթը, հաշիվ տան իրենց գործողություններին և ղեկավարեն իրենց վարքագիծը: Ուստի, առանձին հանցագործությունների համար, որպես հաշտությանը պատրաստ տուժողի տարիքային շեմ առաջարկվում էր ընդունել տվյալ հանցագործության կատարման սուբյեկտի տարիքային շեմը:

Հարկ է նկատել, որ կան նաև հեղինակներ, ովքեր անչափահասին հաշտության կողմ դիտելու իրենց մոտեցման համար առաջարկում էին առանձին պայմանների առկայություն (օրինակ՝ ամուսնության տարիք, աշխատանքային պայմանագրի

առկայություն, ծնողների, որդեգրողների կամ խնամակալի համաձայնությամբ ձեռնարկատիրական գործունեության իրականացում և այլն):

Ավելորդ չէ հիշատակել նաև այն հեղինակներին, ովքեր ինստիտուտի կիրառման համար առաջարկում էին գործադրել քաղաքացիաիրավական մեխանիզմները և հանցանք կատարած անձի և տուժողի միջև հաշտության համար տուժողի տարիքային շեմը հաշվել տասը տարեկանից սկսած՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան իրավունքի ճյուղում այդ տարիքից սկսած որդեգրվող երեխան իրավունք ուներ տալ իր համաձայնությունը՝ որդեգրման վերաբերյալ, իսկ ամուսնալուծվող ծնողների երեխան իրավունք ուներ որոշել, թե ինքն ում հետ է ցանկանում ապրել և այլն:

Ամենդսունակների պարագայում առավել տարածված դիրքորոշումն այն է, որ որպես հաշտության կողմ կարող են հանդես գալ միայն նրանց օրինական ներկայացուցիչները:

Նման պայմաններում, երբ հարցի լուծումը բացակայում էր, հարցի լուծման տարբերակներից մեկն այն էր, որ անչափահաս հանցավորներին և տուժողներին, ինչպես նաև անմեղսունակ տուժողներին ընդհանրապես թույլ չտրվի հանդես գալ որպես հաշտության կողմ:

Արդեն նոր քրեական օրենսդրության գործարկմամբ քննարկվող հարցին տրվեց որոշակի լուծում և ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով օրենսդրական ամրագրում ստացավ հետևյալ սահմանումը.

«3. Եթե անչափահաս կամ սահմանափակ մեղսունակ անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա նա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և առկա է հաշտության վերաբերյալ տուժողի և հանցագործության համար մեղադրվող անձի շահերի պաշտպանության պարտականություն ունեցող անձի՝ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը:

4. Եթե հանցագործությունից տուժողը 14 տարին չլրացած անձ է կամ հոգեկան առողջության խնդիրների կամ մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով լրիվ կամ մասնակիորեն զրկված է իր դեմ ուղղված հանցագործության բնույթն ու հետևանքները գիտակցելու կամ իր վարքագիծը ղեկավարելու հնարավորությունից, ապա նրա դեմ ուղղված հանցանք կատարած անձը չի կարող հաշտության հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից»:

Վերոնշյալ հոդվածից կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը առանձնացրել է երկու առանձին կատեգորիա՝

ա/ հանցանք կատարած անձն անչափահաս է

կամ սահմանափակ մեղսունակ
բ/ տուժողը 14 տարին չլրացած անձ է կամ ան-
մեղսունակ

Անդրադառնալով այն դեպքին, երբ հանցանք
կատարած անձն անչափահաս է կամ սահմանա-
փակ մեղսունակ, նկատում ենք, որ նման դեպքե-
րում օրենսդիրը սահմանել է, որ անչափահաս հան-
ցանք կատարած անձի և կամ սահմանափակ մեղ-
սունակ հանցանք կատարած անձի փոխարեն
հաշտության սուբյեկտ է վերջինի շահերի պաշտ-
պանության պարտականություն ունեցող անձը:

Իսկ երկրորդ կատեգորիայի անձանց դեպ-
քում, երբ տուժողը 14 տարին չլրացած կամ անմեղ-
սունակ անձ է, ապա նույնիսկ վերջինի շահերի
պաշտպանության պարտականություն ունեցող
անձը չի կարող հաշտության սուբյեկտ լինել:

Նման կարգավորումներն իրենց մեջ ևս պա-
րունակում են խնդիրներ, որոնք պետք է օրենսդրա-
կան մակարդակով ստանան կարգավորում:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը
թիվ ՍԳ-Ո 1333 որոշմամբ¹⁵ անդրադարձել է նաև
անչափահասների «լավելու իրավունքին» և արձա-
նագրել, որ սահմանադիրը երեխային վերապահել
է նախ՝ ոչ միայն իր կարծիքն ազատ արտահայտե-
լու իրավունք, այլ նաև, ի թիվս այլնի, իրեն վերաբե-
րող դատական գործընթացներում լավելու իրա-
վունք, և երկրորդ՝ լավելու իրավունքի շրջանակնե-
րում՝ դատական մարմինների կողմից իր կարծիքը
հաշվի առնելու իրավունք:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ
իրավակիրառ պրակտիկայում չպետք է փորձել
երեխայի լավելու իրավունքը պայմանավորել տա-
րիքային սահմանափակումով: Վարույթն իրակա-
նացնող մարմինն է պարտավոր ապահովել երե-
խայի լավելու իրավունքի իրացումը՝ անկախ տարի-
քից, հաշվի առնել այն և առաջնահերթ կարգով
երեխայի շահերից ելնելով որոշում կայացնել:

2005 թվականի հուլիսի 22-ին ՄԱԿ-ի կողմից
ընդունվել են Արդարադատության ղեկավար
սկզբունքները, որոնք վերաբերում են հանցագոր-
ծությունից զոհ, այսինքն՝ տուժող դարձած երեխա-
յին և վկային: Հանցագործությունից տուժած ան-
չափահաս անձանց պաշտպանության վերաբե-
րյալ միջազգային հանրության կողմից ղեկավար
սկզբունքների մշակումը և ազգային օրենսդրու-
թյան մեջ և պրակտիկայում դրանց կիրառումը
կարևոր երաշխիք են այդ կատեգորիայի անձանց
համար, որովհետև երեխան կրկնակի դժվարու-
թյուն է կրում արդարադատությանը մասնակցելիս:
Երեխաներն առանձնանում են ըստ իրենց տարի-
քային հասունության աստիճանի և անհատական
հատկանիշների: Քրեական վարույթն իրականաց-
նող մարմինները և պաշտոնատար անձինք քրեա-
կան գործով վարույթի ընթացքում պարտավոր են
անչափահաս տուժողի համար ապահովել

հետևյալ սկզբունքների կիրառումը՝ արժանապատ-
վության, բոլորի հավասարության, երեխայի լավա-
գույն շահի պաշտպանության, ներդաշնակ զար-
գացման, արդար դատական քննության: Քրեական
վարույթն իրականացնող մարմինները պետք է
առաջնորդվեն այն գաղափարով, որ յուրաքանչ-
յուր անչափահաս ունի իր առանձին արժեքային
համակարգը, անձնական արժանապատվությունը,
հստակ պահանջներ, շահեր և անձնական կյանք:
Իրավաբանական օգնություն ստանալու մեղադր-
յալի իրավունքն առավել ապահովված է, քան տու-
ժողի: Մասնավորապես, եթե կասկածյալի կամ մե-
ղադրյալի համար քրեական վարույթին պաշտպա-
նի մասնակցությունը պարտադիր է, ապա նույնը չի
կարելի ասել անչափահաս տուժողի դեպքում:

Երեխայի տարիքի, հասունության մակարդա-
կի և նրան առաջադրված հարցի բարդության միջև
հարաբերակցության, երեխայի շահերն առաջնա-
հերթ ուշադրության արժանացնելու հարցերին է
նվիրված նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կող-
մից 1989 թվականի նոյեմբերի 20-ի 44/25 բա-
նաձևով ընդունված և 1990 թվականի սեպտեմբերի
2-ին ուժի մեջ մտած՝ Երեխայի իրավունքների մա-
սին կոնվենցիան¹⁶: Նշված կոնվենցիայի 3-րդ հոդ-
վածի 1-ին մասը սահմանում է, որ երեխաների
նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ
այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալա-
կան ապահովության հարցերով զբաղվող պետա-
կան կամ մասնավոր հիմնարկների, դատարաննե-
րի, վարչական կամ օրենսդրական մարմինների
կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում
երեխայի լավագույն շահերին:

Նույն կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին մասի
համաձայն՝ իր հայացքները ձևակերպելու ընդու-
նակ երեխայի համար մասնակից պետություններն
ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու
իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբե-
րում են երեխային: Երեխայի հայացքների նկատ-
մամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունու-
թյանը համապատասխան պատշաճ ուշադրու-
թյուն:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն
2013թ. մայիսի 29-ին¹⁷, հատուկ անդրադարձ կա-
տարելով երեխայի լավագույն շահերի ապահով-
մանը, մասնավորապես արձանագրում է, որ բոլոր
երկրներն են պարտավոր երաշխավորել, որպեսզի
երեխայի լավագույն շահերն առաջնահերթության
կարգով հաշվի առնվեն նրա վերաբերյալ որոշում-
ներ կայացնելիս՝ ինչպես դատարանների, վարչա-
կան մարմինների կողմից, այնպես էլ իրավակար-
գավորման գործընթացում:

Նոր Ձեւանդիայում անչափահասների¹⁸ կող-
մից հանցանք կատարելիս ստեղծվում է ընտանե-
կան ժողով, որում ընդգրկվում են հանցանք կատա-
րած անչափահասը, հանցագործությունից տուժած

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

անձը, հանցավորի ծնողները և լիազորված պաշտոնատար անձը: Ժողովի կողմից տեղի է ունենում կատարվածի քննարկում, որի հիմնական նպատակը տուժողից ներողություն խնդրելն է, և ծնողների կողմից վնասը փոխհատուցելու առաջարկով հանդես գալը: Այս կառուցակարգի արդյունավետությունը տեսնելով, շատ դատավորներ այն սկսեցին կիրառել նաև չափահաս անձանց կողմից հանցանք կատարելու դեպքում: Հիմնականում հաշտեցման ծրագրերը տարածվում են ոչ մեծ հանրային վտանգավորություն ներկայացնող հանցագործությունների վրա, սակայն երբեմն այս սահմանը բացակայում է: Օրինակ, Բրիտանական Կոլումբիայում հաշտեցումը կիրառվում է այնպիսի հանցագործությունների դեպքում, ինչպիսիք են զինված կողոպուտը, սերիական սպանություններն ու բռնաբարությունները: Հաշտեցման ծրագրերում ընդգրկվելու շահագրգռվածությունը մեծ է ինչպես հանցանք կատարած անձի, այնպես էլ տուժողի մոտ: Հանցանք կատարած անձի համար սա քրեական պատասխանատվությունից խուսափելու միջոց է, իսկ տուժողի համար՝ առանց դատավարական գործընթացի իրեն պատճառված բարոյական և նյութական վնասը վերականգնելու ճանապարհ: Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ հանցանք կատարած այն անձինք, ովքեր մասնակցել են հաշտեցման ծրագրերի հակված չեն կրկին անգամ հանցավոր արարք կատարելուն: Սա վկայում է հասարակության իրավագիտակցության վրա ինստիտուտի դրական ազդեցության մասին: Հայիթիում, Կուբայում, Դոմինիկյան Հանրապետությունում, Ջամայկայում և մի շարք այլ երկրներում կողմերի հաշտեցմանը նպաստելու համար ստեղծվում են բազմաթիվ հասարակական կազմակերպություններ:

Այսպես, թեև վերոնշյալի լույսի ներքո կարող են արձանագրել, որ սույն ինստիտուտը die version տարբերակ է, որպեսզի գործը դատարան չհասնի, այնուամենայնիվ, կարող ենք առանձնացնել հետևյալ խնդիրները, որոնք առկա են ՀՀ քրեական օրենսգրքում.

1. ՀՀ քրեական օրենսգիրքը չի սահմանում այն դեպքերի համար լուծումներ, երբ տուժողն անչափահաս է կամ սահմանափակ մեղսունակ անձ, ընդ որում անկախ այն հանգամանքից հանցանք կատարած անձը չափահաս է թե անչափահաս, քանի որ երկու դեպքում էլ հարցը կարգավորված չէ,
2. ՀՀ քրեական օրենսգիրքը չի սահմանում այն դեպքերի համար լուծումներ, երբ գործով անցնում են մի քանի հանցանք կատարած անձինք և մի քանի տուժողներ, ովքեր մտնում են սույն պարագրաֆով նախատեսված առանձին կատեգորիայի անձանց խմբի շրջանակում:
3. Երբ տուժողին հնարավորություն չի տրվում

հաշտության գնալու, այս ստացվում է այն իրավական կազուսը, որ անձը ՀՀ քրեական օրենսգրքի ուժով հանցագործության սուբյեկտ է համարվում և կարող է պատասխանատվություն կրել իր կողմից կատարված հանցանքի համար, սակայն չի կարող հանդես գալ որպես հաշտության կողմ:

4. Հարկ է նկատել, որ մի դեպքում օրենսդիրը հաշտության գնալը դիտում է այնպիսի իրավունք, որը այլ անձի չի կարող փոխանցվել (տուժողի իրավահաջորդի դեպքում), իսկ մյուս դեպքում միայն անչափահաս կամ սահմանափակ մեղսունակ հանցանք կատարած անձի պաշտպանության համար պարտականություն կրող անձին է վերապահում հաշտության գնալու իրավունքը, սակայն հաշտության առնելով այն հանգամանքը, որ սույն աշխատանքում ընդունելի է համարվել նշյալ իրավունքի փոխանցումը բովանդակային քննարկում այս հաստության վերաբերյալ չենք իրականացնի և կառուցողականորեն այն գաղափարից, որ նշյալ իրավունքի փոխանցումը բացառված չէ:

5. 14 տարին չլրացած և անմեղսունակ տուժողների մասով հարկ է նկատել, որ անհասկանալի է, թե ինչով է պայմանավորված այս բացառիկ արգելքը, այն էլ այն պայմաններում, երբ օրենսդիրը նախատեսել է հաշտության իրավունքի փոխանցումը մեկ այլ անձի, երբ խոսքը վերաբերել է անչափահաս կամ սահմանափակ մեղսունակ հանցանք կատարած անձին:

Անդրադառնալով բարձրացված առաջին հարցին՝ արձանագրվում է հետևյալը.

Կարծում ենք, որ ընդհանուր կանոնի համաձայն տուժողի ներկայացուցչին չպետք է իրավունք վերապահվեր հաշտվել հանցանք կատարած անձի հետ: Նշված տեսակետի հիմքում առաջին հերթին ընկած է այն, որ հաշտության իրավունքն ի տարբերություն իրավունքի մյուս տեսակների, որոնք կարող են փոխանցվել այլ անձանց կրում է խիստ անձնային բնույթ և փոխանցվել այլ անձի չի կարող: Հաշտությունը տվյալ դեպքում հանդիսանում է ոչ միայն ցանկության, այլև կամքի դրսևորում, իսկ այդ կամքի հասցեատերը կարող է լինել բացառապես այն անձը, ում իրավունքներին և օրինական շահերին ոտնձգել են, այսինքն՝ բացառապես տուժողը: Բացի այդ, հաշտությունը ոչ միայն իրենից ենթադրում է տուժողի կողմից գործի ելքի՝ մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ չենթարկելու հարցի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու գործընթաց, այլև հաշտությունը պետք է տուժողին վստահություն ներշնչի այն մասին, որի իր իրավունքներն անխախտելի են և դրանց նկատմամբ ցանկացած ոտնձգություն պետք է առաջ բերի օրենքով նախատեսված պաշտպանության միջոցների գործադրման, այդ թվում՝ քրեադատավարական հարկադրանքի միջոցների կիրառման: Այսինքն, տուժողի

www.aradaradutyjournal.com

մոտ չպետք է դեռևս կասկած մնա, որ հաշտության գնալուց հետո նույն անձի կողմից կրկին կարող է ոստիկանություն իրականացվել իր իրավունքների և օրինական շահերի նկատմամբ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիրը անչափահաս կամ սահմանափակ մեղսունակ հանցանք կատարած անձի դեպքում ստեղծել է հաշտության իրավունքի փոխանցման իրավունք՝ արդարացված չի լինի տուժողի դեպքում նշյալ իրավունքի փոխանցման արգելքը: Ընդ որում, հարկ ենք համարում նշել, որ սույն աշխատանքում արդեն իսկ նշվել է, որ որոշ դեպքերում կարելի է նշյալ իրավունքի փոխանցումը թույլատրել:

Ընդունելի է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից արտահատված դիրքորոշումը, որ հաշտությունը մանկահասակ երեխայի օրինական ներկայացուցչի կողմից պետք է թույլատրելի համարվի այն դեպքերում, երբ դա կբխի մանկահասակ տուժողի շահերից, իսկ վերջինի հանգամանքի գնահատման պարտականությունը պետք է կրի վարույթն իրականացնող մարմինը՝ գործի բոլոր հանգամանքների պարզումից հետո, մասնավորապես՝ օրինական ներկայացուցչի գործողությունները բխում են արդյոք մանկահասակ տուժողի շահերից, թե ոչ:

Այսպիսով, գտնում են, որ պետք է հետևել Շվեյցարիայի, Գերմանիայի օրինակին և օրենսդրորեն պետք է կարգավորվի և ամրագրում ստանա նշյալ ինստիտուտի կիրառման հնարավորությունը, երբ ոստիկանությունը կատարվել է անչափահաս կամ սահմանափակ մեղսունակ տուժողի նկատմամբ:

Այսինքն, երբ օրենսդիրը սահմանել է հաշտության իրավունքի փոխանցման հնարավորություն, ապա այն դեպքում, երբ անչափահաս կամ սահմանափակ մեղսունակ տուժողի կարծիքը համընկնում է վերջինի շահերի պաշտպանության համար պարտականություն կրող անձի կարծիքի հետ և նրանց շահերը համընկնում են, ապա գործող օրենսդրության պայմաններում տվյալ դեպքում պետք է թույլատրելի համարել հաշտության կնքումը:

Նման հանգամանքների գնահատման պարտականությունը վարույթն իրականացնող մարմնին պետք է վերապահվի, վերջինն էլ պետք է առաջնորդվի անչափահաս լավագույն շահով:

Նշվածն, ըստ էության, բխում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի մեջբերված որոշումից և միջազգային փաստաթղթերից, որոնց ընդհանուր տրամաբանությունն այն է, որ պետք է հաշվի առնել նաև անչափահաս տուժողի կարծիքը:

ՀՀ քրեական օրենսգիրքը չի սահմանում նաև այն դեպքերի համար լուծումներ, երբ գործով անցնում են մի քանի հանցանք կատարած անձինք և մի քանի տուժողներ, որպիսի պայմաններում արդարացված կլինի, եթե օրենսդրական լուծում տրվի

նաև քննարկվող ինստիտուտի կիրառման հնարավորությունն ու առանձնահատկություններին մի քանի տուժողների կամ մի քանի հանցավորների առկայության պարագայում՝ սահմանելով յուրաքանչյուր տուժողի և յուրաքանչյուր հանցանք կատարած անձի հաշտության հիմքով տվյալ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատում՝ այն չկապելով ընդհանուր քրեական գործի հետ, իսկ եթե ունենք մեկ հանցանք կատարած անձ և մի քանի տուժող, ապա հաշտությունը պետք է հնարավոր լինի, եթե բոլոր տուժողները հաշտության գան հանցանք կատարած անձի հետ և նրանցից որևէ մեկի կամքը որևէ կերպ չսահմանափակվի:

Անդրադառնալով վերը նշված երրորդ խնդրին՝ գտնում են, որ արդարացված կլինի այն մոտեցումը, երբ բոլոր այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձը համարվի տվյալ հանցագործության սուբյեկտ, ապա ինքը հանդես գա որպես հաշտության կողմ, այլ ոչ վերջինի շահերի պաշտպանության համար պարտականություն կրող անձը, քանի որ, եթե օրենսդիրը տվյալ տարիքային շենք բավարար է համարել՝ քրեական պատասխանատվության գալու և սեփական արարքներին հաշիվ տալու գիտակցման համար, ապա նույնը պետք է տարածվի սեփական կամքի արտահայտմամբ հաշտության գալու դեպքերի վրա:

Բարձրացվող մյուս խնդիրն այն է, որ 14 տարին չլրացած և անմեղսունակ տուժողներին և ինչպես նշեցինք անհասկանալի է, թե ինչով է պայմանավորված այս բացառիկ արգելքը, այն էլ այն պայմաններում, երբ օրենսդիրը նախատեսել է հաշտության իրավունքի փոխանցումը մեկ այլ անձի, երբ խոսքը վերաբերել է անչափահաս կամ սահմանափակ մեղսունակ հանցանք կատարած անձին:

Գտնում են, որ սույն դեպքում էլ պետք է առաջնորդվել նույն տրամաբանությամբ, ինչ անչափահաս կամ սահմանափակ մեղսունակ անձի դեպքում և պահպանելով երեխայի լավամ լինելու իրավունքը՝ վերջինի շահերի պաշտպանության համար պարտականություն կրող անձին պետք է դիտարկել որպես հաշտության կողմ, իսկ վարույթն իրականացնող մարմինն արդեն կոնկրետ հանգամանքների գնահատմամբ կամ թույլատրելի կճանաչի հաշտությունը, կամ՝ ոչ:

Տվյալ դեպքում կարող է մեկ այլ խնդիր առաջանալ այն պայմաններում, երբ ենթադրյալ հանցանքի կատարման պահին անձը գտնվել է մեղսունակության վիճակում, իսկ հետագայում հիվանդացել է հոգեկան հիվանդությամբ, որը զրկել է նրան իր վարքագիծը գիտակցելու և այն դեկավարելու հնարավորությունից: Տվյալ դեպքում, մեր գնահատմամբ, իրավակիրառողները պետք է առաջնորդվեն հենց հաշտության կնքման պահին անձանց հոգե-

www.ardaradutyjournal.com

բանական և ֆիզիկական վիճակով:

Ամբողջացնելով վերոգրյալը, հարկ են համարում արձանագրել, որ ամեն դեպքում իրավակիրառողի առաջ երեխան ևս պետք է ունենա լաված լինելու իրավունք և այդ իրավունքը պետք է տարածվի նաև առողջական խնդիրներ ունեցող անձանց վրա, որոնց և հանցանք կատարած անձի միջոց հաշտության դեպքերը պետք է ամբողջապես և հստակ կարգավորում ստանան՝ օրենսդրական մակարդակում, հաշվի առնելով սույն պարագրաֆի առանձնահատկությունները և հարցերի լուծման համար առաջարկված լուծումները:

Եզրակացություն

Տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը, միջազգային փորձը, գիտական կարծիքները, ներպետական օրենսդրական նորմերը և առկա իրավական վիճակը ուսումնասիրելով՝ հանգում ենք հետևյալ եզրակացությանը.

- Զրեական պատասխանատվությունն այն բացասական հետևանքն է, որն անձը կրում է քրեական օրենքով արգելված արարք կատարելու դեպքում:

- Վերականգնողական արդարադատության դրսևորումներից է տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը, որի հաշտության կողմեր են հանդիսանում տուժողը և հանցանք կատարած անձը:

- Զրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն այն հանգամանքներն են, որոնք ընդհանուր կանոնից շեղվելու, հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության չենթարկելու պատճառ են, իսկ պայմաններն այնպիսի հանգամանքներն են, որով պայմանավորվում են քրեական պատասխանատվությունից ազատելու տվյալ տեսակի մյուս հիմքերի առկայությունը, իսկ հիմքերի և պայմանների ընդհանրությունը միասին այն չափանիշներն են, որոնք անհրաժեշտ են նշյալ հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

- Ազատման ինստիտուտը հանդես է գալիս որպես այլընտրանք այն դեպքերում, երբ պատժի նպատակներին կարելի է հասնել առանց քրեական պատասխանատվության ենթարկելու:

- Հաշտությունը տուժողի և հանցանք կատարած անձի փոխադարձ, ինքնուրույն և ազատ կամահայտնությամբ կնքված համաձայնությունն է, որն ուղղված է հանցագործության հետևանքով կողմերի միջև ծագած վեճը և այդ բնույթի հարաբերությունները վերացնելուն, դրանք վերականգնելուն:

- Նախկինում քննարկվող հողվածով նախա-

տեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից:

- Գտնում են, որ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար ՀՀ քրեական օրենսգիրքը որևէ առանձնահատկություն կամ բացառություն չի սահմանել երկօբյեկտ հանցագործությունների համար: Հետևաբար՝ երկօբյեկտ հանցագործություն կատարած անձը նույնպես պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից, եթե առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով սահմանված նախապայմանները: Այսինքն, երկօբյեկտ հանցագործությունների համար որևէ առանձնահատկություն կամ բացառություն սահմանող մեկնաբանությունը չի բխում ինչպես այդ հոդվածում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, այնպես էլ այդ հոդվածն ընդգրկող գլխի ու բաժնի կարգավորման համատեքստից և ՀՀ քրեական օրենսգրքի սկզբունքներից:

- Անհրաժեշտ է օրենսդրորեն կարգավորել նաև երկօբյեկտ հանցագործությունների դեպքում նշյալ ինստիտուտի կիրառելիության հնարավորությունը՝ իր բոլոր նրբություններով հանդերձ՝ խուսափելու համար տարաբնույթ մեկնաբանություններից:

- Այն հանցագործություններում, որտեղ տուժող է ճանաչվել հենց պետությունը բացառապես անհրաժեշտ է հաշտվել պետության (պետության ներկայացուցիչ) հետ: Դրանով իսկ հաստատելով, որ հաշտության կողմ կարող է լինել այն սուբյեկտը, ում անմիջականորեն վնաս է պատճառվել: Ուստի կարծում են, որ անհրաժեշտ է տուժող հասկացության մեջ ներառել նաև պետության իրավասու մարմիններին:

- Մեծ թվով տուժողների համար առաջնային կարգով պատճառված վնասի փոխհատուցումն է, առանձին դեպքերում նաև ներողությունը, ինչին մեղադրյալը համաձայնվում է գուցե նաև խուսափելու համար հետագա քրեական պատասխանատվությունից:

- Անձին քրեական պատասխանատվությունից ազատելը չի թույլատրվի միայն այն դեպքում, երբ վերջինս նախկինում տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելուց հետո կրկին հանցանք է կատարել:

- Անձը կարող է այնքան անզամ ազատվել քրեական պատասխանատվությունից, որքան դեռևս անձի վերաբերյալ չլինի տվյալ հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու մասին տեղեկություն (օրինական ուժի մեջ մտած դատավճիռ):

- ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 5-

րդ մասը հանցագործությունների համակցության դեպքում չպետք է կիրառվի, քանի որ այն դեպքում, երբ անձի մեղքը որոշված չէ չի կարող խոսք գնալ նշյալ արգելքի առկայության մասին, քանի որ տվյալ անձը համարվում է առաջին անգամ հանցանք կատարած անձ: Ավելին, նույնիսկ այն դեպքում, երբ անձը միաժամանակ կատարել է թվով չորս հանցանք (օրինակը պայմանական է բերված), սակայն ի սկզբանե բացահայտվել են երեքը և անձը ազատվել է քրեական պատասխանատվությունից, որից հետո նոր բացահայտվել է չորրորդ հանցանքը, ապա այս դեպքում գտնում ենք, որ չորրորդ հանցանքի համար նույնպես անձը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից: Այլ կիներ իրավիճակը, եթե անձը չորրորդ հանցանքը կատարել քրեական պատասխանատվությունից ազատվելուց հետո, քանի որ մնան պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված արգելքը կգործի:

• Տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար օրենսդիրը որևէ առանձնահատկություն կամ բացառություն չի սահմանել հանցագործությունների համակցության համար: Հետևաբար՝ մեկ կամ մեկից ավելի արարքներով ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարած անձը, եթե նա դրանցից ոչ մեկի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել, այսինքն՝ չկա ան-

ձի մեղավորությունը որևէ հանցագործության մեջ հաստատող օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, նույնպես պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից, եթե առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով սահմանված նախապայմանները:

• Օրենսդրորեն պետք է հանցանքների համակցության վերաբերյալ վերոնշյալ հարցերը կարգավորում ստանան՝ խուսափելով օրենսդրորեն չարգելված հանգամանքները ի վնաս անձին մեկնաբանելուց՝ այդ կա-պակցությամբ առաջացող վեճերից խուսափելու և իրավակիրառական պրակտիկայի հստակությունն ու միասնականությունն ապահովելու նպատակով:

• Կարծում են, որ իդեյական և իրական համակցությունների առկայության դեպքում նույնպես կիրառելի է սույն ինստիտուտի կիրառումը: Վերոշարադրյալը հիմնավորելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր հանցագործություն մեկնաբանաել որպես առանձին կատարած հանցագործություն, ինչի պայմաններում անձի վերաբերյալ կայացված մեղադրական դատական ակտ առկա չէ, այսինքն անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից իդեյական համակցության պարագայում:

¹ Տե՛ս Թոմին В., Сверчков В. Соотношение уголовного материального и процессуального законодательств // Законность, 2002, № 5, էջ 6, Якубов А. Процессуалисты “совершенствуют” уголовный закон // Законность, 2003, № 1, էջ 3, Наумов А. Нормы других отраслей права как источник уголовного права // Законность, 2002, № 7, էջեր 42-43, Ендольцева А.В. Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим (некоторые аспекты применения соответствующих норм уголовного и уголовно-процессуального законодательства) // Российский следователь, 2001, № 9, էջեր 29-30, ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս, էջ 472
² Տե՛ս Российское уголовное право. Общая часть / Под ред. В.С. Комиссарова. СПб., 2005:
³ https://continent-online.com/Document/?doc_id=30397325
⁴ https://online.zakon.kz/Document/?doc_id=30418109
⁵ Տե՛ս Уголовный кодекс Латвийской Республики. СПб., 2001:
⁶ https://legislationline.org/sites/default/files/documents/87/Estonia_CC_as_of_2002_ru.pdf
⁷ Տես՝ Մխիթար Գոշ «Գատաստանագիրք» ամփոփ Խաչիկ Սամուելեան:
⁸ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204095546
⁹ Տե՛ս Дедюхина И. Ф. Проблемы установления и реализации уголовной ответственности с учетом признаков потерпевшего: дис. ... канд. юрид. наук. М., 2008, էջ 126:
¹⁰ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=14918173765682529
¹¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԳ/0157/01/10 քրեական գործով 2011 թվականի հունիսի 13-ի որոշումը:
¹² Տե՛ս Аликперов Х.Д. Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Законность, 1999, № 6, էջ 13

www.aradaradutyjournal.com

¹³ St'u Келина С.Г. Освобождение от уголовной ответственности как правовое последствие совершения преступления // Уголовное право: новые идеи / Под ред. С.Г. Келиной, А.В. Наумова. М., 1994, էջ 11
¹⁴ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204317799
¹⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=110363>
¹⁶ <http://www.parliament.am/library/MAKkonvencianer/10.pdf>
¹⁷ <https://prwb.am/2013/05/31/%D5%B4%D5%A1%D5%AF-%D5%AB-%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B5%D5%AB-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A5%D5%B6-%D6%84%D5%B6/>
¹⁸ St'u' Головки Л.В. Альтернативы уголовному преследованию в современном праве.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ քրեական օրենսգիրքը՝ ընդունված 2003 թվականի ապրիլի 18-ին:
2. ՀՀ քրեական օրենսգիրքը՝ ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին:
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը՝ ընդունված 1998 թվականի հուլիսի 1-ին:
4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը՝ ընդունված 2021 թվականի հունիսի 30-ին:
5. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հուլիսի 13-ի թիվ ԵԱԶԳ/0157/01/10 քրեական գործով որոշումը:
6. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս, Երևան, 2007թ.:
7. Մխիթար Գ-ը «Գատախատանագիրք» ամփոփ Խաչիկ Սամուելյան:
8. Աշրաֆյան Ն., Քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու հիմքով, Երևան 2020, էջ 24-25, 28, 55, 75, 105
9. Освобождение от уголовной ответственности и наказания, էջ 1
10. Российское уголовное право. Общая часть / Под ред. В.С. Комиссарова. СПб., 2005:
11. Давыдова Е.В. Примирение с потерпевшим в уголовном праве. Диссерт... канд. юрид. Наук:
12. Ерохина Н.В., Прекращение уголовного дела и (или) уголовного преследования в связи с деятельным раскаянием на стадии предварительного расследования. М.: Изд-во Моск. ун-та МВД России, 2002, էջ 28:
13. Трубицина Э., Гренкова О., Дементьева Е. Права потерпевших в капиталистических странах // Социалистическая законность, 1990, № 10, 64,
14. Крылова Н.Е., Серебрянникова А.В. Уголовное право зарубежных стран. М., 1998, էջ 185:
15. Голованова Н.А. Свидетель и потерпевший в англо-американском процессе, էջ 5:
16. Ендольцева А.В. Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим (некоторые аспекты применения соответствующих норм уголовного и уголовно-процессуального законодательства)// Российский следователь, 2001, № 9, էջ 29–30,
17. Аликперов Х.Д. Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Законность, 1999, № 6, էջ 13
18. Келина С.Г. Освобождение от уголовной ответственности как правовое последствие совершения преступления // Уголовное право: новые идеи / Под ред. С.Г. Келиной, А.В. Наумова. М., 1994, էջ 11
19. Головки Л.В. Новые основания освобождения от уголовной ответственности и проблемы их процессуального применения // Государство и право, 1997, № 8, էջ 77-78, Филимонов Б.А. Основы уголовного процесса Германии. М., 1994, էջ13, Головки Л.В. Альтернативы уголовному преследованию в современном праве. М., 2002, էջ 448:
20. Головки Л.В. Альтернативы уголовному преследованию в современном праве:

Барегам Степанян

Исполняющий обязанности главного специалиста службы
правовых экспертиз аппарата Антикоррупционного суда РА

РЕЗЮМЕ

Проблемы освобождения от уголовной ответственности на основе примирения потерпевшего и лица, совершившего преступление

В данной статье рассматриваются проблемы, возникающие в Республике Армения при применении института освобождения от уголовной ответственности на основе примирения потерпевшего и лица, совершившего преступление, а также меры, направленные на их разрешение.

В теории уголовного права отсутствует единое мнение по ряду вопросов, касающихся данного института, а также в законодательстве существуют определённые пробелы, которые приводят к нарушению единообразной судебной практики.

В результате изучения института освобождения от уголовной ответственности на основе примирения потерпевшего и преступника в данной статье выявлены ключевые проблемы, предложены изменения и дополнения для их решения, реализация которых будет способствовать совершенствованию указанного института.

Ключевые слова: Потерпевший, преступник, примирение, уголовная ответственность, освобождение от ответственности, основные вопросы / фундаментальные вопросы, практика применения, нормативно-правовые акты, теория уголовного права, пробелы в законодательстве, судебная практика

Baregham Stepanyan

Acting Chief Specialist of the Legal Expertise Service
of the Staff of the Anti-Corruption Court of the RA

SUMMARY

Problems of exemption from criminal liability based on reconciliation between the victim and the person who committed the crime

In this article, we have examined the issues arising in the Republic of Armenia during the application of the institution of exemption from criminal liability on the basis of reconciliation between the victim and the person who committed the crime, as well as measures aimed at resolving those issues.

In the theory of criminal law, there is no unified approach to a number of questions concerning the institution of exemption from criminal liability on the basis of reconciliation between the victim and the offender. In addition, the legislation contains several gaps that lead to inconsistencies in law enforcement practice.

As a result of the study of this institution, this article identifies a number of key problems and proposes amendments and additions aimed at addressing them, the implementation of which will contribute to the improvement of the said institution.

Key words: Victim, offender, reconciliation, criminal liability, exemption from liability fundamental issues, application practice, legal regulations, theory of criminal law, legislative gaps, judicial practice, case law.

ՆԱԻՐԱ ՀԱՐՈՅԱՆ

Կլինիկական հոգեբան, կլինիկական
հոգեբանության մագիստրոս,
ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ

**ՀՈԳԵԹԵՐԱՊԵՎՏԻԿ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԿՀ-ՈՒՄ**

Հոդվածում խոսվում է ազատագրված անձանց վստահության կառուցման, խորհրդատվական աշխատանքների և հոգեթերապևտիկ աշխատանքների առանձնահատկությունների մասին, արժեքների վերաբերակումն ու մասին:

Հիմնարարներ- Հոգեբան, հոգեթերապիա, քրեակատարողական, դատապարտյալ, սքրես, ագրեսիա, ազատագրված, վերաարժեքավորում:

Հոգեթերապիան իրականացվում է հատուկ և տարատեսակ մեթոդների և տեխնիկաների միջոցով՝ կախված ուղղվածությունից: Հոգեթերապիան հատուկ դիսցիպլին է և հաղորդակցման յուրահատուկ տեսակ, ինչպես նշված է Սթրասբուրգյան հռչակագրում: Հոգեթերապիան, որն իրականացվում է քրեակատարողական հիմնարկներում ունի իր առանձնահատկությունները: Հոգեթերապիան քրեակատարողական հիմնարկներում (բանտեր, գաղութներ, մախնական կալանքի կենտրոններ) հոգեբանության և հոգեբուժության ոլորտ է, որը կենտրոնացած է ազատագրված մարդկանց օգնելու համար: Այն կարևոր դեր է խաղում ոչ միայն բանտարկյալների հոգեկան առողջության պահպանման, այլև վերաուցիակականացման, ագրեսիայի նվազեցման և հանցագործության կրկնության կանխարգելման գործում:

Հոգեթերապիայի հիմնական նպատակներն են

1. Հոգեկան առողջության աջակցություն

o աշխատել դեպրեսիայի, անհանգստության, հետտրավմատիկ սթրեսային խանգարման հետ

o իրականացնել աշխատանքներ ինքնասպանության և ինքնավնասման կանխարգելման ուղղությամբ

2. Դեևստրուկտիվ վարքի ուղղում

o ագրեսիա, ինպուլսիվություն, թմրամոլություն

o աշխատելով հանցավոր վերաբերմունքի և մտածողության հետ

3. Վերասոցիալականացում և ազատ արձակման նախապատրաստում

o հաղորդակցման հմտությունների զարգացում, պատասխանատվության զգացողություն

o Օրինապահ կյանքի մոտիվացիայի ձևավորում

Հոգեթերապիայի հիմնական մեթոդներն են

• *Անհատական թերապիան* հոգեբանի հետ գաղտնի գրույց է, որի ընթացքում մշակվում են անձնական տրավմաներ և խնդիրներ

• *Խմբային թերապիա* հաղորդակցման մարզումներ, արտ-թերապիա, կոգնիտիվ-վարքային խմբեր

• Կոգնիտիվ վարքային թերապիա (ԿՎԹ) - դեստրուկտիվ մտածողության շտկում, աշխատանք ինպուլսիվության և ագրեսիայի հետ

• *Ճգնաժամային միջամտություն* աշխատանք ինքնասպանության մտքերի և խուճապային վիճակների հետ

• *Հոգեբանական կրթություն* ինքնատիրապետման հմտությունների, սքրեսի կառավարման և հակամարտությունների լուծման վերապատրաստում[3]

Միջոցառման առանձնահատկություններն են

• Սահմանափակ ռեսուրսներ (մասնագետների, դեղորայքի, տարածքի պակաս)

• Բանտարկյալների կողմից հոգեբանների նկատմամբ անվստահության բարձր մակարդակը

• Քրեական ենթամշակույթի ազդեցությունը, որը կարող է խոչընդոտել բաց աշխատանքին

• Հոգեթերապիան հաստատության ռեժիմի պահանջների հետ համատեղելու անհրաժեշտությունը

Դրական ազդեցություններ՝

• Բանտում բռնության մակարդակի նվազեցում

• Ազատ արձակվելուց հետո կրկնվող հանցագործությունների թվի կրճատում

• Հաջող սոցիալականացման հնարավորությունների մեծացում

• Բանտարկյալների շրջանում ընդհանուր հոգեբանական մթնոլորտի բարելավում

Գործնական տարրեր, որոնք ամենից հաճախ աշխատում են

1. *Խնամքի շարունակականություն.* ռիսկի/կարիքների գնահատում, քերապիա բանտում, աջակցություն ազատ արձակվելուց հետո

2. *ԿԳԲ մոդուլյարություն.* առանձին բլոկներ իմպլիսիվության, համոզմունքների, գայրույթի կառավարման, խնդիրներ լուծելու հմտությունների համար

3. *Միջավայրի նորմալացում և անձնակազմի մենթորների դերը* աշխատակիցների վերապատրաստում մոտիվացիոն հարցազրույցների, անձնակազմի և բնակիչների համատեղ գործունեության մեջ

4. *Կախվածություններ.* երկարաժամկետ ծրագրեր, հետագա աջակցություն համայնքում

5. *Կապը առողջապահության հետ.* «ներմուծման մոդել» (Նորվեգիա) կամ ինտեգրում ազգային առողջապահական համակարգի հետ (Անգլիայի Ազգային առողջապահական ծառայություն)

6. *Գոյեր.* անհանգստության և ագրեսիայի մակարդակի նվազում, ինքնատիրապետման հմտությունների զարգացում, կարեկցանքի զարգացում, օգնություն վերասոցիալականացման գործում

- Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալի կամ կալանավորված անձի հետ հոգեթերապիայի հիմնական առանձնահատկություններն են այն, որ՝

- անձը այնտեղ չէ իր սեփական ազատ կամքով և քերապիան հաճախ տեղի է ունենում սահմանափակ պայմաններում, ինչը ազդում է մոտիվացիայի և վստահության մակարդակի վրա

- ազատազրկվածները կարող են հոգեբանին ընկալել, որպես վերահսկողության համակարգի ներկայացուցիչ: Հետևաբար կարևոր է կառուցել անվտանգ, հարգալից հարաբերություններ

- Հատուկ քերապստիկ հարաբերությունների

շրջանակներում, քերապիայի ընկալումը կարելի է ձևակերպել որպես տրանսֆերի զարգացում և կառուցվածքայնացում, որոնց նպաստում են մեկնաբանությունները: [2:ջ30]

- շատերն են համարվում քրեական ենթամշակույթ կրող, որը և կարող է խանգարել բացութայնը և անկեղծությանը

- նրանց շրջանում բարձր է հոգեկան խանգարումների մակարդակը՝ դեպրեսիա, հետտրավմատիկ վիճակներ, կախվածություններ, անձնային խանգարումներ, վախեր, տագնապներ

Շատ կարևոր է խմբային քերապիան՝ հոգեդրաման, արտ քերապիան, կոգնիտիվ վարքային մարզումները, քանի որ դա օգնում է աշխատել սոցիալական դինամիկայի հետ: [6]

Հիսթորիա 1. Ազատության մեջ գտնվող մարդն ընդդեմ դատապարտյալի (տես աղյուսակ 1)

Հիսթորիա N1-ում ներկայացված են ազատության մեջ գտնվող անձի և դատապարտյալի իրավունքների համեմատական բնութագիրը: Եկանք այն եզրահանգման, որ խիստ տարբերվում է ազատության մեջ գտնվող անձի և դատապարտյալի թե իրավական կարգավիճակը, թե կենսակերպերը, թե հոգեբանական վիճակը, ինքնաճանաչումը, պատասխանատվությունը, ընտրության ազատությունը, սոցիալական կարգավիճակը: Եթե ազատության մեջ տնվող անձն ունի լիարժեք իրավունքներ և ազատություններ և ունի ընտրություն, ինչպես այն տնօրինի, ապա այլ է պատկերը դատապարտյալի մոտ՝ դատարանի որոշմամբ իրավունքները խիստ սահմանափակված են լինում: Ազատության մեջ գտնվող անձն ունի բնակության, աշխատանքի, հանգստի վայրի լայն ընտրություն, այն բացակայում է դատապարտյալի մոտ:

Աղյուսակ 1

Չափանիշ	Ազատության մեջ գտնվող անձ	Դատապարտված անձ
Իրավական կարգավիճակ	Ազատ քաղաքացին ունի լիարժեք իրավունքներ և ազատություններ	Դատարանի որոշմամբ ազատազրկված անձի իրավունքները սահմանափակ են
Սոցիալական կապեր	Ընտանիք, ընկերներ, լայն սոցիալական շրջանա	Սահմանափակ կապեր (հարազատներ՝ այցելությունների միջոցով, խցակիցներ
Կենսակերպեր	Բնակության, աշխատանքի, հանգստի վայրի ազատ ընտրություն	Խիստ կարգավորվող ռեժիմ, կյանք ինստիտուցիոնալ միջավայրում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Չափանիշ	Ազատության մեջ գտնվող անձ	Դատապարտված անձ
Հոգեբանական վիճակ	Ավելի կայուն (նորմալ կենսապայմաններում)	Անհանգստության, սթրեսի, հնարավոր ագրեսիայի կամ անտարբերության աճ
Ինքնաճանաչում	Հնարավորություն սովորելու, կարիերա կառուցելու և զարգանալու	Սահմանափակ հնարավորություններ՝ կախված ուղղիչ հիմնարկի պայմաններից
Պատասխանատվություն	Անկախորեն պատասխանատու է իր կյանքի և գործողությունների համար	Վարչության մշտական հսկողության ներքո գործողությունների ազատությունը սահմանափակ է
Ընտրության ազատություն	Գործնականում անսահմանափակ (օրենքի սահմաններում)	Նվազագույն, որոշումների մեծ մասը կայացնում է հաստատության ղեկավարությունը
Սոցիալական կարգավիճակ	Կարող է լինել ցանկացած մեկը՝ հասարակության հարգված անդամից մինչև մարգինալ	«Դատապարտյալ» լինելու կարծրատիպը և կարծրատիպը նույնիսկ ազատ արձակվելուց հետո
Ապագա հեռանկարներ	Կախված է անձնական ջանքերից, հնարավորություններից և միջավայրից	Հաճախ բարդանում է զբաղվածության և սոցիալականացման հետ կապված խնդիրներով

Հիսթորիա 2. Հոգեբանական բնութագրեր (տես աղյուսակ 2)

Հիսթորիա N 2-ում տարվում է համեմատականներ հոգեբանական տեսակետից: Եթե ազատության մեջ գտնվող անձն իր ժամանակը դինամիկ ձևով է ընկալում՝ ապագայի ծրագրերի, նպատակների իրականացման համար, ապա դատապարտված անձի մոտ այն դանդաղ է անցնում, կա «սառեցվածության» զգացողություն, հաճախ կենտրոնանալով միայն անցյալի կամ ազատագրման օրվա վրա: Հաճախ ցածր ինքնագնահատականը, կամ ընդհակառակը հիպերփոխհատուցում՝ ու-

ղեկցվում է ագրեսիվության ցուցադրմամբ: Տարբեր են նաև արժեքային կողմնորոշումները, եթե ազատության մեջ գտնվող անձի մոտ ընտանիքն է, կարիերան, ազատությունը, անձնական հետաքրքրությունները, ապա դատապարտված անձի մոտ գոյատևում, ուժ խմբի ներսում, հեղինակություն, ազատություն որպես գլխավոր արժեք: Հաճախակի դեպրեսիան, ագրեսիան, հուզական անկայունությունը կարող է տանել ոչ գիտակցված արարքների: Հաճախ անորոշությունը ազատ արձակվելուց հետո՝ արտահայտվում է խարանի վախով:

Աղյուսակ 2

Հոգեբանական ասպեկտ	Ազատության մեջ գտնվող անձ	Դատապարտված անձ
Ժամանակի ընկալում	Ժամանակը դինամիկ է ընկալվում՝ ապագայի ծրագրեր, նպատակների ձգտում	Ժամանակը դանդաղ է անցնում, կա «սառեցվածության» զգացողություն, հաճախ կենտրոնանալով միայն անցյալի կամ ազատագրման օրվա վրա

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Հոգեբանական ասպեկտ	Ազատության մեջ գտնվող անձ	Դատապարտված անձ
Վերաբերմունքը ինքն իր նկատմամբ	Ինքնագնահատականը կախված է ձեռքբերումներից, հարաբերություններից, սոցիալական դերից	Հաճախ ցածր ինքնագնահատական կամ, ընդհակառակը, հիպերփոխհատուցում (ուժի ազդեցիկ ցուցադրում)
Վերաբերմունքը այլ մարդկանց նկատմամբ	Հաղորդակցության տարբեր ձևեր, շփման շրջանակի ընտրություն	Սահմանափակ շրջանակ՝ խցակիցներ և անձնակազմ, ինչը ստեղծում է զգուշություն, անվստահություն կամ խմբային համախմբվածություն
Արժեքային կողմնորոշումներ	Ընտանիք, կարիերա, զարգացում, ազատություն, անձնական հետաքրքրություններ	Գոյատևում, ուժ խմբի ներսում, հեղինակություն, ազատություն որպես գլխավոր արժեք
Զգացմունքային վիճակ	Ավելի հավասարակշռված՝ առօրյա կյանքի հնարավոր սթրեսների հետ միասին	Հաճախակի անհանգստություն, դեպրեսիա, ազդեցիկ, հուզական անկայունություն
Մոտիվացիա	Հաջողության հասնելը, ինքնադրսևորումը, կարիքների բավարարումը	Տառապանքի նվազագույնի հասցնելը, արժանապատվության պահպանումը, ազատության ձգտումը
Հաղորդակցություն	Հաղորդակցության ազատ ընտրություն, հասարակության մեջ տարբեր դերեր	Խիստ բանտային հիերարխիաներ, վարքագծի «կանոնագիրք» և ենթամշակութային ճնշում
Վարքագիծ	Կարգավորվում է սոցիալական նորմերով և անձնական ընտրությամբ	Կարգավորվում է հաստատության կանոններով և բանտի կանոնադրությամբ
Ապագա	Անձնական ծրագրերի և զարգացման հետ կապված	Հաճախ անորոշ՝ ազատ արձակվելուց հետո խարանի վախով

www.aradaradatutyunjurnal.com

Եթե հաշվի առնենք ազատագրվածների հետ հոգեթերապևտիկ աշխատանքի առանձնահատկությունները, ապա կարելի է ենթադրել, որ ազատությունից զրկված լինելով նրանք փորձում են ուշադրությունը կենտրոնացնել մոտիվացիոն-իմաստային վերաբերմունքի վրա, որին հստակ ուղղվածություն է տալիս սուբյեկտի սոցիալական դիրքը ինչը արտահայտվում է իր կողմից վտանգվածության և անվտանգության վիճակի նկատմամբ անհանգստությամբ: Առանձնահատկությունների և օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ մեկ-

նաբանման պատճառ, ինչը հոգեբանական վնաս հասցնելու պոտենցիալ ունեցող իրավիճակի և հոգեհուզական ազդեցության հետ մեկտեղ կարող է բերել հոգեկան գործունեության խանգարման, իսկ հատուկ դեպքերում լուրջ հոգեբանական խանգարումների: [7էջ34] Հոգեթերապևտիկ աշխատանքը շատ կարևոր է, որպեսզի հուզական ռեակցիաների, միջավայրային ազդեցությունների, սոցիալական պայմանների ու իրավիճակների հանդեպ ձեռք բերվի հաղթահարելու ունակություններ: Հոգեթերապևտիկ աշխատանքների արդյունքում բարձ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րացվի ազատագրվածների սեփական կենսագործունեության պլանավորման ցանկությունը և կյանքի իմաստային ձևակերպումը: Ցանկացած իրավիճակում, այս պարագայում ազատագրվումը առաջացնում է արժեքների վերաարժեքավորում՝ այն ինչը, որ արժեք ուներ կարող է կորցնել արժեքորու-

թյուն, իսկ այն որ արժեք չուներ՝ կարող է արժեքորվել: Հոգեթերապիայի աշխատանքը օգնում է դատապարտված անձին զգալ և ընդունել փոփոխությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հրաչյա Ամիրյան «Կոնսուլտատիվ հոգեբանության և հոգեթերապիայի հիմնունքներ» Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարան Երևան 2002թ.
2. Հելմուտ Կոլե, Հորս Քելսել «Հոգեվերլուծական թերապիա: Հիմնական դրույթներ» Երևան 2015
3. Ս. Յոչելսոն, Ս. Սամենուսի «Քրեական անձնավորություն» ԱՄՆ 2011
4. А.И.Кузнецова «Работы о психологии ресоциализации» г.Москва 2011
5. А. И. Долгова «Пенитенциарная психология» г.Москва (учебная пособие)
6. В. Франкел «О смысле жизни» пер.пуб. Литрес 2022
7. М.М Григоренко Безопасность жизнедеятельности: Учебное пособие-2008

Наира Ароян

Клинический психолог, магистр клинической психологии,
Уголовно-исполнительное учреждение “ Армавир”
(Министерство юстиции РА)

ՔԵՅՈՒՄԵ

Особенности психотерапевтической работы в пенитенциарных учреждениях

В статье рассматриваются особенности консультационной психотерапевтической работы по формированию доверия у осужденных.

Ключевые слова- психолог, психотерапия, исправительная колония, заключенный, стресс, агрессия, ценность, переоценка.

Naira Haroyan

Clinical psychologist, master of clinical psychology
“Arnavir” Penitentiary institution of the (Ministry of Justice of the RA)

SUMMARY

Xpeculiarities of psychotherapeutic work in penitentiary institutions

The article discusses the specifics of counseling and psychotherapeutic work to build the confidence of prisoners.

Key words: psychologist, psychotherapy, penal, convict, stress, aggression, prisoner, value, reevaluation.

Բնագիրը ներկայացվել է 11.02.2026թ.

Ընդունվել է տպագրության 17.03.26թ.

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

ՇՊՀ, իրավագիտության
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող

**ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ԴԵՐԸ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ**

Հոդվածում ներկայացվում են քրեակատարողական հիմնարկներում հոգևորականների դերը և կարևորությունը, ինչպես նաև կատարվում է փոքր պատմական ակնարկ հայ եկեղեցու բանտային առաջին եկեղեցիների հիմնման, և հոգևորականների բանտային ծառայության ընդգրման վերաբերյալ: Աշխատության կատարման համար հիմնականում հիմք են հանդիսացել քրեակատարողական հիմնարկներում ծառայություն իրականացնող հոգևորականների հետ ունեցած հարցազրույցները:

Հիմնարաներ- քրեակատարողական հիմնարկ, հոգևորական, բանտարկյալ, հոգևոր ծառայություն, վերափոխում, վերաինտեգրում, անձնական և հասարակական բնականոն կյանք:

Ներածություն: Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրելուց հետո անձանց սոցիալականացումը կարևոր պայման է նրանց վերաինտեգրումն հասարակությունում ապահովելու համար, որտեղ կարևոր դերակատարություն կարող են ունենալ և ունեն Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր սպասավորները: Արդի ժամանակներում հոգևորականների կողմից քրեակատարողական հիմնարկներում տարվող ծառայությունը ունի առանձնահատկությունները, որոնց վերհանումն ու վերլուծումը պայմանավորում է հոդվածի կարևորությունն ու արդիականությունը: Հետազոտությունը բաղկացած է երկու բաժիններից, որոնցում համապատասխանաբար ներկայացվում են Հայ եկեղեցու բանտային առաջին եկեղեցիների հիմնումը և հոգևորականի ծառայության առանձնահատկությունները քրեակատարողական հիմնարկներում:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտության իրականացման համար կիրառվել են պատմական, համեմատական-իրավական, վերլուծության, համադրման և հակադրման գիտական մեթոդները: Հետազոտության համար հիմք են հանդիսացել քրեակատարողական հիմնարկներում հոգևոր սպասավորություն իրականացնող հոգևորականների հետ ունեցած զրույցներն ու նրանց կողմից իրականացրած վերլուծությունները:

Հայ եկեղեցու բանտային առաջին եկեղեցիները: 1893 թվականի փետրվարին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Արարատ» պաշտոնական ամսագիրն ու կովկասյան մի շարք հայալեզու և ռուսալեզու թերթեր ազդարարում էին Թիֆլիսում հայկական նոր՝ Մետեխի բանտում հիմնված Սբ. Վարդան եկեղեցու օծման մասին: Խորհրդային տարիներից քանդված այդ եկեղեցին ժամանակակիցներիս կողմից գրեթե մոռացության է մատնված, իսկ պատմաբան Պարույր Մուրադյանն իր «Հին Թիֆլիսի հայկական եկեղեցիները» աշխատության մեջ

Թիֆլիսում գործած այդ եկեղեցու մասին հիշում է միայն տողատակում՝ նշելով, որ իր նպատակը «թվարկումը մեծացնելը չէ, այլ գիտական հետաքրքրություն ներկայացնողների ուսումնասիրությունը»:

Անշուշտ, Մետեխի այդ եկեղեցին հարուստ չէ իր պատմությամբ և ոչ էլ աչքի է ընկել իր ճարտարապետությամբ: Սակայն եկեղեցու կարճատև գործունեությունը հետաքրքիր մանրամասն է ավելացնում հայ եկեղեցական պատմությանը: Խոսքը Հայ Եկեղեցում 1800-ականներին ստեղծված բանտային ծառայության և բանտային եկեղեցու մասին է, ինչպիսին էր Մետեխի բանտի Սբ. Վարդան եկեղեցին:

Դեռևս 19-րդ դարի սկզբներին Եվրոպայում և, մասնավորապես, Ռուսաստանում ընդունված բանտային բարեփոխումներն արևմտյան եկեղեցիներում առիթ դարձան բանտային հոգևորականության ստեղծմանը: Այս շրջանում ի հայտ եկան նաև առաջին բանտային եկեղեցիները, որոնցով 19-րդ դարի վերջերին հատկապես հարուստ էր Ռուս Ուղղափառ Եկեղեցին: Հայ Առաքելական Եկեղեցին ևս անմասն չմնաց ժամանակի այդ հրամայականից:

Եկեղեցական վավերագրերը մեզ են փոխանցում 19-րդ դարի բանտային հայ հոգևորականների անուններ: Մասնավորապես, 1869 թվականին Կովկասի փոխարքայի գրասենյակի պետ բարոն Նիկոնովի կողմից Գևորգ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված մի գրություն վերաբերում է կայսեր կողմից հաստատված բանտային ընկերության հոգաբարձության՝ Թիֆլիսի կոմիտեի արված միջնորդությանը՝ Թիֆլիսի Սբ. Սարգիս եկեղեցու ավագերեց Սիմոն քահանա Տեր-Սիմոնյանին պարզևատրելու վերաբերյալ: Ըստ այս նամակի՝ հիշյալ քահանան, իր պարտականություններից գատ, 1849 թվականից պաշտոն է կատարել նաև Թիֆլիսի բանտում՝ «ճշմարիտ հովուական բարեխղճությամբ, կատարելով հոգևորականի և դաս-

www.aradaradutyjournal.com

տիարակի պարտականություններ, կրթելու բերումը եղած բանտարկյալներին»։ Այս ընթացքում է, որ Հայ Եկեղեցին ևս հիմնում է բանտային եկեղեցիներ։ Առաջին այդպիսի եկեղեցին հիմնվել էր Թիֆլիսի նահանգային բանտում։ Այդ մասին կարդում ենք «Արարատ»-ի՝ Մետեխի բանտի Սբ. Վարդան եկեղեցու օծմանը նվիրված հոդվածում. «Կովկասի և Անդր Կովկասի քաղաքների մեջ գտնուած բանտերը զուրկ են հայ բանտարկելոց համար աղօթատուն անգամ ունենալուց, միայն Թիֆլիզն է, որ 40 տարուց ի վեր «Թիֆլիզի նահանգի կենդրոնական» կոչուած բանտումն մի փոքրիկ, թէև անշուք, եկեղեցի է պահուած, և ահա այժմ մի լավ եկեղեցի ևս ունեցաւ Մետեխ անուանուած բանտումն»։

Ըստ նույն հրատարակման՝ Մետեխի բանտի ընդարձակ սենյակներից մեկում հայ բանտարկյալների համար եկեղեցի կառուցելու որոշումը կայացվել էր դեռևս 1889 թվականին՝ Թիֆլիզի բանտային հանձնաժողովի և վիրահայոց առաջնորդ Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանի նախաձեռնությամբ։ Գործի կազմակերպումը հանձնվել էր «Թիֆլիզի տոհմական պատուաւոր քաղաքացի պ. Նիկողայոս Սպիրիդոնեան Փրիդոնեանցին, աջակցութեամբ երկու բանտերի հայ բանտարկելոց համար յատկապէս ձեռնադրուած Գրիգորիս քահանայ Մատինեանի, որի արիաջան աշխատութիւնն Կայսերական պարզևաբաշխութեան է արժանացել և հայ հասարակութեան յարգանքը վաստակել»։

1892 թվականին թիֆլիսահայ «Նոր դար»-ը ընթացիկ աշխատանքների մասին տեղեկացնում էր. «Ներկայումս պ. Ն. Փրիդոնեանը ինքն անձամբ նուիրատուութիւններ է հաւաքում բանտի հայոց եկեղեցին սարքելու և զարդարելու։ Քաղաքի վաճառականներն ուրախութեամբ մասնակցում են այդ նուիրատութեանը»։

Եվ ահա 1893 թվականի փետրվարի 14-ին՝ Տյառնընդառաջի տոնին, կատարվում է Մետեխի բանտի Ս. Վարդան եկեղեցու օծումը։ Պատահական չէր նաև եկեղեցու անվան ընտրությունը։ Մետեխը, ըստ ավանդության, սբ. Վարդան գորավարի դստեր՝ Շուշանիկի նահատակության վայրն է եղել։ Այստեղ է գտնվում սրբուհու գերեզմանը՝ ամփոփված վրացական եկեղեցու ներսում։ Մետեխի հայկական եկեղեցին կոչելով սբ. Վարդանի անունով՝ հայոց մեծ գորավարի անհայտ գերեզմանի բացը լրացնելու խորհուրդն է տեսնում Հայ Եկեղեցին՝ հետագա տարիներին եկեղեցու օր նշանակելով նաև Սբ. Վարդանանաց տոնը։ «Սբ. Վարդան եկեղեցու օծման նախօրեին», ինչպես նշում է «Արարատ»-ը, «Թիֆլիսի հոգևորականները, փառաւոր հանդէսով նորակառոյց եկեղեցուն մօտիկ գտնուած Չորաբաշի Ս. Գեորգ եկեղեցուց տարան սրբալոյս Միւռնը, որին հետևում էր ժողովրդեան խումն բազմութիւնը»։ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի

սինոդի կարգադրությամբ՝ օծման արարողությունը կատարում է Գանձակից հատուկ այդ նպատակով Թիֆլիս ժամանած Պողոս վարդապետ Տեր-Մարգարյանը։ Օծման արարողությանն առանձնակի նշանակություն է հաղորդում մեծապատիվ հյուրերի ներկայությունը, որոնց թվում՝ Թիֆլիսի նահանգապետը, փոխնահանգապետը, քաղաքագլուխ Իշխան Ն. Երկայնաբազուկ-Արդուքյանը, Թիֆլիսի ոստիկանապետը, բանտային հանձնաժողովի հայ և օտարազգի պատվավոր անդամներ։

Եկեղեցու օծման առիթով երկու օր շարունակ եկեղեցու դռները բաց են մնում նաև Թիֆլիսի հայ ուխտավորների համար, արտոնություն, որ շարունակվում է ևս մի քանի տարի։

1895 թվականին արդեն թիֆլիսահայ «Արձագանք»-ը բանտային եկեղեցու մասին գրում է, որ Գրիգորիս քահանա Մատինյանցի շնորհիվ «այժմ եկեղեցին մի ուրախալի պատկեր է ներկայացնում թէ իր մաքրութեամբ, թէ համապատշաճ դասաւորութեամբ և թէ եկեղեցական զարդերով»։

1909 թվականին այստեղ հիմնվում է նաև դպրոց՝ անուանում հայ բանտարկյալներին գրագիտություն սովորեցնելու համար։

Ուշագրավ է նաև հայ կալանավորներից կազմված եկեղեցական երգչախմբի մասին տեղեկությունը։ 1909 թվականի հունիսին Մետեխի բանտ է այցելում Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Իգմիրլյանը։ Եվ, ինչպես գրում է «Հովիվե թերթը, «բանտի սրահի առաջին յարկից սկսուեց «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» շարականը, որ երգեց հայ բանտարկեալներից բաղկացած խումբը և մեծ տպաւորութիւն արաւ ամենի վրայ»։ Հանդիպումն ավարտվում է «Հայր մեր»-ի երգեցողությամբ, որ կրկին կատարում է կալանավորներից կազմված երգչախումբը։

20-րդ դարի սկզբներին արդեն որոշակի ավանդույթներ ձևավորած հայոց բանտային եկեղեցիները դադարեցին գործելուց խորհրդային կարգերի հաստատումից հետո։ Աստծու խոսքը հայ կալանավորներին հասցնելու հնարավորություն հայ հոգևորականին կրկին տրվեց նորանկախ Հայաստանում։ Այսօր հոգևորականի բանտային ծառայությունն ամրագրված է օրենքով։ 2007 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքով Հայ Եկեղեցուն իրավունք է վերապահված, ի թիվս այլ հաստատությունների, մշտական հոգևոր ներկայացուցիչ ունենալու նաև ազատագրկման վայրերում, ներառյալ՝ քննչական մեկուսարաններում։ ՀՀ ազատագրկման վայրերում կառուցվել և կառուցվում են նաև բանտային եկեղեցիներ։ Եվ թերևս արժե, որ նորակառույց այդ եկեղեցիներից մեկը հիշեցնի բանտային առաջին հայ հոգևորականների անունները՝ սբ. Սիմոն կամ սբ.

Գրիգորիս⁸ :

Հոգևորականի ծառայությունը քրեակատարողական հիմնարկում: Արդեն երեք տասնամյակից ավելի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ՔԿՀ-ներում ունի իր հոգևոր սպասավորները՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և տնօրինությամբ: Աշխատանքը տարիների ընթացքում դարձել է ավելի կանոնակարգված: Ներգրավված հոգևորականները, որ սպասավորում են ՀՀ-ում առկա գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկներում, տվյալ տարածքի քահանաներն են, որոնք շաբաթվա որոշ օրերին լինում են ՔԿՀ-ներում :

Քրեակատարողական հիմնարկում քահանայի ծառայությունը և՛ տարբերվում է, և՛ չի տարբերվում: Քահանայի հիմնական խնդիրը մարդկային հոգիների փրկությունը պետք է լինի, գղջման, ապաշխարության, խոստովանության միջոցով մարդկանց դեպի երկնքի արքայություն առաջնորդելը, բայց մյուս կողմից քրեակատարողական հիմնարկն ունի իր առանձնահատկությունները, որովհետև մարդիկ սահմանափակումների մեջ են գտնվում: Օրինակ՝ բանտարկյալը չի կարող մասնակցել Ս. Պատարագներին, եկեղեցական խորհուրդներին՝ բացառությամբ այն խորհուրդների, որ հնարավոր է ՔԿՀ-ներում կատարել: Օրինակ՝ Ս. Ծննդյան և Ս. Հարության տնօրինեքներ, խաղողօրհնեքի կարգ, մկրտություններ և պսակներ, ինչպես նաև ավելի պատրաստված և դրա պահանջը գիտակցող բանտարկյալների համար խոստովանության և ապաշխարության կարգեր և Ս. Հաղորդության տրամադրում :

Այսօր հոգևորականի դերը մեծ է ՔԿՀ-երում, որովհետև նրանց ներկայությունը, գրույցները բանտարկյալների հետ աշխարհայացք են փոխում: Գրեթե բոլորը գիտակցում են հոգևոր խոսքի անհրաժեշտությունը: Եվ քանի որ այն քրեակատարողական հիմնարկ է, հանդիպումները, որպես կանոն, լինում են անհատական, ինչն ավելի է բարդացնում հոգևորականի աշխատանքը: Մարդիկ, նեղության մեջ լինելով, առավել կարիք ունեն մխիթարության, այդ վիճակից դուրս գալու, որովհետև շատերը, մանավանդ ցմահ բանտարկյալները, ընկճված են լինում հատկապես իրենց դատապարտության առաջին տարիներին⁹ : Եվ եթե այդտեղ մարդը չունենա հոգևոր գիտակցություն, հավատք, աստիճանաբար կկորցնի ապրելու ազդակները: Հոգևորականներն առաջին հերթին մարդկային մոտեցում են ցուցաբերում բանտարկյալի հանդեպ՝ սկսելով պարզ գրույցներից, ինչից հետո միայն անցում են կատարում հոգևոր թեմաներին: Չպետք է մոռանալ, որ ՔԿՀ-ներում կան մարդիկ, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանանք չունեն, կան աղանդավորներ, անհավատներ: Բայց ան-

գամ վերջինները պատրաստ են գրույցի՝ ելնելով հոգևորականի սրտացավ ու ջերմ վերաբերմունքից: Շատ կարևոր է, որ բանտարկյալը վստահի հոգևորականին, ինչն այդ պայմաններում լուրջ խոչընդոտ է, նրանք շատերի հանդեպ անվստահություն ունեն, և հոգևորականին էլ սկզբում նույն դիտանկյունից են մոտենում, բայց երբ հասկանում են, որ շատերի նման չի եկել, որ իր գործն անի ու գնա, սկսում են վստահել, կիսվել իրենց խնդիրներով: Ուստի հոգևորականի կեցվածքն ու պահվածքը շատ կարևոր են: Հոգևորականները փորձում են իրենց բերել ապաշխարության, մեղքերից ազատագրման՝ հանուն երկնքի արքայության, ինչի կարիքը բոլորն ունեն, պարզապես, ի տարբերություն այս մարդկանց, որոնց հանցանքները հայտնի են հասարակությանը, շատերի մեղքերի մասին գիտի, թերևս, միայն Աստված¹² :

Սակայն, միայն հոգևորականի այցերը բավարար չեն լուրջ փոփոխությունների համար, եթե դիմացինն ինքը չցանկանա: Չգտում ունեցողները լուրջ առաջընթաց ունեն քրիստոնեական առումով: ՔԿՀ-ում կարելի է սովորել որևէ մեկին չարհամարհել, չանտեսել: Բանտարկյալներից ոմանք անգամ առաջնորդվում են բարոյական ու քրիստոնեական բարձր արժեքներով: Մարդիկ կան, որ այդ պայմաններում պահք են պահում, ծոմապահություն ունենում, Սուրբ Գիրքն ընթերցում և աղոթում: Ինչ վերաբերում է հոգևորականի գիտելիքներին, դրանք կարևոր են (շատ մարդիկ հենց դրանցով են հրապուրվում), բայց առավել կարևոր են հավատքն ու սերը, հոգածությունը և ուշադրությունը: ՔԿՀ-ներում կան ծանր պատիժների դատապարտված մարդիկ, որ իրականում այդ հանցանքը չեն գործել, կամ իրենց հանցանքն ավելի փոքր է, քան սահմանված պատիժը: Նրանց հարցերին պատասխանելն ու մխիթարելը շատ դժվար է, եթե քրիստոնեական գիտակցություն չունեն՝ հասկանալու համար, որ Աստված ամեն ինչ գիտի, և եթե թույլ է տալիս, որ առանց մեծ հանցանքի պատիժ կրես, ուրեմն դա քեզ օգտակար է, քանի որ Տերն ուզում է դժվարության, նեղության, փորձության ճանապարհով քեզ հասցնել մեղքերից ազատագրության և փրկության: Իհարկե, արդյունքը միայն Աստված գիտի, բայց Նա տալիս է երկնքի արքայություն տանող նեղ և անձուկ ճանապարհը: Այս ամենից ելնելով էլ՝ ամեն անգամ ՔԿՀ այցելելը հոգեբանական դժվարությունների առջև է կանգնեցնում հոգևորականին¹³ :

ՔԿՀ-ներում կան և՛ գրեթե անգրագետ, և՛ միաժամանակ գիտելիքների լուրջ պաշարով մարդիկ: Կյանքի ձգտում ունեցողները փորձում են ոչ թե ժամանակը սպանել, այլ ապրել կյանքը: Յմահ դատապարտյալների մեջ կան գրողներ, ուսանողներ, համալսարաններ ավարտածներ, ՔԿՀ-ից հեռահար աշխատողներ, ամենատարբեր ոլորտների թղ-

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բակիցներ ու ծրագրավորողներ: Նրանք բոլորն ունեն մեկ ընդհանուր հասկանիչ. ձգտում են ազատության, նորմալ կյանքի: Ուղղակի հենց այդտեղ է, որ խնդիր է առաջանում. հիմնականում չգիտեն՝ ինչպես նորմալ ապրել: Հարցն այն է, որ մարդը ոչ թե ուզում է բանտ գալ, այլ չգիտի՝ ինչպես ապրել կյանքը: Երկար տարիներ ԲԿՀ-ներում գտնվող դատապարտյալներից գրեթե նույն խոսքերը կարելի է լսել: Եթե ընտանիք չունեն, ուզում են ընտանիք կազմել, եթե ընտանիք ունեն, ուզում են գնալ մի հեռու գյուղ՝ մարդկանցից հեռու, աշխատել ու ապրել: Այս ընթացքը մի քիչ երազային է, ուստի այստեղ է, որ հոգևորականը պիտի օգտակար լինի՝ սովորեցնելով, որ ճանապարհը, ճշմարտությունն ու Կյանքը Քրիստոսն է, և որևէ մեկը չի կարող հասնել երկնքի արքայության, եթե ոչ Նրա միջոցով¹⁴:

ԲԿՀ-ներում ծառայություն մատուցող հոգևորականները փաստում են, որ մարդիկ կան, որ բանտախցի ճաղերի հետևում ավելի ազատ են, քան շատերը դրսում, այսինքն՝ Աստծո մեջ ազատություն են գտել, մեղքերի հետ պայքարելով՝ հասել են հոգու ազատության¹⁵: Պարզապես մեր հասարակությունը դեռ պատրաստ չէ ընդունելու այս մարդկանց: Միայն ցմահ դատապարտյալ անունը բավարար է, որ ցանկացած լսող պատկերացնի ինչ-որ մարդասպան: Հասարակության մեջ կարծրատիպ կա, որ պետք է հաղթահարել, և ինչքան շատ լինեն նրանց մասին հրապարակումները, այնքան ավելի ճանաչելի կդառնան: Եթե նույնիսկ այդ մարդիկ իրենց կյանքի ինչ-որ հատվածում սխալվել ու սայթաքել են՝ չպետք է մոռանալ՝ բոլորն էլ մեղավոր են, և մի օր անպայման զոջում են՝ փորձելով շտկել իրենց կյանքը: Այդ դեպքում ինչո՞ւ մյուսները դրա իրավունքն ունեն, իսկ ցմահ դատապարտյալը կամ բանտարկյալը՝ ոչ¹⁶:

ԲԿՀ-ներում շատ կարևոր է հոգևոր ծառայությունը՝ մարդկանց օգնելու, ճիշտ ճանապարհը ցույց տալու, բարոյապես վերափոխելու համար: Ընդհանրապես, մեկուսացման և պատիժ կրելու երևույթը շատ սնան է քրիստոնեական ապաշխարության խորհրդին. երբ մեղքի մեջ ընկած մարդը ունի մեղքի գիտակցությունը, զգում է մեղքից բաժանվելու կարիքը, խոստովանում է այդ մեղքը և իր կատարած սխալի համար հատուցում է իրական գործով: Սակայն ապաշխարության խորհուրդը կատարվում է, երբ մեղավորն ինքն է գալիս այդ գիտակցությանը, իսկ ԲԿՀ-ների դեպքում այլ է. պետությունն ունի օրենքներ, օրենքները կյանքի կոչող դատարաններ, որոնք հանցանքի ապացուցման դեպքում պատիժ և մեկուսացում են սահմանում անկախ դատապարտյալի կամքից: Պարզապես խնդիրն այն է, որ չպետք է բավարարվել միայն մեկուսացման պատժով: Արդարադատության համակարգը պետք է օժտված լինի հանցագործին հանցանքից զատելու, այսինքն՝ վերափոխելու

առաքելությամբ¹⁷: Միայն մեկուսացման ձևով պատժելու և պահելու պարագայում հանցանք կատարած մարդը մնում է իր ուժերի հույսին և կարող է սեփական ուժերով կամ վերականգնվել, կամ ավելի մխրճվել իր հանցագործ մտայնության և կենսաձևի մեջ: Այստեղ է, որ մեծապես կարևորվում է եկեղեցու, հոգևորականի գործունեությունը, որպեսզի մարդը գիտակցի իր մեղքը, անցնի վերափոխման ճանապարհով¹⁸:

Մեծ է հոգևորականի դերը՝ հասարակության առողջացման տեսանկյունից: Քրեակատարողական հիմնարկներում պատիժ են կրում հիմնականում նրանք, ովքեր մեղանչել են ոչ միայն քրիստոնեական բարոյականության, այլ նաև օրենքի առջև: Մարդը գողություն է արել, ձեռքակալվել և դատապարտվել է: Եվ եթե նա չվերափոխվի բանտում, այլ ավելի մխրճվի իր հանցավոր մտադրության մեջ, մի օր դուրս գալով հասարակության մեջ, դարձյալ շարունակելու է իր սև գործը և վնասելու ուրիշներին, և ի վերջո պետությանը¹⁹:

Անազատության մեջ գտնվողները չեն կարող գնալ եկեղեցի, այլ հոգևորականներն են գնում իրենց մոտ: Նույն հոգևոր ծառայությունը, որ կատարվում է դրսում, իրականացվում է նաև ԲԿՀ-ներում՝ հոգևոր խնամք, ծիսական արարողություններ (Սկրտություն, Պսակ, Սուրբ Պատարագ, խոստովանություն՝ անհատական և ընդհանրական, Սուրբ Հաղորդություն): Երբ հոգևոր խնամքը տարածվում է շատերի վրա, անմիջապես արձագանքը դատապարտյալների կողմից չի ուշանում. նկատվում է ակտիվություն թե՛ արարողություններին մասնակցելու, թե՛ հոգևորականին մոտենալու և խոստովանություն կատարելու առումներով: Բազմապատկվում է մկրտվել ցանկացողների թիվը²⁰:

Եթե դատապարտյալը եկավ հոգևորականի հետ խոսելու, նշանակում է՝ նա զգացել է հոգևորականի հետ առնչվելու, Աստծու խոսքը լսելու, խոստովանություն անելու և կյանքը առողջացնելու կարիքը: Երբ մարդը քայլելիս ճանապարհին սայթաքում է, փորձում է արագ ոտքի կանգնել, ուժերը չբավականացնելու դեպքում ձեռքը տալիս է իրեն օգնության եկած որևէ անցորդի պարզած ձեռքը: Կարելի է ասել, հենց ձեռք մեկնողի առաքելությամբ է հոգևորականը մտնում ԲԿՀ՝ պատրաստ բոլորին ընդունելու, բոլորի հետ խոսելու, իրենց հոգսը կիսելու²¹:

Հաճախ են պատահում դեպքեր, երբ բանտարկյալները խոստովանում են, զոջում կատարածի համար: Եվ եթե մարդը գալիս է Սուրբ Հաղորդություն ստանալու և դրանից առաջ խոստովանություն է արել, նշանակում է՝ նա արդեն հասել է սխալը զգալու, զոջալու, վերափոխվելու գիտակցությանը²²:

ԲԿՀ-ներում շատ կարևոր է հոգևորականի

www.aradadutyjournal.com

նկատմամբ վստահությունը: Բանտարկյալները խոստովանության երբեք չեն գա, մինչև չվստահեն հոգևորականին: Այդ վստահությունը քրտնաջան աշխատանքի, ճիշտ պահվածքի արդյունք է: Հոգևորականը պետք է ոչ միայն տարբերվի բոլորից, այլ նաև օժտված լինի դիմացիներին փոխելու, աղոթքի կանչելու ուժով ու զորությամբ: Պետք է նրանց համար օրինակ լինել, ուսուցանել սեփական կյանքով ու կեցվածքով: Ոչ ոք չի մեղադրում բանտարկյալներին, քանի որ արդեն դատապարտված են. պարզապես փորձում են ցույց տալ արարքի վտանգավորությունը, ներկայացնել կատարված հանցանքը քրիստոնեական լույսի ներքո, բացահայտել մարդու արժեքը, մատնանշելու մարդու արժանապատվության և հանցանքի անհամատեղելիությունը²³: Սակայն պետք է վկայել, որ հոգևորականը դատապարտյալի կողմից լիարժեք վստահության է արժանանում, երբ տեսնում է հավատի իրական դրսևորում Տիրոջ նկատմամբ, ծառայության բարձր գիտակցություն, որ մարմին է ստանում իր նկատմամբ դրսևորվող սիրո և ուշադրության մեջ, երբ զգում է, որ հոգևորականը բանտ է մտնում հենց իր համար, իրեն ժամանակ հատկացնելու մեկուսացման պայմաններում²⁴:

Հոգևոր խնամքից, ծիսական արարողություններից զատ հոգևորականները փորձում են նաև հանդիպել կալանավորների ընտանիքների հետ: Որովհետև հոգևորականներին հետաքրքրում է, թե ինչպիսի՞ն է նրանց ընտանեկան վիճակը, ինչպե՞ս է ազդել մեկուսացումը կամ պատիժը կնոջ կամ ամուսնու և զավակների հարաբերությունների վրա: Գրեթե ամեն շաբաթ այցելություններ են կատարվում դատապարտյալների բնակարաններ: Նրանց մեծ մասը խոցելի խավերից են, և՛ նյութական և՛ հոգեբանական դժվարություններ ունեն: Ընտանիքի անդամների հետ անցկացնում են զրույցներ, որպեսզի նաև ինչ-որ իմաստով փարատվի իրենց մեկուսությունը: Բացի այդ, անհանգստացնում է նաև նրանց զավակների դաստիարակության և կրթության խնդիրները: Մայր Աթոռի կողմից հայթայթված ֆինանսական միջոցներով բարձրագույն կրթություն են ստանում անչափահաս տարիքում ՔԿՀ-ներում հայտնված դատապարտյալներ և դատապարտյալների զավակներ²⁵:

Հոգևորականի ծառայության լավագույն գնահատականն այն է, երբ դատապարտյալը դուրս է գալիս ՔԿՀ-ից և այլևս չի վերադառնում: Հոգևոր կյանքից հեռու գտնվող շատ դատապարտյալներ այսօր փարվել են իրենց Մայր Եկեղեցուն, մկրտվել և դարձել են եկեղեցու անդամ: Բանտից դուրս գալուց հետո հաճախ են գնում Մայր Աթոռ, կապ պահպանում, որևէ փորձության ժամանակ անմիջապես դիմում են հոգևորականի օգնությանը: Մի շարք աղանդավորներ էլ հոգևորականների հետ զրույցների արդյունքում դարձի են գալիս²⁶:

Կան էությունը հանցագործներ, սակայն չկան անուղղելի մարդիկ: Հիշենք, որ երբ բորոտը (բորոտները հասարակությունից մեկուսացված, մոտավորապես բանտարկյալի վիճակում էին) աղաղակեց Հիսուսին. «Տե՛ր, եթե կամենաս, ինձ կմաքրես», Տիրոջ պատասխանն այս էր. «Կամենում եմ, մաքրվիր»: Այստեղ համընկնում են Տիրոջ և մարդու կամքը, քանի որ Աստված ուզում է, որ մենք մաքրվենք, վեր կանգնենք, ապրենք իրապես մարդկային կյանքով՝ Իր լույսի ներքո: Նա մեզ տվել է ուժ, կարողություն՝ ամենը, որպեսզի մենք, սխալներով հանդերձ, հավատարիմ լինենք մեր մարդ կոչմանը. եթե կա անկում, կա նաև բարձրացում, բայց մենք պետք է ցանկանանք բարձրանալ...²⁷:

Եզրակացություն: Ուսումնասիրելով թեման կարելի է եզրակացնել, որ ՔԿՀ-ներում գտնվող անձանց հանդիպումները հոգևորականների հետ ունեն կարևոր առանձնահատկություններ: Իրավապահ համակարգի աշխատակիցները ևս կարող են նրանց հետ պարբերաբար ունենալ զրույցներ, բայց հոգևորականի խոսքը շատ ավելի ազդեցիկ է և ավելի քան կարևոր ազատությունից զրկված անձի կյանքում՝ նրանց վերափոխման, դաստիարակման, հասարակության մեջ վերաինտեգրման և անձնական ու հասարակական բնականոն կյանքը շարունակելու համար:

www.aradaradatiyunjournal.com

¹ Սկրտչյան Հ., Հայ եկեղեցու բանտային առաջին եկեղեցիները, հասանելի է՝ <https://krishayas.wordpress.com/2012/10/30/%d5%b0%d5%a1%d5%b5-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%b8%d6%82-%d5%a2%d5%a1%d5%b6%d5%bf%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%a1%d5%bc%d5%a1%d5%bb%d5%ab%d5%b6-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%ab/>, հրապարակման ամսաթիվը՝ 2012թ. հոկտեմբերի 30, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 4:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ Սկրտչյան Հ., Հայ եկեղեցու բանտային առաջին եկեղեցիները, հասանելի է՝ <https://krishayas.wordpress.com/2012/10/30/%d5%b0%d5%a1%d5%b5-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%b8%d6%82-%d5%a2%d5%a1%d5%b6%d5%bf%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%a1%d5%bc%d5%a1%d5%bb%d5%ab%d5%b6-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%ab/>, հրապարակման ամսաթիվը՝ 2012թ. հոկտեմբերի 30, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 4:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Տեր Գրիգոր քին. Հովհաննիսյան, Բողոքս էլ մեղավոր ենք..., հասանելի է՝ <https://araratian-tem.am/post/1306>, հրապարակման ամսաթիվը՝ 2021թ. դեկտեմբերի 10, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 5:

¹¹ Հովհաննիսյան Գ., Բանտային պայմաններին հաշտվելու դժվարությունները, հասանելի է՝ <https://prisoninitatives.am/articles/18499/>, հրապարակման ամսաթիվը՝ 2022թ. հունվարի 22, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 7:

¹² Տեր Գրիգոր քին. Հովհաննիսյան, Բողոքս էլ մեղավոր ենք..., հասանելի է՝ <https://araratian-tem.am/post/1306>, հրապարակման ամսաթիվը՝ 2021թ. դեկտեմբերի 10, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 5:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Տեր Նշան քին. Ալավերդյան, Մեր ներսի բանտերը քանդենք, վերացնենք և թողնենք, որ Աստծո սերն ու լույսը ներս գան, հասանելի է՝ <https://www.qahana.am/post/1394>, հրապարակման ամսաթիվը՝ 2021թ. հոկտեմբերի 18, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 1:

¹⁶ Տեր Գրիգոր քին. Հովհաննիսյան, Բողոքս էլ մեղավոր ենք..., հասանելի է՝ <https://araratian-tem.am/post/1306>, հրապարակման ամսաթիվը՝ 2021թ. դեկտեմբերի 10, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 5:

¹⁷ Արարատյան Հայրապետական թեմի տեղեկատվական բաժին, Հոգևորականի դերը անչափահասների կյանքում, հասանելի է՝ <https://www.qahana.am/post/3859>, հրապարակման ամսաթիվը՝ 2019թ. հուլիսի 11, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 3:

¹⁸ Տեր Ռուբեն վրդ. Զարգարյան, Բանտում էի, և ինձ այցի եկաք, հասանելի է՝ <https://www.aysor.am/am/news/2013/10/11/ruben-abegha-zargaryan/683131>, հրապարակման ամսաթիվը՝ 2013թ. հոկտեմբերի 11, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 6:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

²¹ Տեր Ռուբեն վրդ. Զարգարյան, Բանտում էի, և ինձ այցի եկաք, հասանելի է՝ <https://www.aysor.am/am/news/2013/10/11/ruben-abegha-zargaryan/683131>, հրապարակման ամսաթիվը՝ 2013թ. հոկտեմբերի 11, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 6: Նույն տեղում:

²² Նույն տեղում:

²³ Տեր Նշան քին. Ալավերդյան, Մեր ներսի բանտերը քանդենք, վերացնենք և թողնենք, որ Աստծո սերն ու լույսը ներս գան, հասանելի է՝ <https://www.qahana.am/post/1394>, հրապարակման ամսաթիվը՝ 2021թ. հոկտեմբերի 18, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 1:

²⁴ Տեր Ռուբեն վրդ. Զարգարյան, Բանտում էի, և ինձ այցի եկաք, հասանելի է՝ <https://www.aysor.am/am/news/2013/10/11/ruben-abegha-zargaryan/683131>, հրապարակման ամսաթիվը՝ 2013թ. հոկտեմբերի 11, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 6:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Տեր Ռուբեն վրդ. Զարգարյան, Բանտում էի, և ինձ այցի եկաք, հասանելի է՝ <https://www.aysor.am/am/news/2013/10/11/ruben-abegha-zargaryan/683131>, հրապարակման ամսաթիվը՝ 2013թ. հոկտեմբերի 11, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 6:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ

1. Արարատյան Հայրապետական թեմի տեղեկատվական բաժին, Հոգևորականի դերը անչափահասների կյանքում, հասանելի է՝ <https://www.qahana.am/post/3859>, հրապարակման ամսաթիվը՝ 2019թ. հուլիսի 11, վերջին

այցելություն՝ 2025թ. օգոստոսի 3:

2. Հովհաննիսյան Դ., Բանտային պայմաններին հաշտվելու դժվարությունները, հասանելի է՝ <https://prisoninitiatives.am/articles/18499/>, հրապարակման ամսաթիվը՝ 2022թ. հունվարի 22, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 7:

3. Սկրտչյան Հ., Հայ եկեղեցու բանտային առաջին եկեղեցիները, հասանելի է՝

<https://krishayas.wordpress.com/2012/10/30/%d5%b0%d5%a1%d5%b5-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%b8%d6%82-%d5%a2%d5%a1%d5%b6%d5%bf%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%a1%d5%bc%d5%a1%d5%bb%d5%ab%d5%b6-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%ab/>, հրապարակման ամսաթիվը՝ 2012թ. հոկտեմբերի 30, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 4:

4. Տեր Գրիգոր քին. Հովհաննիսյան, Բոլորս էլ մեղավոր ենք..., հասանելի է՝ <https://araratian-tem.am/post/1306>, հրապարակման ամսաթիվը՝ 2021թ. դեկտեմբերի 10, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 5:

5. Տեր Նշան քին. Ալավերդյան, Մեր ներսի բանտերը քանդենք, վերացնենք և թողնենք, որ Աստծո սերն ու լույսը ներս գան, հասանելի է՝ <https://www.qahana.am/post/1394>, հրապարակման ամսաթիվը՝ 2021թ. հոկտեմբերի 18, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 1:

6. Տեր Ռուբեն վրդ. Չարգարյան, Բանտում էի, և ինձ այցի եկաք, հասանելի է՝

<https://www.aysor.am/am/news/2013/10/11/ruben-abegha-zargaryan/683131>, հրապարակման ամսաթիվը՝ 2013թ. հոկտեմբերի 11, վերջին այցելություն՝ 2025թ. օգոստոսի 6:

References

1. Ayraratyan Hayrapetakan temi teghekatvakan bazhin [Information Department of the Ararat Patriarchal Diocese], Hogevorakani dery anchapahasneri kyanqum [The Role of the Clergy in the Lives of Minors], hasaneli e [available at]: <https://www.qahana.am/post/3859>, hrarakman amsativy [publication date]: Hulis [July] 11, 2019, vejjin aytselutyuny [last visited]: Ogositos [August] 3, 2025. (In Armenian)

2. Hovhannisyanyan D., Bantayin paymannerin hashtvelu dzhvarutyunnery [The Difficulties of Adapting to Prison Conditions], hasaneli e [available at]: <https://prisoninitiatives.am/articles/18499/>, hrarakman amsativy [publication date]: Hunvar [January] 22, 2022, vejjin aytselutyuny [last visited]: Ogositos [August] 7, 2025. (In Armenian)

3. Mkrtchyan H., Hay yeghetsu bantayin arajin yekeghetsinery [The First Prison Churches of the Armenian Church], hasaneli e [available at]: <https://krishayas.wordpress.com/2012/10/30/%d5%b0%d5%a1%d5%b5-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%b8%d6%82-%d5%a2%d5%a1%d5%b6%d5%bf%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%a1%d5%bc%d5%a1%d5%bb%d5%ab%d5%b6-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%ab/>, hrarakman amsativy [publication date]: Hoktember [October] 30, 2012, vejjin aytselutyuny [last visited]: Ogositos [August] 4, 2025. (In Armenian)

4. Father Grigor Hovhannisyanyan, Bolors el meghavor enq... [We are all sinners...], hasaneli e [available at]: <https://araratian-tem.am/post/1306>, hrarakman amsativy [publication date]: Dektember [December] 10, 2021, vejjin aytselutyuny [last visited]: Ogositos [August] 5, 2025. (In Armenian)

5. Father Nshan Alaverdyanyan, Mer nersi bantery qandenq, veratsnenq yev toghnenq, vor Asttso sern u luysy ners gan [Let's destroy our inner prisons, eliminate them and let God's love and light come in], hasaneli e [available at]: <https://www.qahana.am/post/1394>, hrarakman amsativy [publication date]: Hoktember [October] 18, 2021, vejjin aytselutyuny [last visited]: Ogositos [August] 1, 2025. (In Armenian)

6. Father Ruben Zargaryanyan, Bantum ei, yev indz aytsi yekaq [I was in prison, and you came to visit me], hasaneli e [available at]: <https://www.aysor.am/am/news/2013/10/11/ruben-abegha-zargaryan/683131>, hrarakman amsativy [publication date]: Hoktember [October] 11, 2013, vejjin aytselutyuny [last visited]: Ogositos [August] 6, 2025. (In Armenian)

Тигран Давтян

Студент 2 курса магистратуры юридического факультета
Ширакского Государственного университета

РЕЗЮМЕ

Роль священнослужителя в уголовно-исполнительном учреждении

В статье рассматриваются роль и значение духовенства в пенитенциарных учреждениях, а также дается краткий исторический обзор создания первых тюремных церквей Армянской Церкви и интеграции духовенства в тюремное служение. Работа основана преимущественно на интервью со священнослужителями, служившими в пенитенциарных учреждениях.

Ключевые слова: пенитенциарное учреждение, духовенство, заключённый, духовное служение, преобразование, реинтеграция, нормальная личная и общественная жизнь.

Tigran Davtyan

2nd year master's student at the Faculty
of Law of Shirak State University

SUMMARY

The Role of the Clergyman in a Penal Institution

The article presents the role and importance of clergy in penitentiary institutions, as well as a brief historical overview of the establishment of the first prison churches of the Armenian Church and the integration of clergy into prison service. The work was mainly based on interviews with clergy serving in penitentiary institutions.

Key words: penitentiary institution, clergyman, prisoner, spiritual service, transformation, reintegration, normal personal and social life.

Բնագիրը ներկայացվել է 25.11.2025թ.

Ընդունվել է տպագրության 12.02.26թ.

JUSTICE
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829 1252

